21-ՐԴ ԴԱՐ

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՆԴԵՍ

4 (26)

ԵՐԵՎԱՆ

2009

21-ՐԴ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Լույս է տեսնում 2003 թվականից **4 (26), 2009**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Գագիկ Հարությունյան
(համակարգող)
Մուշեղ Լալայան
Սերգեյ Գրինյան
Սպարտակ Սեյրանյան
Սևակ Սարուխանյան
Տիգրան Սարգսյան

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Գագիկ Հարությունյան
(գլխավոր խմբագիր)
Սևակ Սարուխանյան
(գլխ. խմբագրի տեղակալ)
Էդուարդ Դանիելյան
Լուսինե Բաղրամյան
(պատասխանատու քարտուղար)
Խոնարհիկ Քարաուղլանյան
(պատասխանատու խմբագիր)
Ռուբեն Մելքոնյան
Տիգրան Հարությունյան

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ
Гагик Арутюнян
(координатор)
Тигран Саркисян
Мушег Лалаян
Севак Саруханян
Сергей Гриняев
Спартак Сейранян

РЕДАКЦИЯ
Гагик Арутюнян
(главный редактор)
Севак Саруханян
(заместитель гл. редактора)
Лусине Баграмян
(ответственный секретарь)
Рубен Мелконян
Тигран Арутюнян
Хонарик Караугланян
(ответственный редактор)
Эдуард Даниелян

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կարեն Կարապետյան
Էներգետիկ անվտանգության մակարդակի գնահատման ամփոփ (ինտեգրալային) ցուցանիշը և կանխատեսումները 3

Սևակ Սարուխանյան
«ՆԱԲՈՒԿԿՈ» գազատարը և Հայաստանի Հանրապետությունը 49

Արշակ Սմբատյան, Արտյոմ Տեր-Հարությունյան
Գլոբալացման պայմաններում տնտեսական անվտանգության առանձին տեսական հիմնախնդիրների շուրջ 61

Վարդան Հայկազյան
Հայաստանի Հանրապետության կայուն զարգացման հայեցակարգի ուրվագիծ 75

Վահրամ Միրաքյան
Տպագիր նյութերում օգտագործվող մանիպուլյացիոն ազդեցության հնարքները 95

Հայկ Նազարյան
Չինաստանի ազգային շահերի դրսևորումներն Իրանում 108

Հուշագիր հեղինակին 119

ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓ (ԻՆՏԵԳՐԱԼԱՅԻՆ) ՑՈՒՑԱՆԻՇԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

Կարեն Կարապետյան[1]

Աշխատությունում հիմնական նպատակ է դրվել էներգետիկ անվտանգության մակարդակի գնահատման հիմնախնդրին վերաբերող մի շարք մեթոդաբանական մոտեցումների և մեթոդական բնույթի փաստաթղթերի քննարկումը, ինչպես նաև էներգետիկ անվտանգության գնահատման սկզբունքների դիտարկումը, աշխարհի երկրների, խոշոր տնտեսական միավորումների, Հայաստանի Հանրապետության, տարածաշրջանի մյուս երկրների էներգետիկ անվտանգության մակարդակի գնահատումն ամփոփ (ինտեգրալային) ցուցանիշի միջոցով, այդ ցուցանիշի վերլուծությունը, ինչպես նաև էներգետիկ անվտանգության մակարդակի ամփոփ (ինտեգրալային) ցուցանիշի կանխատեսումները մինչև 2020թ. ընկած ժամանակահատվածում:

Հետազոտությունը և կանխատեսումները կատարվել են էներգետիկայի հատվածը բնութագրող գոյություն ունեցող, միջազգային կազմակերպությունների կողմից հաշվարկվող ցուցանիշների շարքի վերլուծության հիման վրա և մեր կողմից ընտրված մեթոդաբանությամբ: Մենք հեռու ենք այն մտքից, որ սա էներգետիկ անվտանգության մակարդակի գնահատման միակ ճիշտ ուղղությունն է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ էներգետիկ անվտանգությունը կախված է նաև երկրի տնտեսության զարգացումը բնութագրող, ինչպես նաև սոցիալական, բնապահպանական բազմաթիվ գործոններից, որոնց հաշվառումը, սակայն, իրատեսական չէ տվյալ հոդվածի շրջանակներում:

Էներգետիկ անվտանգությունը բազմակողմ, բարդ և բազմաշերտ հասկացություն է: Այդ երևույթի կառավարման գործընթացին վերաբերող առաջին քայլը կապված է դրա գնահատման նույնպես բարդ և դժվարին մոտեցումների հետ: Վերջիններիս ձևավորումն ու դրանց հիման վրա համապատասխան հանձնարարականների ու միջոցառումների մշակումը և կիրառումը, ամենից առաջ, առնչվում են մի շարք մեթոդաբանական դժվարությունների հետ: Խնդիրն այն է, որ ներկայումս թեև տարբեր կազմակերպությունների ու հեղինակավոր միջազգային կառույցների կողմից գնահատվում և օգտագործվում են էներգետիկ ռեսուրսներին վերաբերող տարբեր ցուցանիշներ և դրանց համակարգեր (էներգիայի արտադրությանը, օգտագործմանը, արդյունավետությանն ու այլ հիմնահարցերին վերաբերող), սակայն դրանք չեն կառուցվում կամ էլ չեն կապակցվում էներգետիկ անվտանգության հասկացության հետ: Կամ էլ թույլ է էներգետիկ ռեսուրսների արդյունահանման և օգտագործման ու էներգետիկ անվտանգության միջև եղած կապը:

[1] «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ վարչության նախագահ, գլխավոր տնօրեն, տնտեսագիտության թեկնածու:

1. Տնտեսական երևույթների գնահատման արդի հիմնական մոտեցումները

Տնտեսական երևույթների չափման հիմնախնդիրը գտնվում է տարբեր մասնագետների և, առաջին հերթին, տնտեսագետների ուշադրության կենտրոնում: Ժամանակին համընթաց տնտեսական երևույթների բարդացման հետ մեկտեղ դժվարանում է այդ հիմնախնդրի լուծումը, քանի որ զարգացման ընթացքում բացահայտվում են նոր գործոններ, որոնք իրենց ազդեցությունն են թողնում այս կամ այն երևույթի վրա՝ դրանով իսկ ավելի դժվար չափելի դարձնելով բուն երևույթը: Ասվածից հետևում է նաև, որ անհրաժեշտ է բացահայտել այն հիմնական գործոնները, երևույթի վրա ազդող տասնյակ և հարյուրավոր ազդեցություններից առանձնացնել այն հիմնականները, որոնք էական են ուսումնասիրվող երևույթի համար: Այսինքն՝ նման բնույթի հիմնախնդիրների լուծման պարագայում պետք է հստակ ունենալ երեք հարցի պատասխանները՝ ի՞նչ ենք ցանկանում չափել, ինչպիսի՞ գործոններ են ազդում երևույթի վրա և ինչպե՞ս ենք գնահատելու (բացատրելու) տվյալ տնտեսական երևույթի և դրա վրա ազդող գործոնների միջև եղած կապը: Վերջինս էլ հնարավորություն է տալիս երևույթի կարգավորման կամ կառավարման գործընթացի ճիշտ ձևակերպման, ապա և իրականացման համար:

Թերևս, տեղին է հիշել ռուս մեծ գիտնական Դ.Մենդելեևի խոսքերն այն մասին, որ գիտությունը սկսվում է այնտեղ, որտեղ սկսում են ճիշտ չափել: Ուստի և պատահական չէ, որ հատկապես վերջին 10-15 տարիներին միջազգային հանրությունն օգտագործում է ցուցանիշներ կամ ցուցիչներ (ինդիկատորներ), լայնորեն տարածված և ներկայումս լայն կիրառություն ստացած համաթվեր (ինդեքսներ), ինչպես, օրինակ՝ ազատության, նորարարությունների, մրցունակության, կոռուպցիայի, տնտեսական անվտանգության, գործարար ակտիվության և այլ երևույթների, որոնք, ըստ էության, դրանց վիճակի ու մակարդակի գնահատման մեծություններն են:

Նպատակ ունենալով քանակական չափման ենթարկել որևէ պետության, տարածաշրջանի և աշխարհի պետությունների էներգետիկ անվտանգության մակարդակը՝ հարկ է նշել, որ միջազգային կազմակերպությունների, մասնավորապես Համաշխարհային բանկի, Էլեկտրաէներգիայի միջազգային գործակալության, ՎԶԵԲ կամ մեկ այլ կազմակերպության կողմից դեռևս չի հաշվարկվում էներգետիկ անվտանգության մակարդակը (այն կարող է անվանվել նաև համաթիվ): Մեր համոզմամբ, աշխարհում խորացող էներգետիկ անվտանգության հիմնախնդրի հետ դրա մակարդակի գնահատումը որևէ պետության, տարածաշրջանի երկրների և ամբողջ աշխարհի համար միայն ժամանակի հարց է, և անտարակույս է, որ առաջիկայում նման գնահատումներ ու վարկանիշեր կմշակվեն, առավել ևս, որ էներգետիկ գործոնն ար-

դեն դարձել է զարգացման և ներդրումներ կատարելու վճռորոշ պայմանն ու նախադրյալը: Մեր կողմից նույնպես նման փորձ է կատարվում՝ սահմանել միասնական, լայն, հաճախ օգտագործվող ամփոփ ինտեգրալային (ամբողջական) ցուցանիշ, որն առավել ճշգրտորեն կսահմանի էներգետիկ անվտանգության մակարդակը:

Ներկայումս առանձին կազմակերպությունների կողմից էներգետիկայի բնագավառում գոյություն ունեցող իրավիճակի գնահատման համար օգտագործվում են տարբեր ցուցանիշներ կամ ցուցանիշների համակարգ, վերլուծություն իրականացնող յուրաքանչյուր կազմակերպություն ինքն է ընտրում ցուցանիշների խումբը: Նշենք նաև, որ այդպիսի ուսումնասիրություններում չի դրվում այս կամ այն երկրի էներգետիկ անվտանգության մակարդակը որոշելու, այն հաշվարկելու խնդիր: Օգտագործվող պարամետրերը միայն պատկերացում են տալիս երևույթի այս կամ այն կողմի (դրսևորման) վերաբերյալ, որոնց հիման վրա շատ դժվար է ամբողջական պատկերացում ունենալ տվյալ երևույթի ամբողջական պատկերի մասին և ըստ այդմ էլ կայացնել հեռանկարային որոշումը: Այսպես, ՎԶԵԲ-ի կողմից լայնորեն օգտագործվում է բնակչությանը տրվող էլեկտրականության սակագնի ցուցանիշը, էլեկտրականության վճարի հավաքագրման միջին չափի, օգտագործված էներգիայի յուրաքանչյուր միավորի դիմաց ստացված ՀՆԱ մեծությունը, ենթակառուցվածքների և էլեկտրական էներգետիկայի ոլորտի բարեփոխումների ՎԶԵԲ հատուկ հաշվարկվող համաթիվը, էլեկտրականության ոլորտի կարգավորողների անկախության աստիճանը բնութագրող մեծությունը և տնային տնտեսությունների ընդհանուր ծախսերում էներգիայի և ջրի ծախսերի բաժինը [1, pp. 94-202]: Ասվածից հետևում է, որ ՎԶԵԲ-ի կողմից օգտագործվում են էներգիայի ոլորտին վերաբերող խիստ սահմանափակ թվով ցուցանիշներ, որոնք ամբողջովին չեն արտացոլում իրերի վիճակը ենթակառուցվածքային այդ ասպարեզում և, բացի այդ, չունենալով մեկ ամբողջական ցուցանիշ, շատ դժվար է պատկերացում կազմել երևույթի զարգացման վերաբերյալ: Եվ եթե հավելենք այն հանգամանքը, որ առանձին ցուցանիշներն ունեն զարգացման տարբեր, հաճախ նաև հակադիր ուղղություններ, ապա պատկերը կդառնա ավելի առարկայական:

Համաշխարհային բանկի կողմից նույնպես օգտագործվում է էներգիայի վերաբերյալ ցուցանիշների համակարգ [2]: Այն բաժանվում է երեք խմբի՝

1. էներգիայի արտադրությունը և օգտագործումը բնութագրող,
2. էլեկտրաէներգիայի ստացման աղբյուրները,
3. արդյունավետությունը բնութագրող ցուցանիշները:

Առաջին խումբը ձևավորում են հետևյալ ցուցանիշները.

1.1. Ընդամենը էներգիայի արտադրությունը, որը հաշվարկվում է նավթին համարժեք հազար մետրիկ տոննայով և ընդգրկում է էներգիայի առաջնային բոլոր աղբյուրները՝ նավթը, բնական գազը, պինդ վառելիքի տեսակները (ածուխ, լիգնիտներ և այլ արդյունահանված վառելիք) և այրվող վերականգնվող վառելիքն ու թափոնը, ինչպես նաև արտադրված առաջնային (ելքային) էլեկտրաէներգիան:

1.2. Ընդամենը էներգիայի օգտագործման ցուցանիշը վերաբերում է առաջնային (ելքային) էներգիայի սպառմանը՝ նախքան դրանց վերափոխումը (վերամշակումը) վերջնական օգտագործման համար նախատեսված այլ վառելիքի: Այս ցուցանիշը հավասար է տեղական (ազգային) արտադրությանը՝ գումարած ներմուծվող վառելիքի և պահեստավորված վառելիքի ծավալները և հանած արտահանվող վառելիքի ծավալը և այն վառելիքը, որը մատակարարված է միջազգային փոխադրումներ իրականացնող նավերին ու օդանավերին: Համադրելիությունն ապահովելու նպատակով այն նույնպես հաշվարկվում է նավթին համարժեք հազար մետրիկ տոննայով:

1.3. Էներգիայի օգտագործումը մեկ շնչի հաշվով, որը չափվում է նավթին համարժեք կիլոգրամով:

1.4. «Այրվող, վերականգնվող վառելիք և թափոն» ցուցանիշում միավորված է պինդ կենսազանգվածի, հեղուկ կենսազանգվածի, կենսագազի, արդյունաբերական թափոնների և քաղաքային տնտեսության աշխատանքի արդյունքում առաջացած թափոնների օգտագործման ցուցանիշը: Այն հաշվարկվում է որպես տոկոս էներգիայի ընդհանուր օգտագործման մեջ:

1.5. Զուտ էներգիայի ներմուծման ցուցանիշը գնահատվում է որպես նավթի համարժեքով չափված՝ օգտագործված էներգիայի ծավալից հանած նավթի համարժեքով չափված դրա արտադրությունը: Այս ցուցանիշը հաշվարկվում է օգտագործված էներգիայի նկատմամբ տոկոսով: Աշխարհի մակարդակով զուտ արտահանումների շեղումը զրոյից վիճակագրական սխալների և պահուստներում կատարված փոփոխությունների արդյունք է:

Երկրորդ խումբ ցուցանիշները, ինչպես նշվեց, ներկայացնում են էլեկտրաէներգիայի ստացման աղբյուրները և ներառում են՝

2.1. Էլեկտրաէներգիայի արտադրությունը (մլրդ կվտ/ժամ), որը ներառում է բոլոր տեսակի կայաններում արտադրված էլեկտրաէներգիայի հանրագումարը: Ի լրումն հիդրոկայաններում, ածխի, նավթի, գազի և ատոմային վառելիքով աշխատող կայաններում արտադրվող էներգիայի, այստեղ ներառված է նաև գեոթերմալ, արևային, հողմային և ալիքային կայաններում արտադրվող էլեկտրաէներգիան, ինչպես նաև այրվող վերականգնվող վառելիքի ու թա-

փոնների օգտագործումից ստացվող էլեկտրաէներգիան: Արտադրության ծավալներում հաշվարկված է ինչպես միայն էլեկտրաէներգիայի արտադրության համար նախատեսված կայանների, այնպես էլ ջերմաէլեկտրակայանների արտադրանքը: Էլեկտրաէներգիայի աղբյուր ասելով հասկանում ենք բոլոր այն օգտագործվող հզորությունները, հումքային նյութերը, որոնք օգտագործվում են էլեկտրաէներգիայի ստացման համար՝ ածուխ, գազ, նավթ, հիդրոներուժ և ատոմային ներուժ:

2.2. ՀԷԿ-երում արտադրվող էլեկտրաէներգիայի ցուցանիշը ներկայացնում է բոլոր հիդրոէլեկտրակայաններում արտադրվող էլեկտրաէներգիան, այն հաշվարկվում է որպես տոկոս արտադրված ընդհանուր էլեկտրաէներգիայի մեջ:

2.3. Ածխի օգտագործմամբ արտադրվող էլեկտրաէներգիայի ցուցանիշն ընդգրկում է ածխի բոլոր տեսակների (ածուխ, քարածուխ, լիգնիտներ, այլ հանածո վառելիք, կոքս), ինչպես նաև տորֆի օգտագործմամբ արտադրվող էլեկտրաէներգիան, այն հաշվարկվում է որպես տոկոս արտադրված ընդհանուր էլեկտրաէներգիայի մեջ:

2.4. Նավթի օգտագործմամբ արտադրվող էլեկտրաէներգիայի ցուցանիշն ընդգրկում է ինչպես չմշակված, այնպես էլ վերամշակված նավթի օգտագործմամբ արտադրվող էլեկտրաէներգիան, որը հաշվարկվում է որպես տոկոս արտադրված ընդհանուր էլեկտրաէներգիայի մեջ:

2.5. Գազի օգտագործմամբ արտադրվող էլեկտրաէներգիայի ցուցանիշն ընդգրկում է բնական գազի կիրառմամբ արտադրվող էլեկտրաէներգիան, որը հաշվարկվում է որպես տոկոս արտադրված ընդհանուր էլեկտրաէներգիայի մեջ: Այս ցուցանիշը չի վերաբերում հեղուկ գազին:

2.6. Ատոմային էներգիայի ցուցանիշը վերաբերում է ատոմային կայաններում արտադրված էլեկտրաէներգիային: Այն նույնպես հաշվարկվում է որպես տոկոս արտադրված ընդհանուր էլեկտրաէներգիայի մեջ:

Ցուցանիշների երրորդ խումբն ընդգրկում է.

3.1. Օգտագործված միավոր էներգիային ընկնող ՀՆԱ-ն գնողունակության համարժեքով հաշվարկված ՀՆԱ-ն է մեկ կիլոգրամ նավթին համարժեք օգտագործված էներգիայի դիմաց: Համախառն ներքին արդյունքը վերահաշվարկված է 2000թ. միջազգային դոլարով՝ օգտագործելով գնողունակության համարժեքի դրույքները: Միջազգային դոլարի գնողունակությունն այս ցուցանիշում նույնն է, ինչ և ԱՄՆ դոլարինը ԱՄՆ-ում:

3.2. Էլեկտրաէներգիայի սպառումը չափվում է որպես էլեկտրակայաններում և ջերմաէլեկտրակայաններում արտադրվող էլեկտրաէներգիա՝ հանած փոխադրման, բաշխման և էլեկտրաէներգիայի վերափոխման կորուստ-

ները, ինչպես նաև արտադրող կայաններում օգտագործված էլեկտրաէներգիան: Ներկայացված է մեկ շնչի հաշվով, կվտ/ժամով:

3.3. Տեղափոխման և բաշխման կորուստներն այն կորուստներն են (ներառյալ՝ գողացվող էներգիան), որոնք տեղի են ունենում մատակարարման աղբյուրների և տեղաբաշխման կետերի (այդ թվում՝ բնակչության) միջև: Այս ցուցանիշը չափվում է որպես տոկոս արտադրված էլեկտրաէներգիայի նկատմամբ:

Այստեղից հետևում է, որ մեր կողմից նպատակ է դրվում էներգիայի վերաբերյալ արդեն լայն տարածում ստացած ցուցանիշների այս երեք տարբեր խմբերը «հանրագումարի» բերել և դրա հիման վրա ստանալ էներգետիկ անվտանգության մեծությունը:

Հարկ ենք համարում նաև նշել, որ մեր կողմից մշակվել և համապատասխան փորձագետներին էր բաժանվել (ինչպես հանրապետության ներսում, այնպես էլ դրա սահմաններից դուրս) հարցաթերթիկ, որի կազմման հիմքում դրվել են հետևյալ մոտեցումները.

ա) I–IV բաժնում ընդգրկվել են Համաշխարհային բանկի կողմից օգտագործվող դասակարգումը և ցուցանիշները,

բ) V բաժնում ընդգրկվել են ՎԶԵԲ-ի կողմից օգտագործվող դասակարգումը և ցուցանիշները:

Եթե փորձագետների կարծիքով վերը նշված ա) և բ) կետերում ներառված ցուցանիշները բավարար ձևով չեն բնութագրում երկրի էներգետիկ անվտանգության մակարդակը, նրանց հնարավորություն է տրվել հարցաթերթիկում առաջարկել և հաշվարկել ցուցանիշների նոր բաժին, որը պետք է բնութագրեր երկրի ընդհանուր էներգետիկ ներուժը (այն առաջարկվել է մեր կողմից և ընդգրկում է 12 ցուցանիշ): Փորձագետներին հնարավորություն է տրվել առաջարկել նոր, լրացուցիչ ցուցանիշներ, որոնք բացակայում են նախորդ բաժիններում:

Թեև հարցաթերթը բաժանվեց համապատասխան փորձագետներին (100 մարդու), սակայն նրանք հրաժարվեցին այն լրացնել դրա բարդության և այդ ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության բացակայության պատճառով:

Ամփոփելով և ամբողջացնելով հրապարակի վրա առկա մոտեցումները՝ դրանք կարող ենք դասակարգել հետևյալ խմբերում.

ա) օգտագործվում է ցուցանիշների նեղ կամ լայն համակարգ, առանց ինտեգրալային (կամ ամփոփ) ցուցանիշի հաշվարկման,

բ) օգտագործվում է ցուցանիշների նեղ կամ լայն համակարգ, առանց ինտեգրալային ցուցանիշի հաշվարկման, սակայն այդ ցուցանիշներից մեկն ընդունվում է որպես ինտեգրալային, ամփոփ,

գ) օգտագործվում է ցուցանիշների նեղ կամ լայն համակարգ, և դրանց հիման վրա հաշվարկվում են նոր, առավել ամբողջական ինտեգրալային ցուցանիշը կամ ցուցանիշները:

Էներգետիկ անվտանգության ցուցանիշ(ներ)ի ձևավորումը կարող է իրականացվել 3 ճանապարհով.

ա) գործնականում ձևավորված և հաշվարկվող վիճակագրական տվյալների հիման վրա,

բ) փորձագետների կողմից ձևավորվող և հաշվարկվող տվյալների հիման վրա,

գ) խառը տեղեկատվության հիման վրա, երբ վիճակագրական տվյալների հետ միասին օգտագործվում են փորձագետների կողմից առաջարկվող և հաշվարկվող ցուցանիշները:

Այս մեթոդներից յուրաքանչյուրն ունի դրական և բացասական կողմեր: Այսպես, հատկապես վիճակագրական տվյալների օգտագործման դեպքում, շատ հաճախ, այդ տվյալները, վիճակագրական համադրելիության ապահովման տեսանկյունից, ունեն գործածության երկար ժամանակահատված, դրանք ամենևին էլ անվտանգության հաշվարկման համար չեն նախատեսված կամ էլ քիչ առնչություն ունեն ուսումնասիրվող երևույթի հետ: Փորձագետների կողմից ձևավորվող և հաշվարկվող ցուցանիշների օգտագործման դեպքում առաջանում է այդ ցուցանիշների թվի և դրանց սուբյեկտիվ արժեքավորման հիմնախնդիրը, ինչն էլ խիստ կասկածելի է դարձնում դրանց հիման վրա հաշվարկված մեծությունները, և, բացի այդ, առաջարկվող գործոններին տարբեր գնահատականներ տալն անսահմանափակելի և անհամադրելի է դարձնում նման մոտեցումն ընդհանրապես: Բացի այդ, նաև հարց է ծագում, թե ինչ հարաբերակցություն պետք է ունենան վիճակագրական և փորձագետների կողմից առաջարկվող ցուցանիշների թվերը (ներկայումս, տարբեր մեծությունների հաշվարկման ժամանակ առավել ընդունված և տարածված է 50:50 սկզբունքը, ինչը նույնպես «ինչո՞ւ» հարցին լիարժեք պատասխան չի տալիս):

Ստեղծված վիճակից դուրս գալու ուղին, մեր կարծիքով, գործող վիճակագրական, առավել շատ գնահատման ցուցանիշների օգնությամբ ամփոփ ցուցանիշի ձևավորումն է: Այս պահին խնդրի նման լուծումը մյուսների նկատմամբ ունի այն առավելությունը, որ դրանով ապահովվում է միջերկրային ցուցանիշների համադրելիությունը, ինչն ամփոփ (ինտեգրալային) ցուցանիշի հաշվարկմանն ու գործածությանը ներկայացվող հիմնական պահանջն է:

2. Էներգետիկ անվտանգության մակարդակի գնահատումը երկրների տարբեր խմբավորումների համար

Միջազգային շուկաներում էներգակիրների գների կտրուկ փոփոխությունները, էներգակիրներ արտահանող և ներմուծող երկրների էներգետիկ համակարգերի դիվերսիֆիկացված լինելու հանգամանքը, էներգիայի արտադրության ժամանակ այս կամ այն էներգակրից կախված լինելու փաստը առաջնահերթ են դարձնում էներգետիկ անվտանգության մակարդակը մեկ ցուցանիշի միջոցով գնահատելը: Էներգետիկ անվտանգության մակարդակի գնահատումը ամփոփ (ինտեգրալային) ցուցանիշի օգնությամբ և դրա վերլուծությունը թույլ կտան պատասխանել մի շարք կարևոր հարցերի, ինչպիսիք են. արդյո՞ք կարելի է էներգետիկ ռեսուրսներով հարուստ երկրները համարել էներգետիկ առումով անվտանգ, հատկապես զարգացման երկարաժամկետ հեռանկարում, որո՞նք են էներգետիկ անվտանգության բաղկացուցիչները, ինչպիսի՞ն է երկարատև ժամանակահատվածում դրանց փոփոխությունների դինամիկան, ինչպիսի՞ դրսևորումներ և առանձնահատկություններ ունի էներգետիկ անվտանգությունը երկրների առանձին, այդ թվում՝ տարածաշրջանային միավորումներում, ի՞նչ պետք է արվի առաջիկայում էներգետիկ անվտանգության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ և որո՞նք են այդ մակարդակին հասնելու ամենաարդյունավետ ուղիները:

Էներգետիկ անվտանգության մակարդակի գնահատումը և վերլուծությունը թույլ կտան նաև յուրաքանչյուր պետության, տարածաշրջանային միավորի համար համակողմանիորեն գնահատել և բացահայտել այն հիմնական գործոնները և դրանց ազդեցությունները, որոնք պայմանավորում են տվյալ պետության կամ տարածաշրջանային միավորի էներգետիկ անվտանգությունը:

Մեր կողմից հաշվարկվել է էներգետիկ անվտանգության մակարդակը (այսուհետ՝ ԷԱՄ) աշխարհի 124 երկրների համար՝ ելնելով 14 հիմնական գործոններից [2, pp. 156-162]: Այդ գործոններն են՝ 1) օգտագործված միավոր էներգիային ընկնող ՀՆԱ-ն, 2) էլեկտրաէներգիայի սպառումը մեկ շնչի հաշվով, 3) էներգիայի տեղափոխման և բաշխման կորուստները, 4) ընդամենը էներգիայի արտադրությունը, 5) ընդամենը էներգիայի օգտագործումը, 6) այրվող, վերականգնվող վառելիքը և թափոնը, 7) էներգիայի օգտագործումը մեկ շնչի հաշվով, 8) զուտ էներգիայի ներմուծումը, 9) էլեկտրաէներգիայի արտադրությունը, 10) ՀԷԿ-երում արտադրվող էլեկտրաէներգիան, 11) ածխից արտադրվող էլեկտրաէներգիան, 12) նավթից արտադրվող էլեկտրաէներգիան, 13) գազից արտադրվող էլեկտրաէներգիան և 14) ատոմակայաններում արտադրվող էլեկտրաէներգիան:

Վերը թվարկված գործոնների կազմում բացակայում է էներգակիրների ներմուծման աղբյուրների դիվերսիֆիկացման աստիճանը բնութագրող ցուցա-

նիշը, ինչը, մեր կարծիքով, ներկայիս համաշխարհային զարգացումների հիմնական թիրախներից է, և այս գործոնի հաշվառումը նույնպես կարևոր նշանակություն ունի երկրի էներգետիկ անվտանգության և անկախության մակարդակը բնորոշելու գործում: Մատչելի տեղեկատվական աղբյուրներում, սակայն, բացակայում է աշխարհի բոլոր երկրների համար հաշվարկված այս ցուցանիշը:

Հաշվարկման մեթոդը հիմնված է գծային թրենդի բացահայտման վրա: Յուրաքանչյուր գործոնի համար հաշվարկվել է գծային թրենդը նվազագույն քառակուսիների մեթոդով [3, стр. 792-825, 4, стр. 59-75, 5, p. 260-275]: Առաջին քայլով դիտարկվող 14 գործոններից յուրաքանչյուրի համար հաշվարկվել է ռեգրեսիոն մոդել՝ նվազագույն քառակուսիների մեթոդով: Նվազագույն քառակուսիների մեթոդի օգնությամբ լուծվում է օպտիմիզացիոն խնդիր, այն է՝ ստանալ անկախ և կախյալ փոփոխականների այնպիսի արժեքներ, որոնց միջոցով հաշվարկվող գործոնները շատ շեղված չլինեն փաստացի ցուցանիշներից: Այլ կերպ ասած՝ վերը նշված մեթոդի օգնությամբ ստացված արժեքները վիճակագրորեն նշանակալից արժեքներ են, որոնց ստանդարտ շեղումները փոքր են, իսկ հավանականության բաշխումները՝ համաչափ: Մեթոդի օգնությամբ ստացված ցուցանիշները համարվում են արդյունավետ տվյալ ցուցանիշների ընտրանքի համար, քանի որ բացառում են նրանց միջև կտրուկ տատանումները, այլ կերպ ասած՝ հարթեցնում են փաստացի ցուցանիշները՝ զերծ մնալով ցուցանիշների միջև առկա կեղծ ու վիճակագրորեն ոչ նշանակալից կապերից, որոնք էականորեն ազդում են ցուցանիշների արժեքների վրա:

Մոդելն ունի հետևյալ տեսքը՝ $Y = A (X + B)$, որտեղ՝

X-ը՝ յուրաքանչյուր երկրին վերագրված ծածկագիրը (կոդն) է (1, 2, 3 … 124),

Y-ը՝ յուրաքանչյուր երկրին համապատասխանող ցուցանիշն է,

A-ն՝ կախյալ փոփոխական է,

B-ն՝ անկախ փոփոխականն է:

Հաշվարկների արդյունքում ստացվում են հաշվարկային արդյունավետ ցուցանիշները: Համեմատելով հաշվարկային և փաստացի արժեքները՝ յուրաքանչյուր գործոնի համար տրվում են կշռային գործակիցներ 0 կամ 1: Այսինքն, եթե $Y_{փ} > Y_{հ}$, ապա k_i-ին վերագրվում է 1 արժեքը, հակառակ դեպքում՝ 0 արժեքը, որտեղ $Y_{փ}$-ն՝ դիտարկվող գործոնի փաստացի արժեքն է, իսկ $Y_{հ}$-ն՝ հաշվարկային արժեքն է, k_i-ն՝ i-րդ ծածկագրին (կոդին) համապատասխանող երկրի կշռային գործակիցն է:

Համապատասխան հաշվարկներն իրականացնելով վերը նշված 14 գործոնների համար՝ յուրաքանչյուր երկրի պարագայում ստանում ենք համապատասխան կշռային գործակիցները: ԷԱՄ-ը յուրաքանչյուր երկրի համար հաշվարկվում է՝ ելնելով յուրաքանչյուր երկրի համար հաշվարկված կշռային գործակիցներից: Բանաձևն ունի հետևյալ տեսքը.

$$\text{ԷԱՄ} = \frac{\sum_{i=1}^{n} K_i}{n}$$, որտեղ

K_i-ն՝ տվյալ պետության համար հաշվարկված կշռային գործակիցներն են 14 գործոններից յուրաքանչյուրի համար,

n-ը գործոնների թիվն է, որը մեր դեպքում հավասար է 14-ի:

ԷԱՄ-ի առավելագույն արժեքը 1-ն է: Դա այն դեպքն է, երբ 14 գործոններից յուրաքանչյուրի կշիռը մեկ է, իսկ նվազագույնը՝ 0: Սա իդեալական դեպքի համար է: Սակայն մեր կողմից աշխարհի երկրների ԷԱՄ-ի գնահատման համար կատարված հաշվարկներում ամենամեծ ցուցանիշը հավասար է 0,642857143-ի, ուստի վերլուծության համար սահմանել ենք անվտանգության հետևյալ միջակայքերը. երկիրը համարվում է էներգետիկ առումով անվտանգ, եթե ԷԱՄ-ը գտնվում է 0,5-0,75 միջակայքում, միջին անվտանգությունն ապահովվում է, եթե այդ գործակիցը 0,25-0,5 միջակայքում է, իսկ վտանգավոր, եթե այն գտնվում է 0,01-0,25 միջակայքում: Այսպիսի միջակայքերի ընտրությունը թույլ է տալիս նաև առավել ճշգրտություն ապահովել:

Վերոնշյալ մեթոդի օգնությամբ հնարավոր է բացահայտել հաշվարկային արդյունավետ կորից վերև գտնվող արդյունքները և դրա հիման վրա գնահատել ԷԱՄ-ը: Այլ կերպ ասած՝ ԷԱՄ-ը ներառում է արդյունավետ կամ արդյունավետության նվազագույն ցուցանիշից բարձր գտնվող արժեքները:

Աշխարհի 124 երկրները մեր կողմից խմբավորված են ըստ էներգետիկ անվտանգության մակարդակների: Ընդ որում, էներգետիկ անվտանգ երկրները (առաջին խումբ) ընդգրկված են այդ մեծության 0,5-0,75 միջակայքում, անվտանգության միջին մակարդակ ունեցող երկրները (երկրորդ խումբ) ընդգրկված են 0,25-0,5 միջակայքում, իսկ վտանգավոր գոտում գտնվող երկրները (երրորդ խումբ)՝ 0,01-0,25 միջակայքում: Կատարված ուսումնասիրության համաձայն՝ առաջին խմբում ընդգրկված են 21 երկիր, ըստ որում՝ դրանցից 7-ի ԷԱՄ մեծությունը կազմում է 0,583333333, իսկ 14-ինը՝ 0,5, խմբի ԷԱՄ միջին մեծությունը՝ 0,527777778[1]: Երկրորդ խմբում ընդգրկված են 84 պետություն, ըստ որում՝ 23 պետության ԷԱՄ մեծությունը կազմում է 0,416666667, 35 պետությանը՝ 0,333333333, 26-ինը՝ 0,25, խմբի ԷԱՄ միջին մեծությունը՝ 0,330357143: Երրորդ խմբում ընդգրկված են 19 պետություն, ըստ որում՝ 16 պետության ԷԱՄ մեծությունը կազմում է 0,166666667, իսկ 3-ինը՝ 0,083333333, խմբի միջինը՝ 0,153508772:

[1] Այս և հետագա հաշվարկներն իրականացվել են հեղինակի կողմից *Eviews* ծրագրային փաթեթի կիրառմամբ՝ *World Development Indicators 2008, World Bank,* էջ 156-162-ի տվյալների հիման վրա:

1990թ. համար ըստ ԷԱՄ-ի էներգետիկ առումով անվտանգ երկրները 21-ն են եղել. Բրազիլիա, Ֆրանսիա, Հնդկաստան, Իտալիա, Ճապոնիա, Իսպանիա, Միացյալ Թագավորություն, Արգենտինա, Ավստրալիա, Բելգիա, Կանադա, Չինաստան, Խորվաթիա, Գերմանիա, Իսրայել, Կորեայի Հանրապետություն, Մեքսիկա, Լեհաստան, Հարավաֆրիկյան Հանրապետություն, Ուկրաինա և ԱՄՆ, ինչը կազմում է դիտարկվող երկրների թվի ընդամենը 17%-ը: Նշված ժամանակահատվածում էներգետիկ անվտանգության մակարդակի միջին մեծությունը աշխարհի 124 երկրների համար կազմել է 0,34, ինչը նշանակում է, որ աշխարհը էներգետիկ անվտանգության առումով ունի միջին անվտանգություն:

Մեր կողմից հաշվարկվել են նաև աշխարհի 124 երկրների ԷԱՄ մեծությունները 2005թ. համար: Անվտանգ խմբում ընդգրկված են 12 պետություն, ըստ որում՝ դրանցից մեկի ԷԱՄ մեծությունը կազմում է 0,642857143, 4-ինը՝ 0,571428571, 7-ինը՝ 0,5, իսկ խմբի միջինը՝ 0,535714286: Երկրորդ խմբում ընդգրկված են 75 պետություն, ընդ որում՝ 40 պետության ԷԱՄ մեծությունը կազմում է 0,214285714, 8-ինը՝ 0,142857143, մեկինը՝ 0,071428571, խմբի միջինը՝ 0,194980695:

2005թ. համար հաշվարկված տվյալներից երևում է, որ ԷԱՄ-ով ամենաանվտանգ երկրները 12-ն են եղել. Միացյալ Թագավորություն, Բրազիլիա, Ֆրանսիա, Գերմանիա, ԱՄՆ, Արգենտինա, Հնդկաստան, Իտալիա, Ճապոնիա, Հարավային Կորեա, Մեքսիկա և Սաուդյան Արաբիա, ինչը կազմում է դիտարկվող երկրների թվի ընդամենը 9,67%-ը: Ակնհայտ երևում է, որ էներգետիկ առումով անվտանգ երկրների տեսակարար կշիռը աշխարհի 124 երկրների մեջ 15 տարվա ընթացքում նվազել է 57,1%-ով: Նվազել է նաև աշխարհի 124 երկրների ԷԱՄ-ը՝ 2005թ. կազմելով 0,31: Ըստ նշված ցուցանիշի՝ աշխարհը մնում է էներգետիկ անվտանգության առումով միջին անվտանգության աստիճանում: Սակայն պետք է նշել, որ ինչպես 1990թ., այնպես էլ 2005թ. դիտարկվող 124 երկրների մեջ ամենամեծ ԷԱՄ-ն ունեցել է Միացյալ Թագավորությունը, որը կազմել է 0,64, իսկ ամենափոքր ցուցանիշը 2005թ. ունեցել է Ուզբեկստանը՝ 0,07: Ի դեպ, 1990թ. Հայաստանի Հանրապետությունը աշխարհի 124 երկրների շարքում 0,25 միավորով կիսում էր 80-105-րդ տեղերը, իսկ 2005թ.՝ 0,2857 միավորով արդեն զբաղեցնում էր 53-55-րդ տեղերը: Բերված տվյալներից ակնհայտ է դառնում, որ հանրապետության էներգետիկ անվտանգությունն էապես բարելավվել է ոչ միայն տարածաշրջանում, այլ նաև աշխարհի մյուս երկրների էներգետիկ անվտանգության համայնապատկերում:

Ուսումնասիրվող հիմնահարցի վերաբերյալ ընդհանուր օրինաչափությունների բացահայտման և եզրակացություններ անելու համար կազմենք *Աղյուսակ 1-ը:*

Աղյուսակ 1

*ԷԱՄ դինամիկան ըստ աշխարհի երկրների առանձին խմբերի և ենթախմբերի 1990-2005թթ. **

Հ/հ	Երկրների խմբերը	1990		2003		2004		2005	
		երկրների թիվը, %-ով ընդհանուր թվի նկատմամբ	ԷԱՄ մեծությունը	երկրների թիվը, %-ով ընդհանուր թվի նկատմամբ	ԷԱՄ մեծությունը	երկրների թիվը, %-ով ընդհանուր թվի նկատմամբ	ԷԱՄ մեծությունը	երկրների թիվը, %-ով ընդհանուր թվի նկատմամբ	ԷԱՄ մեծությունը
1	Անվտանգ երկրներ, այդ թվում՝ ըստ ենթախմբերի	21 / 17,0	0,527	14 / 11,5	0,541	12 / 9,7	0,546	12 / 9,7	0,536
	I	7 / 5,7	0,583	2 / 1,6	0,643	1 / 0,8	0,643	1 / 0,8	0,643
	II	14 / 11,3	0,5	4 / 3,3	0,571	5 / 4,0	0,571	4 / 3,2	0,571
	III	-	-	8 / 6,6	0,5	6 / 4,8	0,5	7 / 5,6	0,5
2	Միջին անվտանգություն ունեցող երկրներ, այդ թվում՝ ըստ ենթախմբերի	84 / 67,7	0,330	69 / 56,6	0,342	72 / 58,0	0,342	75 / 60,5	0,337
	I	23 / 18,5	0,416	16 / 13,1	0,428	13 / 10,5	0,428	40 / 32,3	0,357
	II	35 / 28,2	0,333	22 / 18,0	0,357	27 / 21,8	0,357	35 / 28,2	0,286
	III	26 / 21,0	0,25	31 / 25,4	0,286	32 / 25,8	0,286	-	-
3	Վտանգավոր խմբում գտնվող երկրներ, այդ թվում՝ ըստ ենթախմբերի	19 / 15,3	0,153	39 / 32,0	0,181	40 / 32,3	0,193	37 / 29,8	0,195
	I	16 / 12,9	0,166	27 / 22,1	0,214	30 / 24,2	0,214	28 / 22,6	0,214
	II	3 / 2,4	0,083	11 / 9,0	0,149	8 / 6,5	0,143	8 / 6,4	0,143
	III	-	-	1 / 0,8	0,071	2 / 1,6	0,071	1 / 0,8	0,071
	«Անվտանգ» խմբի հարաբերությունը «Վտանգավոր» խմբին, անգամ	**-**	**3,438**	**-**	**2,985**	**-**	**2,809**	**-**	**2,747**
	Աշխարհի միջինը	**124 / 100,0**	**0,337**	**122 / 100,0**	**0,311**	**124 / 100,0**	**0,311**	**124 / 100,0**	**0,314**

** Աղյուսակը հաշվարկված է World Development Indicators 2006, World Development Indicators 2007 և World Development Indicators 2008 տվյալների հիման վրա:*

Աղյուսակ 1-ի տվյալներից հետևում է, որ 1990-2005թթ. աշխարհի 124 երկրների ԷԱՄ-ը 2005թ. 1990թ. համեմատ նվազել է 6,8 տոկոսային կետով և կազմել 92,3%, այսինքն՝ աշխարհի էներգետիկ անվտանգությունը վատացել է՝ յուրաքանչյուր տարի մոտ 0,5 տոկոսային կետով: Ընդ որում, եթե 1990թ. անվտանգ երկրների խմբում գտնվում էր 21 երկիր (պայմանական աշխարհի երկրների թվի 17,0%-ը), ապա միջին անվտանգությամբ խմբի մեջ մտնող երկրների թիվը եղել է 84 (երկրների ընդհանուր թվի 67,7%-ը), վտանգավոր խմբում գտնվել է 19 երկիր (15,3%): Այդ ցուցանիշները 2005թ. կազմել են համապատասխանաբար՝ 12 (9,7%), 75 (60,5%) և 37 (29,8%): Ակնհայտ է, որ 2005թ. 1990թ. համեմատ ԷԱՄ ցուցանիշները պետությունների մեծ մասում վատացել են: Այսինքն՝ նվազել է ոչ միայն անվտանգ պետությունների (21-ից դարձել է 12), այլև միջին անվտանգության խմբում գտնվող երկրների թիվը (84-ից դարձել է 75) և ավելացել է (շուրջ երկու անգամ) վտանգավոր խմբում գտնվող պետությունների թիվը (19-ից հասել է 37-ի):

Աղյուսակ 2

Աշխարհի էներգետիկ ամենաանվտանգ 10 երկրները 1990 և 2005թթ.

Երկրի տեղը	1990թ.		2005թ.	
	Երկիրը	ԷԱՄ	Երկիրը	ԷԱՄ
1	Բրազիլիա	0.583	Միացյալ Թագավորություն	0.643
2	Ֆրանսիա	0.583	Բրազիլիա	0.571
3	Հնդկաստան	0.583	Ֆրանսիա	0.571
4	Իտալիա	0.583	Գերմանիա	0.571
5	Ճապոնիա	0.583	Միացյալ Նահանգներ	0.571
6	Իսպանիա	0.583	Արգենտինա	0.5
7	Միացյալ Թագավորություն	0.583	Հնդկաստան	0.5
8	Արգենտինա	0.5	Իտալիա	0.5
9	Ավստրալիա	0.5	Ճապոնիա	0.5
10	Բելգիա	0.5	Կորեայի Հանրապետություն	0.5

Աղյուսակներ 2 և 3-ում բերված են աշխարհի էներգետիկ ամենաանվտանգ և ամենավտանգավոր 10 երկրների ցուցանիշները 1990 և 2005թթ.: Եթե համեմատելու լինենք աշխարհի ամենաանվտանգ երկրների 1990թ. ցանկը 2005թ. ցանկի հետ, ապա կտեսնենք, որ ինչպես 1990թ., այնպես էլ 2005թ. էներ-

գետիկ ամենաանվտանգ երկրներն են եղել Բրազիլիան, Ֆրանսիան, Իտալիան, Ճապոնիան, Միացյալ Թագավորությունը և Արգենտինան: Իսպանիային, Ավստրալիային և Բելգիային 2005թ. լավագույն տասնյակում փոխարինել են Գերմանիան, Ամերիկայի Միացյալ Նահանգները և Կորեայի Հանրապետությունը: Աշխարհի էներգետիկ ամենավտանգավոր երկրներից 1990թ. ցանկից 2005թ. ցանկ են «տեղափոխվել» 4-ը՝ Սերբիան և Չեռնոգորիան, Թուրքմենստանը, Ուզբեկստանը և Մալայզիան: Հետաքրքիր է նշել, որ 2005թ. ամենավտանգավոր 10 երկրների ցանկում հայտնվել են նավթի ու գազի պաշարներով հարուստ այնպիսի երկրներ, ինչպիսիք են Ադրբեջանը և Իրաքը:

Աղյուսակ 3

Աշխարհի էներգետիկ ամենավտանգավոր երկրները 1990 և 2005թթ.

Երկրի տեղը	1990թ.		2005թ.	
	Երկիրը	ԷԱՄ	Երկիրը	ԷԱՄ
1	Օման	0.167	Զամբիա	0.214
2	Սերբիա և Չեռնոգորիա	0.167	Ալժիր	0.143
3	Տաջիկստան	0.167	Ադրբեջան	0.143
4	Թրինիդադ և Թոբագո	0.167	Իրաք	0.143
5	Թուրքմենստան	0.167	Յամայկա	0.143
6	Ուզբեկստան	0.167	Մալայզիա	0.143
7	Վենեսուելա	0.167	Սերբիա և Չեռնոգորիա	0.143
8	Մալայզիա	0.083	Թաիլանդ	0.143
9	Սիրիա	0.083	Թուրքմենստան	0.143
10	Եմեն	0.083	Ուզբեկստան	0.071

Աղյուսակներ 4-5-ում ներկայացված են աշխարհի էներգետիկ ամենաանվտանգ և ամենավտանգավոր 10 երկրների ԷԱՄ-երի վրա ազդող գործոնների մեծությունները 1990 և 2005թթ.: Այսպես, եթե 1990թ. Բրազիլիայի (ցանկում զբաղեցրել է առաջին տեղը) ԷԱՄ-ի վրա դրականորեն են ազդել 7 գործոն (երկու գործոնների համար տվյալները բացակայել են), ապա 2005թ. այդ երկրի (ցանկում զբաղեցրել է երկրորդ տեղը) ԷԱՄ-ի վրա դրականորեն ազդել են 8 գործոն: *Աղյուսակներ 4-5-ում* բերված տվյալների միջոցով հնարավոր է պարզել, թե ինչպես է ձևավորվում այս կամ այն երկրում ԷԱՄ-ի մակարդակը 14 գործոնների ազդեցության ներքո:

Աղյուսակ 4

Աշխարհի միջազգային անվտանգության կազմակերպությունների 1990թ. դրությամբ վերջին տարվա ընթացքում 10 երկրների պաշտպանական ոլորտում ներդրումների կիրառման մի քանի ցուցանիշներ

Երկիրը	Ընտրյալ էներգիա	Գազ	Նավթ	Ածուխ	Էլեկտրաէներգիայի արտադրություն ըստ աղբյուրների, %-ով	Էներգիայի սպառման ինտենսիվություն, %-ով	Էներգիայի սպառման ինտենսիվությունը 10 տարվա ընթացքում	Էներգիայի ներմուծում, %-ով	Էներգիայի արտադրություն շնչի հաշվով, կգ նավթի դիմաց	Էներգիայի սպառման ինտենսիվությունը 10 տարվա ընթացքում	Էներգիայի արտադրության ինտենսիվությունը 10 տարվա ընթացքում	Էներգիայի ներմուծման ինտենսիվությունը 10 տարվա ընթացքում	Օգտագործելով էներգիայի խնայողության միջոցառումներ և էներգիայի վերականգնվող աղբյուրներ
Բրազիլիա	0	0	0	1	ս.չ.	ս.չ.	1	1	ս.չ.	0	0	0	1
Ֆրանսիա	1	0	0	0	ս.չ.	ս.չ.	1	1	ս.չ.	0	0	0	1
Գերմանիա	1	0	0	0	ս.չ.	ս.չ.	1	1	ս.չ.	0	0	0	1
Հունաստան	0	0	1	0	ս.չ.	ս.չ.	1	1	ս.չ.	0	0	0	1
Հնդկաստան	1	0	0	0	ս.չ.	ս.չ.	0	0	ս.չ.	0	0	0	1
Իտալիա	1	0	0	0	ս.չ.	ս.չ.	1	1	ս.չ.	0	0	0	1
Չինաստան	1	0	0	0	ս.չ.	ս.չ.	1	1	ս.չ.	0	0	0	1
Կանադա	1	0	0	0	ս.չ.	ս.չ.	1	1	ս.չ.	0	0	0	1
Ճապոնիա	1	0	0	0	ս.չ.	ս.չ.	1	1	ս.չ.	0	0	0	1
Միացյալ Թագավորություն	1	0	0	0	ս.չ.	ս.չ.	1	1	ս.չ.	0	0	0	1
Սերբիա	0	0	0	0	ս.չ.	ս.չ.	0	0	ս.չ.	0	0	0	0
Ամերիկյան Միացյալ Նահանգներ	0	0	0	0	ս.չ.	ս.չ.	0	0	ս.չ.	0	0	0	0
Թուրքիա	0	0	0	0	ս.չ.	ս.չ.	0	0	ս.չ.	0	0	0	0
Ուզբեկիստան	0	0	0	0	ս.չ.	ս.չ.	0	0	ս.չ.	0	0	0	0
Վենեսուելա	0	0	1	0	ս.չ.	ս.չ.	1	0	ս.չ.	0	0	0	0
Սամոան	0	0	0	0	ս.չ.	ս.չ.	0	0	ս.չ.	0	0	0	0
Սիրիան	0	0	0	0	ս.չ.	ս.չ.	0	0	ս.չ.	0	0	0	0
Եմեն	0	0	1	0	ս.չ.	ս.չ.	0	0	ս.չ.	0	0	0	0

Աղյուսակ 5

Աշխարհի էներգետիկ ամենաանվտանգ և ամենավտանգավոր 10 երկրների էներգետիկ անվտանգության վակտորների վրա ազդող գործոնների արժեքների մեծությունը 2005թ.

Երկիրը	Օգտագործված միավոր էներգիային ընկնող ՀՆԱ-ն, հաշվարկված է 2000թ. ԱՄՆ դոլարով՝ հաշվի առած PPP-ն (կգ նավթին համարժեք)	Էլեկտրաէներգիայի սպառումը մեկ շնչի հաշվով, կվտ/ժամ	Տեղափոխման և բաշխման կորուստները, %-ով արտադրանքի նկատմամբ	Ընդամենը էներգիայի արտադրությունը (նավթին համարժեք հազար մետրիկ տոննա)	Ընդամենը էներգիայի օգտագործումը (նավթին համարժեք հազար մետրիկ տոննա)	Այրվող, վերականգնվող վառելիք և թափոն, %-ով ընդհանուր սպառման մեջ	Էներգիայի օգտագործումը մեկ շնչի հաշվով, կգ նավթին համարժեք	Զուտ էներգիայի ներմուծում, %-ով օգտագործված էներգիայի նկատմամբ	Էլեկտրաէներգիայի արտադրություն, մլրդ կվտ/ժամ, որից, %-ով ընդհանուրի նկատմամբ	այդ թվում՝ ՀԷԿ-երում արտադրվող	Ածխից	Նավթից	Գազից	Ատոմային էներգիա
10 ամենաանվտանգ երկրները														
Միացյալ Թագավորություն	1	1	0	1	1	0	1	1	1	0	1	0	1	0
Բրազիլիա	1	0	1	1	1	1	0	1	1	1	0	0	0	0
Ֆրանսիա	1	1	0	1	1	0	1	1	1	0	0	0	0	1
Գերմանիա	1	1	0	1	1	0	1	1	1	0	0	0	0	0
Միացյալ Նահանգներ	1	1	0	1	1	0	1	1	1	0	1	0	0	0
Արգենտինա	1	0	1	1	1	0	0	1	1	0	0	0	1	0
Հնդկաստան	0	0	1	1	1	1	0	1	1	0	1	0	0	0
Իտալիա	1	1	0	0	1	0	1	1	1	0	0	0	1	0
Հապոնիա	1	1	0	1	1	0	1	1	1	0	0	0	0	0
Կորեայի Հանրապետություն	0	1	0	0	1	0	1	1	1	0	1	0	0	1
10 ամենավտանգավոր երկրները														
Զամբիա	0	0	0	0	0	1	0	1	0	1	0	0	0	0
Այտիի	0	0	0	1	0	0	0	0	0	0	0	0	1	0
Ադրբեջան	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	1	1	0
Իրաք	0	0	0	1	0	0	0	0	0	0	0	1	0	0
Ցամայկա	0	0	0	0	0	0	0	1	0	0	0	1	0	0
Մալայզիա	0	0	0	0	0	0	1	0	0	0	0	0	1	0
Սերբիա և Չեռնոգորիա	0	0	0	0	0	0	0	1	0	0	1	0	0	0
Թաիլանդ	0	0	0	0	0	0	0	1	0	0	0	0	1	0
Թուրքմենստան	0	0	0	0	0	0	1	0	0	0	0	0	1	0
Ուզբեկստան	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	1	0

Վերլուծենք առանձին խումբ երկրների ԷԱՄ-ը: Վերլուծությունը սկսենք Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (այսուհետ՝ ՏՀԶԿ) երկրներից (տե՛ս *Աղյուսակ 6*):

Աղյուսակ 6

Էներգետիկ անվտանգության մակարդակը ՏՀԶԿ երկրներում 1990 և 2005թթ.

Երկիրը	1990թ.	2005թ.
Ավստրալիա	0,5	0,429
Ավստրիա	0,417	0,357
Բելգիա	0,417	0,286
Կանադա	0,5	0,429
Դանիա	0,333	0,286
Ֆինլանդիա	0,25	0,286
Ֆրանսիա	0,583	0,571
Գերմանիա	0,5	0,571
Հունաստան	0,333	0,357
Իռլանդիա	0,417	0,357
Իտալիա	0,583	0,5
Ճապոնիա	0,583	0,5
Մեքսիկա	0,5	0,5
Նիդեռլանդներ	0,417	0,357
Նոր Զելանդիա	0,25	0,357
Նորվեգիա	0,417	0,357
Պորտուգալիա	0,333	0,357
Իսպանիա	0,583	0,429
Շվեդիա	0,417	0,429
Շվեյցարիա	0,417	0,429
Միացյալ Թագավորություն	0,583	0,643
Միացյալ Նահանգներ	0,5	0,571
Միջինը	**0,447**	**0,425**
Աշխարհի միջինը	**0,337**	**0,314**

Ինչպես երևում է *Գծապատկեր 1-ից*, ՏՀԶԿ երկրներից ԷԱՄ-ով 1990թ. ամենաանվտանգ երկրներն են համարվել Ավստրալիան, Ֆրանսիան, Կանադան, Գերմանիան, Մեքսիկան, Ճապոնիան, ԱՄՆ-ը, Միացյալ Թագավորությունը, Իտալիան, Իսպանիան, իսկ վտանգավոր խմբում են գտնվել Ֆինլանդիան և Նոր Զելանդիան: Էներգետիկ անվտանգության առումով անվտանգ երկրների մասնաբաժինը ՏՀԶԿ երկրների ընդհանուր թվի մեջ կազմում է 45,4%, իսկ էներգետիկ անվտանգության առումով վտանգավոր երկրների մասնաբաժինը՝ 9,1%:

ՏՀԶԿ երկրների համար 1990թ. միջին ԷԱՄ-ը կազմել է շուրջ 0,45, ինչը նշանակում է, որ ՏՀԶԿ երկրները միասին վերցրած ըստ ԷԱՄ-ի ունեն միջին անվտանգության աստիճան:

Գծապատկեր 1

Էներգետիկ անվտանգության մակարդակը ՏՀԶԿ երկրներում 1990թ.



Այժմ բնութագրենք ԷԱՄ ձևավորող 14 գործոնների դերը, որոնք նշանակալից են եղել ՏՀԶԿ երկրների համար: Դրանք են՝ օգտագործված միավոր էներգիային ընկնող ՀՆԱ-ն, էլեկտրաէներգիայի սպառումը մեկ շնչի հաշվով, տեղափոխման և բաշխման կորուստները, ընդամենը էներգիայի արտադրությունը, ընդամենը էներգիայի օգտագործումը, էլեկտրաէներգիայի արտադրությունը, նավթից արտադրվող էլեկտրաէներգիան:

Ինչպես երևում է *Գծապատկեր 2-ից,* ըստ ԷԱՄ-ի 2005թ. ՏՀԶԿ երկրներից ամենաանվտանգ երկրներն են Ֆրանսիան, Գերմանիան, Մեքսիկան, Ճապոնիան, ԱՄՆ-ը, Միացյալ Թագավորությունը, Իտալիան: Էներգետիկ անվտանգության առումով անվտանգ երկրների մասնաբաժինը ՏՀԶԿ երկրների ընդհանուր թվի մեջ նվազել է 1990թ. նկատմամբ և կազմել 31,8%, իսկ էներգետիկ անվտանգության առումով վտանգավոր երկրների մասնաբաժինը նվազել է՝ կազմելով 0%:

ՏՀԶԿ երկրներում միջին ԷԱՄ-ը նվազել է 1990թ. նկատմամբ և կազմել 0,43, ինչը նշանակում է, որ ՏՀԶԿ երկրները միասին վերցրած միջին անվտանգ են ըստ ԷԱՄ-ի: Երկրների այս խմբի ԷԱՄ-ը ձևավորող 14 գործոններից նշա-

նակալից են եղել՝ միավոր էներգիային ընկնող ՀՆԱ-ն, էլեկտրաէներգիայի սպառումը մեկ շնչի հաշվով, ընդամենը էներգիայի արտադրությունը, ընդամենը էներգիայի օգտագործումը, գազից արտադրվող էլեկտրաէներգիան, ածխից արտադրվող էլեկտրաէներգիան, էներգիայի օգտագործումը մեկ շնչի հաշվով, զուտ էներգիայի ներմուծումը, էլեկտրաէներգիայի արտադրությունը:

Գծապատկեր 2

Էներգետիկ անվտանգության մակարդակը ՏՀԶԿ երկրներում 2005թ.



Պետք է նշել նաև, որ ՏՀԶԿ երկրների շարքում էներգետիկ անվտանգության առումով անվտանգ են այն երկրները, որոնք հարուստ չեն էներգառեսուրսներով:

Աղյուսակ 7-ի տվյալներից հետևում է, որ Եվրամիության երկրների ԷԱՄ միջին մեծությունը ինչպես 1990թ., այնպես էլ 2005թ. ավելի մեծ արժեք է ունեցել, քան ամբողջ աշխարհի համար հաշվարկված միջին մեծությունը: Հատկանշական է նաև այն, որ Եվրամիության երկրների ԷԱՄ-ը 2005թ. 1990թ. համեմատությամբ նվազել է: Եթե 1990թ. Եվրամիության երկրներից էներգետիկ անվտանգության ամենաբարձր մակարդակ (0,583333) ունեցել են Ֆրանսիան, Իտալիան, Իսպանիան և Միացյալ Թագավորությունը, ապա 2005թ. ԷԱՄ-ով առաջատարներ են եղել Միացյալ Թագավորությունը (0,642857), Ֆրանսիան և Գերմանիան (0,571429-ական): 1990թ. Եվրամիության երկրներից ամենացածր ԷԱՄ են ունեցել Ֆինլանդիան, Հունգարիան և Ռումինիան (0,25-ական), իսկ 2005թ. այդպիսի երկրներ են եղել Լեհաստանը և Ռումինիան (0,214286-ական):

Աղյուսակ 7

Էներգետիկ անվտանգության մակարդակը Եվրամիության երկրներում 1990 և 2005թթ.

Երկիրը	1990թ.	2005թ.
Ավստրիա	0,417	0,357
Բելգիա	0,5	0,286
Բուլղարիա	0,417	0,357
Չեխիա	0,417	0,357
Դանիա	0,333	0,286
Էստոնիա	0,333	0,286
Ֆինլանդիա	0,25	0,286
Ֆրանսիա	0,583	0,571
Գերմանիա	0,5	0,571
Հունաստան	0,333	0,357
Հունգարիա	0,25	0,429
Իռլանդիա	0,417	0,357
Իտալիա	0,583	0,5
Լատվիա	0,333	0,357
Լիտվա	0,333	0,286
Նիդեռլանդներ	0,417	0,357
Լեհաստան	0,5	0,214
Պորտուգալիա	0,333	0,357
Ռումինիա	0,25	0,214
Սլովակիա	0,333	0,286
Սլովենիա	0,417	0,428
Իսպանիա	0,583	0,428
Շվեդիա	0,417	0,428
Միացյալ Թագավորություն	0,583	0,643
Միջինը	**0,409**	**0,375**
Աշխարհի միջինը	**0,337**	**0,314**

Գծապատկեր 3-ից երևում է, որ Եվրամիության անդամ երկրների մեջ էներգետիկ առումով անվտանգ երկրներ են համարվում Բելգիան, Գերմանիան, Լեհաստանը, Ֆրանսիան, Իտալիան, Իսպանիան և Միացյալ Թագավորությունը, իսկ վտանգավոր երկրների խմբում են գտնվում Ֆինլանդիան, Հունգարիան և Ռումինիան: Էներգետիկ անվտանգության առումով անվտանգ երկրների մասնաբաժինը Եվրամիության անդամ երկրների ընդհանուր թվի մեջ կազմում է 29,2%, իսկ էներգետիկ անվտանգության առումով վտանգավոր երկրների մասնաբաժինը՝ 12,5%:

Գծապատկեր 3

Եվրամիության երկրների էներգետիկ անվտանգության մակարդակը 1990թ.



Եվրամիության անդամ երկրների համար միջին ԷԱՄ-ը հավասար է 0,41, ինչը նշանակում է, որ Եվրամիությունը էներգետիկ առումով միջին անվտանգ գոտի է: Եվրամիության համապատասխան ցուցանիշն ավելի փոքր է, քան ՏՀԶԿ երկրների ցուցանիշը:

Կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ ԷԱՄ-ը ձևավորող 14 գործոններից Եվրամիության անդամ երկրների համար նշանակալից են եղել՝ ընդամենը էներգիայի օգտագործումը, էներգիայի օգտագործումը մեկ շնչի հաշվով, զուտ էներգիայի ներմուծումը, ատոմակայաններում արտադրվող էլեկտրաէներգիան:

Ինչպես երևում է *Գծապատկեր 4-ից,* 2005թ. Եվրամիության երկրներից էներգետիկ առումով անվտանգ են եղել Գերմանիան, Ֆրանսիան, Իտալիան, Միացյալ Թագավորությունը, իսկ վտանգավոր երկրների խմբում են գտնվում Ռումինիան և Լեհաստանը: Էներգետիկ առումով անվտանգ երկրների մասնաբաժինը Եվրամիության երկրների ընդհանուր թվի մեջ 1990թ. նկատմամբ նվազել է և կազմել 16,7%, իսկ էներգետիկ անվտանգության առումով վտանգավոր երկրների մասնաբաժինը՝ 8,33%:

Եվրամիության երկրների միջին ԷԱՄ-ը 2005թ. հավասար էր 0,38-ի, ինչը նշանակում է, որ Եվրամիությունը էներգետիկ անվտանգության առումով ունի միջին անվտանգություն: Եվրամիության դեպքում ևս նկատվում է ԷԱՄ նվազում վերլուծության նախորդ ժամանակահատվածի ցուցանիշների նկատմամբ:

Գծապատկեր 4

Եվրամիության երկրների էներգետիկ անվտանգության մակարդակը 2005թ.



Եվրամիության երկրների ԷԱՄ-ը ձևավորող 14 գործոններից 2005թ. առավել նշանակալից են եղել՝ միավոր էներգիային ընկնող ՀՆԱ-ն, էլեկտրաէներգիայի սպառումը մեկ շնչի հաշվով, ատոմակայաններում արտադրվող էլեկտրաէներգիան, էներգիայի օգտագործումը մեկ շնչի հաշվով, զուտ էներգիայի ներմուծումը, էլեկտրաէներգիայի արտադրությունը:

Գծապատկեր 5-ից երևում է, որ Նավթ արդյունահանող երկրների կազմակերպության (*OPEC,* մեր տեքստում այսուհետ՝ ՆԱԵԿ) մեջ մտնող երկրների շարքում էներգետիկ առումով անվտանգ երկրներ չկան: Միջին անվտանգության մակարդակ ունեցող երկրներն են Ալժիրը, Գաբոնը, Սաուդյան Արաբիան, Իրանը, Ինդոնեզիան, Քուվեյթը, Նիգերիան, Արաբական Միացյալ Էմիրությունները, իսկ վտանգավոր երկրների խմբում են գտնվում Էկվադորը, Իրաքը, Լիբիան և Վենեսուելան: Էներգետիկ առումով անվտանգ երկրների մասնաբաժինը ՆԱԵԿ երկրների ընդհանուր թվի մեջ կազմում է 0%, միջին անվտանգ երկրների մասնաբաժինը՝ 66,7%, իսկ էներգետիկ անվտանգության առումով վտանգավոր երկրների մասնաբաժինը՝ 33,3%:

ՆԱԵԿ երկրների համար միջին էներգետիկ անվտանգության մակարդակը հավասար է 0,27 *(Աղյուսակ 8),* ինչը նշանակում է, որ ՆԱԵԿ երկրները էներգետիկ անվտանգության առումով ունեն անվտանգության միջին աստիճան:

Գծապատկեր 5

ՆԱԵԿ երկրների էներգետիկ անվտանգության մակարդակը 1990թ.



Աղյուսակ 8

Էներգետիկ անվտանգության մակարդակը ՆԱԵԿ երկրներում 1990 և 2005թթ.

Երկիրը	1990թ.	2005թ.
Ալժիր	0,333	0,143
Էկվադոր	0,167	0,286
Գաբոն	0,333	0,357
Ինդոնեզիա	0,417	0,357
Իրան	0,417	0,429
Իրաք	0,167	0,143
Քուվեյթ	0,25	0,286
Լիբիա	0,167	0,286
Նիգերիա	0,25	0,357
Սաուդյան Արաբիա	0,333	0,5
Արաբական Միացյալ Էմիրություններ	0,25	0,286
Վենեսուելա	0,167	0,214
Միջինը	**0,271**	**0,304**
Աշխարհի միջինը	**0,337**	**0,314**

Վերլուծությունը ցույց է տալիս, որ ԷԱՄ-ը ձևավորող 14 գործոններից ՆԱԵԿ երկրների համար առավել նշանակալից են եղել՝ ընդամենը էներգիայի արտադրությունը, ընդամենը էներգիայի օգտագործումը, այրվող վերականգնվող վառելիքը և թափոնը, նավթից արտադրվող էլեկտրաէներգիան:

Գծապատկեր 6-ը ցույց է տալիս, որ ՆԱԵԿ երկրներից ըստ ԷԱՄ-ի անվտանգ է միայն Սաուդյան Արաբիան: Միջին անվտանգություն ունեցող երկրներն են Գաբոնը, Իրանը, Նիգերիան և Ինդոնեզիան, Քուվեյթը, Արաբական Միացյալ Էմիրությունները, Էկվադորը, Լիբիան, իսկ վտանգավոր երկրների խմբում են գտնվում Ալժիրը, Իրաքը և Վենեսուելան: Էներգետիկ անվտանգության առումով անվտանգ երկրների մասնաբաժինը ՆԱԵԿ երկրների ընդհանուր թվի մեջ աճել է 1990թ. նկատմամբ և 2005թ. կազմել 8,3%, միջին անվտանգություն ունեցող երկրների մասնաբաժինը մնացել է նույնը՝ 66,7%, իսկ էներգետիկ անվտանգության առումով վտանգավոր երկրների մասնաբաժինը նվազել է՝ կազմելով 25%:

Գծապատկեր 6

ՆԱԵԿ երկրների էներգետիկ անվտանգության մակարդակը 2005թ.



ՆԱԵԿ երկրների միջին ԷԱՄ-ն աճել է 1990թ. նկատմամբ և 2005թ. կազմել 0,3, ինչը նշանակում է, որ ՆԱԵԿ երկրները հասել են ԷԱՄ միջին անվտանգության շեմին: Երկրների այս խմբի ԷԱՄ-ը ձևավորող 14 գործոններից առավել նշանակալից են եղել՝ էլեկտրաէներգիայի սպառումը մեկ շնչի հաշվով, ընդամենը էներգիայի արտադրությունը, ընդամենը էներգիայի օգտագործումը, էլեկտրաէներգիայի արտադրությունը, էներգիայի օգտագործումը մեկ շնչի հաշվով:

Աղյուսակ 9-ում բերված են ԱՊՀ երկրների ԷԱՄ-ը բնութագրող ցուցանիշները: Աղյուսակի տվյալներից հետևում է, որ ԱՊՀ երկրների ԷԱՄ-ը 2005թ. 1990թ. համեմատ նկատելիորեն (շուրջ 1/3-ով) նվազել է: Միայն չորս երկրներում՝ Հայաստանում, Ղրղզստանում, Ռուսաստանում և Տաջիկստանում է նկատվել այդ ցուցանիշների աճ, մյուսներում՝ ընդհակառակը:

Աղյուսակ 9

Էներգետիկ անվտանգության մակարդակը ԱՊՀ երկրներում 1990 և 2005թթ.

Երկիրը	1990թ.	2005թ.
Հայաստան	0,25	0,286
Ադրբեջան	0,25	0,143
Բելառուս	0,417	0,286
Վրաստան	0,417	0,214
Ղազախստան	0,417	0,214
Ղրղզստան	0,167	0,214
Մոլդովա	0,417	0,214
Ռուսաստան	0,417	0,429
Տաջիկստան	0,167	0,214
Թուրքմենստան	0,167	0,143
Ուկրաինա	0,5	0,286
Ուզբեկստան	0,167	0,071
Միջինը	**0,312**	**0,226**
Աշխարհի միջինը	**0,337**	**0,314**

Գծապատկեր 7

ԱՊՀ երկրների էներգետիկ անվտանգության մակարդակը 1990թ.



Ինչպես երևում է *Գծապատկեր 7-ից,* ԱՊՀ անդամ երկրներից էներգետիկ առումով անվտանգ է եղել միայն Ուկրաինան, իսկ վտանգավորության շեմին գտնվող երկրներն էին Ղրղզստանը, Տաջիկստանը, Թուրքմենստանը և Ուզբեկստանը: Էներգետիկ առումով անվտանգ երկրների մասնաբաժինը ԱՊՀ անդամ երկրների ընդհանուր թվի մեջ կազմում է 8,3%, միջին անվտանգ երկրների մասնաբաժինը՝ 58,3%, իսկ էներգետիկ առումով վտանգավոր երկրների մասնաբաժինը՝ 33,4%:

ԱՊՀ երկրների միջին ԷԱՄ-ը հավասար է 0,312-ի, ինչը նշանակում է, որ ԱՊՀ երկրները կարող են էներգետիկ անվտանգության առումով համարվել միջին անվտանգություն ունեցող:

ԱՊՀ երկրների ԷԱՄ-ը ձևավորող 14 գործոններից առավել նշանակալից են եղել (տե՛ս *Աղյուսակ 10*)՝ ընդամենը էներգիայի արտադրությունը, ընդամենը էներգիայի օգտագործումը, էլեկտրաէներգիայի արտադրությունը, էներգիայի օգտագործումը մեկ շնչի հաշվով, ածխից արտադրվող էլեկտրաէներգիան:

Ինչպես երևում է *Գծապատկեր 8-ից,* ԱՊՀ անդամ երկրների մեջ էներգետիկ անվտանգության առումով անվտանգ երկիր չկա, իսկ վտանգավոր խմբում գտնվող երկրներն են Ղրղզստանը, Թուրքմենստանը, Ուզբեկստանը, Վրաստանը, Մոլդովան, Ղազախստանը, Ադրբեջանը: Էներգետիկ անվտանգության առումով անվտանգ երկրների մասնաբաժինը ԱՊՀ անդամ երկրների ընդհանուր թվի մեջ 1990թ. նկատմամբ նվազել է և կազմել է 0%, միջին անվտանգ երկրների մասնաբաժինը ևս կտրուկ նվազել է և 2005թ. կազմել 33,3%, իսկ էներգետիկ անվտանգության առումով վտանգավոր խմբում գտնվող երկրների մասնաբաժինը կտրուկ աճել է և 2005թ. կազմել ԱՊՀ երկրների ընդհանուր թվի 66,7%-ը:

ԱՊՀ երկրների միջին ԷԱՄ-ը ևս նվազել է 1990թ. նկատմամբ և 2005թ. կազմել 0,23, ինչը նշանակում է, որ ԱՊՀ երկրները էներգետիկ անվտանգության առումով համարվում են վտանգավոր խմբում գտնվող: Տվյալ խմբի մեջ մտնող երկրների ԷԱՄ-ը ձևավորող 14 գործոններից առավել նշանակալից ազդեցություն են ունեցել հետևյալները՝ ընդամենը էներգիայի արտադրությունը, ընդամենը էներգիայի օգտագործումը, էլեկտրաէներգիայի արտադրությունը, էներգիայի օգտագործումը մեկ շնչի հաշվով, գազից արտադրվող էլեկտրաէներգիան:

Գծապատկեր 8

ԱՊՀ երկրների էներգետիկ անվտանգության մակարդակը 2005թ.



Աղյուսակ 10

ԱՊՀ 7 երկրների էներգետիկ վիճակագրական տվյալների համեմատական վերլուծություն մի կիսամյակի համար 1990 և 2005թթ.

Երկիրը		Օգտագործված միավոր էներգիային ընկնող ՀՆԱ-ն, հաշվարկված է 2000թ. ԱՄՆ դոլարով՝ հաշվի առած PPP-ն (կգ նավթին համարժեք)		Էլեկտրաէներգիայի սպառումը մեկ շնչի հաշվով, կվտ/ժամ		Տեղափոխման և բաշխման կորուստները, %-ով արտադրանքի նկատմամբ		Ընդամենը էներգիայի արտադրությունը (նավթին համարժեք հազար մետրիկ տոննա)		Ընդամենը էներգիայի օգտագործումը (նավթին համարժեք հազար մետրիկ տոննա)		Այրվող, վերականգնվող վառելիք և թափոն, %-ով ընդհանուր սպառման մեջ		Էներգիայի օգտագործումը մեկ շնչի հաշվով, կգ նավթին համարժեք		Զուտ էներգիայի ներմուծում, %-ով օգտագործված էներգիայի նկատմամբ		Էլեկտրաէներգիայի արտադրություն, մլրդ կվտ/ժամ, որից, %-ով ընդհանուրի նկատմամբ		այդ թվում՝					
																		ՀԷԿ-երում արտադրվող		Աճխից		Նավթից		Գազից		Ատոմային էներգիա	
		1990	2005	1990	2005	1990	2005	1990	2005	1990	2005	1990	2005	1990	2005	1990	2005	1990	2005	1990	2005	1990	2005	1990	2005	1990	2005
ԱՊՀ երկրներ	Հայաստան	0	0	-	0	-	1	0	0	0	0	0	0	0	0	1	1	0	0	0	0	1	1	0	0	0	1
	Ադրբեջան	0	0	-	0	-	0	0	0	0	0	0	0	1	1	1	1	0	0	0	0	1	1	0	0	0	0
	Վրաստան	0	0	-	0	-	1	0	0	0	0	0	0	0	0	1	1	0	0	0	0	1	1	0	0	0	0
	Մոլդովա	0	0	-	0	-	1	1	1	0	0	0	0	0	0	1	1	0	0	0	0	1	1	0	0	0	0
	Ղազախստան	0	0	-	0	-	0	0	1	0	1	0	0	1	1	1	1	0	0	0	0	1	1	0	0	0	0
	Ռուսաստան	0	0	-	1	-	0	1	1	0	1	0	0	1	1	1	1	0	0	0	0	1	1	0	0	0	0
	Տաջիկստան	0	0	-	0	-	1	0	0	0	0	0	0	1	1	1	1	0	0	0	0	1	1	0	0	0	0
	Թուրքմենստան	0	0	-	0	-	0	0	0	0	0	0	0	0	0	1	1	0	0	0	0	1	1	0	0	0	0
	Ուզբեկստան	0	0	-	0	-	0	0	0	0	0	0	0	0	0	1	1	0	0	0	0	1	1	0	0	0	0
Հայաստանի էներգետիկայի զարգացման տարբերակներ	Հայաստան	0	0	-	0	-	1	0	0	0	0	0	0	0	0	1	1	0	0	0	0	1	1	0	0	0	1
	Ադրբեջան	0	0	-	0	-	0	0	0	0	0	0	0	1	1	1	1	0	0	0	0	1	1	0	0	0	0
	Վրաստան	0	0	-	0	-	1	0	0	0	0	0	0	0	0	1	1	0	0	0	0	1	1	0	0	0	0
	Իրան	0	0	-	0	-	1	1	1	0	1	0	0	1	1	1	1	0	0	0	0	1	1	0	0	0	0
	Թուրքիա	1	0	-	0	-	1	0	0	0	0	0	0	0	0	1	1	0	0	0	0	1	1	0	0	0	0

Ինչպես երևում է *Գծապատկեր 9-ից,* Հարավկովկասյան տարածաշրջանի երկրներից[1] 1990թ. էներգետիկ առումով անվտանգ երկրներ չեն եղել, էներգետիկ միջին անվտանգություն ունեցող երկրները երկուսն էին՝ Վրաստանն ու Իրանը, իսկ վտանգավոր խմբում գտնվող երկրները երեքն էին՝ Հայաստանը, Ադրբեջանն ու Թուրքիան:

Գծապատկեր 9

Հարավկովկասյան տարածաշրջանի երկրների էներգետիկ անվտանգության մակարդակը 1990թ.



Հարավկովկասյան տարածաշրջանի երկրների միջին ԷԱՄ-ը 1990թ. կազմել է շուրջ 0,32 (*Աղյուսակ 11*), ինչը նշանակում է, որ տարածաշրջանի երկրները էներգետիկ անվտանգության առումով կարելի է համարել միջին անվտանգություն ունեցող:

Աղյուսակ 11-ի տվյալներից հետևում է, որ Հարավկովկասյան տարածաշրջանի երկրներում 1990թ. Հայաստանը, Ադրբեջանը և Թուրքիան ունեցել են տարածաշրջանի ամենացածր ԷԱՄ-ը (0,25-ական): Ըստ որում՝ Վրաստանի և Իրանի ԷԱՄ-երը զգալիորեն (շուրջ 1,7 անգամ) գերազանցել են Հայաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի ցուցանիշները: 2005թ. պատկերն այլ է: Ադրբեջանի և Վրաստանի ԷԱՄ-երը նկատելիորեն վատացել են (Ադրբեջանում և Վրաստանում 1990թ. համեմատ այդ ցուցանիշը նվազել է շուրջ երկու անգամ): Հայաստանում և Թուրքիայում ԷԱՄ-երի փոփոխությունը 1990-2005թթ. տեղի է

[1] Հարավկովկասյան տարածաշրջանի երկրներ ասելով այստեղ հասկանում ենք Հայաստանի Հանրապետությունը և նրա հարևան երկրները՝ Վրաստանը, Ադրբեջանը, Թուրքիան և Իրանը:

ունեցել նույն տեմպերով (աճը կազմել է 114,3%): Ընդհանուր առմամբ Հարավային Կովկասի տարածաշրջանի երկրների ԷԱՄ-ը 2005թ. 1990թ. համեմատ զգալիորեն՝ 14,3%-ով նվազել է և, բացի այդ, ինչպես 1990թ., այնպես էլ 2005թ. տարածաշրջանային ԷԱՄ-ը հետ է մնում աշխարհի համապատասխան ցուցանիշից:

Աղյուսակ 11

Հարավկովկասյան տարածաշրջանի երկրների էներգետիկ անվտանգության մակարդակը 1990 և 2005թթ.

Երկիրը	1990թ.	2005թ.
Հայաստան	0,25	0,286
Ադրբեջան	0,25	0,143
Վրաստան	0,417	0,214
Իրան	0,417	0,428
Թուրքիա	0,25	0,286
Միջինը	**0,317**	**0,271**
Աշխարհի միջինը	**0,337**	**0,314**

Հարավային Կովկասի տարածաշրջանի երկրների ԷԱՄ-ը ձևավորող 14 գործոններից առավել նշանակալից են եղել հետևյալները՝ նավթից արտադրվող էլեկտրաէներգիան, ՀԷԿ-երում արտադրվող էլեկտրաէներգիան, էներգիայի օգտագործումը մեկ շնչի հաշվով, զուտ էներգիայի ներմուծումը:

Ինչպես երևում է *Գծապատկեր 10-ից*, Հարավկովկասյան տարածաշրջանում էներգետիկ անվտանգության առումով անվտանգ երկրներ չկան, էներգետիկ առումով միջին անվտանգ երկրները Իրանը, Հայաստանը և Թուրքիան են, իսկ վտանգավոր խմբում գտնվող երկրները երկուսն են՝ Ադրբեջանը և Վրաստանը:

Հարավկովկասյան տարածաշրջանի երկրների միջին ԷԱՄ-ը 1990թ. համեմատ նվազել է՝ կազմելով 0,27, ինչը նշանակում է, որ տարածաշրջանի երկրները կարելի է համարել էներգետիկ առումով միջին անվտանգություն ունեցող:

Հարավային Կովկասի երկրների ԷԱՄ-ը ձևավորող 14 գործոններից առավել նշանակալիցները տարածաշրջանի երկրների համար քննարկենք ավելի մանրամասնորեն: Հայաստանում էներգիայի տեղափոխման և բաշխման կորուստները 2005թ. 1990թ. համեմատ աճել են, մյուս կողմից՝ 2005թ. 1990թ. նկատմամբ նվազել են մեկ անձին բաժին ընկնող էներգիայի օգտագործման ծավալները, նույնն է մնացել և դիտարկվող 15 տարիներին չի փոխվել զուտ էներգիայի ներմուծումը: Եթե 1990թ. Հայաստանի համար արդյունա-

վետ շեմից բարձր են նավթից արտադրվող էներգիայի ծավալները, ապա 2005թ. նշանակալից էին գազից արտադրվող էներգիայի, ինչպես նաև ատոմային էներգիայի ծավալները: Ադրբեջանը 2005թ. 1990թ. նկատմամբ կորցրել է իր դիրքերը մեկ շնչի կողմից օգտագործված էներգիայի ծավալների, ինչպես նաև զուտ ներմուծման ծավալների առումով: Սակայն կայուն և արդյունավետության շեմից բարձր մակարդակի վրա են մնացել նավթից արտադրվող էներգիայի ծավալները, ինչպես և 2005թ. ավելացել են գազից արտադրվող էներգիայի ծավալները: Վրաստանում 2005թ. աճել են էլեկտրաէներգիայի տեղափոխման և բաշխման կորուստները ընդհանուր արտադրված էներգիայի նկատմամբ, մյուս կողմից՝ նվազել են մեկ շնչի կողմից օգտագործվող էներգիայի ծավալները: Պետք է նշել, որ ԷԱՄ-ի միջինից բարձր մակարդակի վրա են մնացել զուտ ներմուծման և ՀԷԿ-երի միջոցով արտադրվող էներգիայի ծավալները: Իրանի դեպքում՝ բարձր մակարդակի վրա են գտնվում էներգիայի օգտագործման և արտադրման, ինչպես նաև գազից արտադրվող էներգիայի ծավալները: Թուրքիայի օրինակը քննարկելիս հանգում ենք այն եզրակացությանը, որ ԷԱՄ-ի միջինից բարձր մակարդակի վրա են գտնվում օգտագործված միավոր էներգիային ընկնող ՀՆԱ ծավալները, զուտ էներգիայի և գազից արտադրվող էներգիայի ծավալների ցուցանիշները:

Գծապատկեր 10

Հարավկովկասյան տարածաշրջանի երկրների էներգետիկ անվտանգության մակարդակը 2005թ.



Ամփոփելով 1990թ. տվյալներով հաշվարկած ԷԱՄ-ը աշխարհի 124 երկրների համար, այդ թվում նաև ըստ տարածաշրջանների, կարող ենք փաստել, որ ամենաբարձր ԷԱՄ ունեցել են ՏՀԶԿ երկրները: Սակայն պետք է նշել, որ այդ ցուցանիշը բավարար չէ, որպեսզի ՏՀԶԿ երկրները կոչվեն էներգետիկ անվտանգության առումով անվտանգ. դրանք ապահովում են էներգետիկ անվտանգության միջին մակարդակ: ՏՀԶԿ երկրներից հետո միջին անվտանգություն ունեին Եվրամիության երկրները, ԱՊՀ երկրները, այնուհետև Հարավկովկասյան տարածաշրջանի երկրները: Մինչդեռ ՆԱԵԿ երկրները գտնվում էին էներգետիկ անվտանգության առումով ամենացածր մակարդակի վրա: Այստեղից կարելի է եզրակացնել, որ 1990թ. էներգետիկ առումով անվտանգ են եղել տնտեսապես զարգացած երկրները, որոնք հիմնականում հարուստ չեն էներգետիկ ռեսուրսներով, իսկ, օրինակ, ՆԱԵԿ երկրները, որոնք հարուստ են էներգառեսուրսներով, էներգետիկ անվտանգության առումով ունեցել են միջին անվտանգություն, սակայն գտնվել են վտանգավոր խմբի երկրներին մոտ: Ասվածից հետևում է, որ էներգետիկ անվտանգության առումով անվտանգ են այն երկրները, որոնք տնտեսապես զարգացած են, սակայն պարտադիր չէ, որ հարուստ լինեն էներգառեսուրսներով:

2005թ. աշխարհի 124 երկրների և ըստ առանձին տարածաշրջանների ԷԱՄ վերլուծության ամփոփումը թույլ է տալիս եզրակացնել, որ ԷԱՄ ամենաբարձր մակարդակ ունեցել են ՏՀԶԿ երկրները, թեև 1990թ. համեմատությամբ այդ ցուցանիշը նվազել է: Նույնիսկ այդ պարագայում ՏՀԶԿ երկրները էներգետիկ անվտանգության առումով համարվում են միջին անվտանգություն ունեցող: ՏՀԶԿ երկրներից հետո միջին անվտանգ են համարվում ՆԱԵԿ երկրները, որոնց միջին ԷԱՄ-ը դիտարկվող ժամանակահատվածում աճել է՝ հասնելով միջին անվտանգության աստիճանից ավելի բարձր մակարդակի: Եվրամիության, ԱՊՀ, Հարավկովկասյան տարածաշրջանի երկրները դիտարկվող ժամանակահատվածում զիջել են դիրքերը և գտնվում են էներգետիկ առումով վտանգավոր խմբերում: 2005թ. նույնպես էներգետիկ առումով անվտանգ են եղել տնտեսապես զարգացած երկրները, որոնք հիմնականում հարուստ չեն էներգառեսուրսներով, սակայն այդ երկրներում գրանցվել է ԷԱՄ անկում, ինչի արդյունքում ԱՊՀ երկրները և Հարավկովկասյան տարածաշրջանի երկրները դասվել են էներգետիկ առումով վտանգավոր երկրների շարքին, իսկ, օրինակ, ՆԱԵԿ երկրները, որոնք հարուստ են էներգառեսուրսներով, 15 տարվա կտրվածքում դարձել են էներգետիկ առումով միջին անվտանգություն ունեցող: Ասվածից հետևում է, որ տնտեսապես զարգացած երկրները պահպանել և ավելի են մեծացրել ԷԱՄ-ը, իսկ այն երկրները, որոնք գրանցել են էքստենսիվ տնտեսական աճ, դիտարկվող 15 տարիների ընթացքում կորցրել են իրենց դիրքերը էներգետիկ անվտանգություն ունեցող երկրների ցանկում: ՆԱԵԿ երկրների զգալի աճը պայմանավորված է նրանով, որ ձեռք բերված նավթային եկամուտներն ուղղորդվել են ինտենսիվ տնտեսական աճի ապահովանը:

Աղյուսակ 12

ԷԱՄ առաջին 10 ամենաանվտանգ, 10 ամենավտանգավոր երկրների և երկրների առանձին խմբերի ամփոփ ցուցանիշները 1990թ.

Հ/հ	Երկրների խմբերը	ԷԱՄ միջին մեծությունը	ԷԱՄ		ԷԱՄ ամենաբարձր և ամենացածր ցուցանիշի հարաբերությունը, անգամ
			ամենաբարձր ցուցանիշը	ամենացածր ցուցանիշը	
1	Ամենաանվտանգ 10 երկրներ	0.558	0.583	0.5	1.167
2	Ամենավտանգավոր 10 երկրներ	0.142	0.167	0.083	2.000
3	ՏՀԶԿ երկրներ	0.447	0.583	0.25	2.333
4	Եվրամիության երկրներ	0.409	0.583	0.25	2.333
5	ՆԱԵԿ երկրներ	0.271	0.417	0.167	2.500
6	ԱՊՀ երկրներ	0.312	0.417	0.167	2.500
7	Հարավկովկասյան տարածաշրջանի 5 երկրներ	0.317	0.417	0.25	1.667
8	Աշխարհի 124 երկրները	0.337	0.583	0.083	7.000

Աղյուսակներ 12 և 13-ում ներկայացված են խմբավորման տարբեր սկզբունքներով ձևավորված պետությունների միավորումների վերաբերյալ ԷԱՄ ամփոփ ցուցանիշները 1990 և 2005թթ.: Եթե համեմատելու լինենք այդ տվյալները, ապա կարող ենք կատարել հետևյալ օրինաչափ եզրահանգումները.

- նշված բոլոր խմբերում (բացառությամբ ՏՀԶԿ և Եվրամիության երկրների), յուրաքանչյուր խմբի ներսի, ԷԱՄ ամենաբարձր և ամենացածր ցուցանիշների հարաբերությունն աճել է, այսինքն՝ ԷԱՄ ծայրակետային մեծությունների միջև անհավասարությունն աճել է, ըստ որում, եթե 1990թ. աշխարհում ամենաբարձր և ամենացածր ԷԱՄ ունեցող երկրների տարբերությունը կազմում էր 7, ապա 2005թ.՝ 9 անգամ,
- խորացել է նաև ամենավտանգավոր խմբում գտնվող 10 երկրների ներսում ամենաբարձր և ամենացածր ԷԱՄ ունեցող երկրների տարբերությունը՝ 1990թ. 2 անգամից 2005թ. այն դարձել է 3 անգամ,
- առանձնապես խորացել է «խզումը» ամենաբարձր և ամենացածր ԷԱՄ ունեցող ԱՊՀ երկրներում, եթե այդ ցուցանիշների հարաբերությունը 1990թ. կազմում էր 2,5 անգամ, ապա 2005թ.՝ 6 անգամ («խզման խորացումը» կազմել է 2,4 անգամ),

- աղյուսակներում բերված երկրների բոլոր խմբերում (բացառությամբ ՆԱԵԿ և ամենավտանգավոր 10 երկրների) ԷԱՄ միջին մեծությունը 2005թ. 1990թ. համեմատ նվազել է, աշխարհում այդ նվազումը կազմել է 6,8%, ամենաանվտանգ 10 երկրներում՝ 2,8%, ՏՀԶԿ երկրներում՝ 4,9%, Եվրամիության երկրներում՝ 9,5%, ԱՊՀ երկրներում՝ 17,6%, Հարավկովկասյան տարածաշրջանի 5 երկրներում՝ 14,3%:

Աղյուսակ 13

ԷԱՄ առաջին 10 ամենաանվտանգ, 10 ամենավտանգավոր երկրների և երկրների առանձին խմբերի ամփոփ ցուցանիշները 2005թ.

Հ/հ	Երկրների խմբերը	ԷԱՄ միջին մեծությունը	ԷԱՄ		ԷԱՄ ամենաբարձր և ամենացածր ցուցանիշի հարաբերությունը, անգամ
			ամենա-բարձր ցուցա-նիշը	ամենա-ցածր ցուցա-նիշը	
1	Ամենաանվտանգ 10 երկրներ	0.543	0.643	0.5	1.286
2	Ամենավտանգավոր 10 երկրներ	0.143	0.214	0.071	3.000
3	ՏՀԶԿ երկրներ	0.425	0.643	0.286	2.250
4	Եվրամիության երկրներ	0.375	0.643	0.286	2.250
5	ՆԱԵԿ երկրներ	0.304	0.429	0.143	3.000
6	ԱՊՀ երկրներ	0.226	0.429	0.071	6.000
7	Հարավային Կովկասի տարածաշրջանի 5 երկրներ	0.271	0.429	0.143	3.000
8	Աշխարհի 124 երկրները	0.314	0.643	0.071	9.000

3. Էներգետիկ անվտանգության մակարդակի հեռանկարները

Աշխարհի 124 երկրների համար 1990, 2003, 2004, 2005թթ. ԷԱՄ հաշվարկների հիմքի վրա կատարվել են կանխատեսումներ մինչև 2010, 2015 և 2020թթ., ելնելով տարբեր խմբավորումներից, մասնավորապես՝ ԱՊՀ երկրների, Հարավային Կովկասի և Հայաստանի հարևան երկրների՝ Թուրքիայի և Իրանի համար: Կանխատեսումներն իրականացվել են՝ ելնելով նախորդ տարիների ցուցանիշներից և այն նախապայմանից, որ ԷԱՄ հաշվարկի համար մեր կողմից ընտրված 14 ցուցանիշների գծով կպահպանվեն ներկայումս գոյություն ունեցող միտումները: Այստեղ պետք է նշել, որ որևէ երկրի համար տեղի ունեցող զարգացումների կտրուկ փոփոխման դեպքում մեր կանխատեսումները կարող են շտկման կարիք ունենալ:

Կանխատեսումներն իրականացվել են գծային թրենդի բացահայտման միջոցով: Գծային թրենդն ունի հետևյալ տեսքը՝

$$Y_i=a*i+b,$$

որտեղ՝ Y_i-ն i-րդ տարում էներգետիկ անվտանգության մակարդակն է, i-ն համապատասխան տարվան վերագրված ծածկագիրն է (1, 2 … 124):

Աշխարհի երկրների ԷԱՄ 2010թ. կանխատեսվող տվյալներից հետևում է, որ անվտանգ երկրների խմբում ընդգրկված են 10 երկիր, որոնց ԷԱՄ-ը տատանվելու է 0,5-0,66 միջակայքում, իսկ այս խմբում ընդգրկված երկրների ԷԱՄ միջին մեծությունը կազմելու է 0,557: Երկրորդ՝ անվտանգության միջին մակարդակ ունեցող երկրների խմբում ընդգրկված են 71 երկիր, որոնց ԷԱՄ ցուցանիշն ընկած է 0,251-0,490 միջակայքում, իսկ միջինը կազմելու է 0,347: Երրորդ խմբում ընդգրկված են 43 երկիր 0,070-0,242 միջակայքում գտնվող ԷԱՄ ցուցանիշներով, խմբի միջինը կազմելու է 0,175: Աղյուսակի տվյալներից հետևում է, որ 2010թ. ըստ ԷԱՄ-ի անվտանգ երկրների թիվը լինելու է 10, ինչը կազմում է դիտարկվող երկրների թվի 8,1%-ը, որն ավելի քան երկու անգամ պակաս է 1990թ. համապատասխան ցուցանիշից:

Հաշվարկվել են նաև աշխարհի երկրների ԷԱՄ կանխատեսվող մեծությունները 2015 և 2020թթ., որտեղ երկրներն ըստ ԷԱՄ-ի դասակարգված են երեք խմբում: 2015թ. առաջին խմբում ընդգրկված են 11 պետություն, 2020թ.՝ 13, ըստ որում, եթե 2015թ. առաջին խումբ երկրների ԷԱՄ միջին մեծությունը կազմելու է 0,567, ապա 2020թ.՝ 0,575, այսինքն՝ նշված ժամանակահատվածում ԷԱՄ միջին մեծությունը, ըստ կանխատեսումների, ավելանալու է 1,4%-ով:

Ուսումնասիրվող հիմնահարցի կանխատեսումների վերաբերյալ օրինաչափություններ բացահայտելու և եզրակացություններ անելու համար կազմենք *Աղյուսակ 14-ը:* Աղյուսակի տվյալներից հետևում է, որ կանխատեսվող ժամանակահատվածում՝ 2010-2020թթ., աշխարհի երկրների ԷԱՄ-ն ունի նվազման միտում. 2010թ. 0,304-ից այն 2020թ. հասնելու է 0,290-ի, այսինքն՝ նվազելու է 4,6%-ով: Ավելանալու է նաև ԷԱՄ-երի միջև եղած խզումը առանձին խումբ երկրների միջև: Այսպես, եթե 2010թ. անվտանգ խմբի մեջ մտնող երկրների ԷԱՄ հարաբերությունը «վտանգավոր» խմբի ԷԱՄ-ին 2010թ. կազմելու է 3,18 անգամ, ապա 2020թ.՝ 4,49 անգամ (աճը՝ 1,4 անգամ): Ըստ ԷԱՄ-ի առանձին խումբ երկրների համար այդ ցուցանիշները կազմելու են համապատասխանաբար՝ անվտանգ երկրներում՝ 0,557, 0,575 և 3,2%, միջին վտանգավորություն ունեցող երկրներում՝ 0,347, 0,352 և 1,4%, վտանգավոր գոտում գտնվող երկրներում՝ 0,175, 0,128 և 26,9%: Հատկանշական է նաև, որ համաձայն կատարված կանխատեսումների, եթե 2020թ. 2010թ. համեմատ անվտանգ երկրների թիվն ավելանալու և կազմելու է ընդհանուր երկրների թվի 10,5%-ը, ապա միջին անվտանգություն ունեցող երկրների բաժինը նվազելու և կազմելու է 51,6%, իսկ վտանգավոր երկրների թիվն աճելու և կազմելու է 37,9%:

Աղյուսակ 14

ԷԱՄ դինամիկան ըստ աշխարհի երկրների առանձին խմբերի և ենթախմբերի 2010-2020թթ.

Հ/հ	Երկրների խմբերը	2010		2015		2020	
		ժողովրդի վիճակի մասնաբաժինը երկրների վիճակի %-ով	ԷԱՄ մեծությունը	ժողովրդի վիճակի մասնաբաժինը երկրների վիճակի %-ով	ԷԱՄ մեծությունը	ժողովրդի վիճակի մասնաբաժինը երկրների վիճակի %-ով	ԷԱՄ մեծությունը
1	Անվտանգ երկրներ	10 / 8,1	0,557	11 / 8,9	0,567	13 / 10,5	0,575
2	Միջին անվտանգություն ունեցող երկրներ	71 / 52,7	0,347	70 / 56,4	0,347	64 / 51,6	0,352
3	Վտանգավոր խմբում գտնվող երկրներ	43 / 34,7	0,175	43 / 34,7	0,148	47 / 37,9	0,128
	«Անվտանգ» խմբի հարաբերությունը «Վտանգավոր» խմբին, անգամ	**-**	**3,18**	**-**	**3,83**	**-**	**4,49**
	Աշխարհի միջինը	**124 / 100,0**	**0,304**	**124 / 100,0**	**0,297**	**124 / 100,0**	**0,290**

Աղյուսակներ 15 և 16-ում բերված են աշխարհի էներգետիկ ամենաանվտանգ և ամենավտանգավոր 10 երկրների կանխատեսվող ցուցանիշները 2010, 2015 և 2020թթ.: Եթե համեմատելու լինենք աշխարհի ամենաանվտանգ երկրների 2010թ. ցանկը 2020թ. ցանկի հետ, ապա ակնհայտ կդառնա, որ 2020թ. «լավագույն» տասնյակի երկրներից 7-ը պահպանելու են իրենց զբաղեցրած տեղերը, իսկ երեքը՝ Իտալիան, Կորեայի Հանրապետությունը և Մեքսիկան, «փոխարինվելու» են Հունգարիայով, Նիգերիայով և Սինգապուրով: Աշխարհի էներգետիկ առումով ամենավտանգավոր երկրների 2010թ. ցանկից 2020թ. ցանկ են «տեղափոխվել» Ալժիրը, Կոնգոյի Ժող. Հանրապետությունը, Մոլդովան, Յամայկան, Եգիպտոսը, Ուզբեկստանը և Լեհաստանը: Թուրքմենստանը, Ադրբեջանը և Իրաքը «փոխարինվել» են Բելգիայով, Թաիլանդով և Բոլիվիայով:

Աղյուսակ 15

Աշխարհի էներգետիկ ամենաանվտանգ 10 երկրները 2010, 2015 և 2020թթ.

Երկրի տեղը	2010թ.		2015թ.		2020թ.	
	Երկիրը	ԷԱՄ	Երկիրը	ԷԱՄ	Երկիրը	ԷԱՄ
1	Միացյալ Թագավորություն	0.660	Միացյալ Թագավորություն	0.680	Միացյալ Թագավորություն	0.700
2	Գերմանիա	0.620	Գերմանիա	0.650	Գերմանիա	0.680
3	Միացյալ Նահանգներ	0.600	Միացյալ Նահանգներ	0.625	Միացյալ Նահանգներ	0.650
4	Բրազիլիա	0.596	Բրազիլիա	0.600	Հունգարիա	0.610
5	Հնդկաստան	0.550	Հունգարիա	0.550	Բրազիլիա	0.604
6	Ֆրանսիա	0.540	Սաուդյան Արաբիա	0.550	Սաուդյան Արաբիա	0.594
7	Սաուդյան Արաբիա	0.506	Հնդկաստան	0.540	Նիգերիա	0.557
8	Իտալիա	0.500	Ֆրանսիա	0.530	Հնդկաստան	0.530
9	Կորեայի Հանրապետություն	0.500	Նիգերիա	0.508	Ֆրանսիա	0.520
10	Մեքսիկա	0.500	Կորեայի Հանրապետություն	0.500	Սինգապուր	0.520

Աղյուսակ 16

Աշխարհի էներգետիկ ամենավտանգավոր երկրները 2010, 2015 և 2020թթ.

Երկրի տեղը	2010թ.		2015թ.		2020թ.	
	Երկիրը	ԷԱՄ	Երկիրը	ԷԱՄ	Երկիրը	ԷԱՄ
1	Թուրքմենստան	0.132	Թաիլանդ	0.090	Ուզբեկստան	0.050
2	Ալժիր	0.130	Իրաք	0.085	Բելգիա	0.047
3	Կոնգոյի Ժող. Հանրապետություն	0.130	Ալժիր	0.080	Յամայկա	0.040
4	Մոլդովա	0.129	Կոնգոյի Ժող. Հանրապետություն	0.080	Թաիլանդ	0.040
5	Ադրբեջան	0.125	Բոլիվիա	0.075	Ալժիր	0.030
6	Յամայկա	0.110	Յամայկա	0.075	Կոնգոյի Ժող. Հանրապետություն	0.030
7	Իրաք	0.100	Ուզբեկստան	0.070	Բոլիվիա	0.010
8	Եգիպտոս	0.090	Մոլդովա	0.054	Եգիպտոս	0.010
9	Ուզբեկստան	0.090	Լեհաստան	0.050	Մոլդովա	0.010
10	Լեհաստան	0.070	Եգիպտոս	0.030	Լեհաստան	0.010

Աղյուսակ 17-ում բերված են ՏՀԶԿ երկրների ԷԱՄ կանխատեսումները 2010-2020թթ.: Աղյուսակի տվյալներից հետևում է, որ ԷԱՄ միջին մեծությունը նշված ժամանակահատվածում նվազել է 2010թ. 0,414-ից հասնելով 2020թ. 0,397 մեծությանը:

Աղյուսակ 17

ՏՀԶԿ երկրների էներգետիկ անվտանգության կանխատեսվող մակարդակը 2010-2020թթ.

Հ/հ	Երկիրը	2010թ.	2015թ.	2020թ.
1	Ավստրալիա	0.4	0.375	0.35
2	Ավստրիա	0.34	0.32	0.3
3	Բելգիա	0.197	0.122	0.047
4	Կանադա	0.4	0.375	0.35
5	Դանիա	0.3	0.29	0.28
6	Ֆինլանդիա	0.234	0.2325	0.231
7	Ֆրանսիա	0.54	0.53	0.52
8	Գերմանիա	0.62	0.65	0.68
9	Հունաստան	0.362	0.37	0.378
10	Իռլանդիա	0.33	0.31	0.29
11	Իտալիա	0.5	0.48	0.46
12	Ճապոնիա	0.46	0.43	0.4
13	Մեքսիկա	0.5	0.5	0.5
14	Նիդեռլանդներ	0.33	0.31	0.29
15	Նոր Զելանդիա	0.39	0.425	0.46
16	Նորվեգիա	0.33	0.31	0.29
17	Պորտուգալիա	0.35	0.355	0.36
18	Իսպանիա	0.43	0.39	0.35
19	Շվեդիա	0.404	0.4	0.396
20	Շվեյցարիա	0.436	0.44	0.444
21	Միացյալ Թագավորություն	0.66	0.68	0.7
22	Միացյալ Նահանգներ	0.6	0.625	0.65
	Միջինը	**0.414**	**0.405**	**0.397**

Աղյուսակ 18-ում բերված են Եվրամիության երկրների ԷԱՄ կանխատեսումները 2010-2020թթ.: Աղյուսակում բերված տվյալներից հետևում է, որ Եվրամիության երկրներում նույնպես նշված ժամանակահատվածի ծայրակետերի համադրության արդյունքում ԷԱՄ-ը նվազում է 0,361-ից մինչև 0,344-ը (նվազման չափը կազմել է 4,7%):

Աղյուսակ 18

Եվրամիության երկրների էներգետիկ անվտանգության կանխատեսվող մակարդակը 2010-2020թթ.

Հ/հ	Երկիրը	2010թ.	2015թ.	2020թ.
1	Ավստրիա	0.34	0.32	0.3
2	Բելգիա	0.197	0.122	0.047
3	Բուլղարիա	0.336	0.315	0.294
4	Չեխիա	0.33	0.31	0.29
5	Դանիա	0.3	0.29	0.28
6	Էստոնիա	0.27	0.255	0.24
7	Ֆինլանդիա	0.234	0.2325	0.231
8	Ֆրանսիա	0.54	0.53	0.52
9	Գերմանիա	0.62	0.65	0.68
10	Հունաստան	0.362	0.37	0.378
11	Հունգարիա	0.49	0.55	0.61
12	Իռլանդիա	0.33	0.31	0.29
13	Իտալիա	0.5	0.48	0.46
14	Լատվիա	0.39	0.405	0.42
15	Լիտվա	0.21	0.18	0.15
16	Նիդեռլանդներ	0.33	0.31	0.29
17	Լեհաստան	0.07	0.05	0.01
18	Պորտուգալիա	0.35	0.355	0.36
19	Ռումինիա	0.14	0.115	0.09
20	Սլովակիա	0.39	0.405	0.42
21	Սլովենիա	0.436	0.44	0.444
22	Իսպանիա	0.43	0.39	0.35
23	Շվեդիա	0.404	0.4	0.396
24	Միացյալ Թագավորություն	0.66	0.68	0.7
	Միջինը	**0.361**	**0.353**	**0.344**

Ի տարբերություն ՏՀԶԿ և Եվրամիության երկրների ՆԱԵԿ երկրներում 2010-2020թթ. ԷԱՄ-ը աճելու է 2010թ. 0,308-ից հասնելով 0,328-ի (աճը՝ 6,5%), ինչը ներկայացված է *Աղյուսակ 19-ում:*

Մեր կողմից կատարված հաշվարկների հիման վրա կանխատեսվել են ԱՊՀ երկրների ԷԱՄ ցուցանիշները 2010, 2015 և 2020թթ. համար (*Աղյուսակ 20*): Ինչպես երևում է աղյուսակից, ԱՊՀ երկրներում ԷԱՄ-ը առաջիկայում նվազելու է. 2020թ. 2010թ. համեմատ նվազման չափը կազմելու է շուրջ 20%:

Աղյուսակ 19

ՆԱԵԿ երկրների էներգետիկ անվտանգության կանխատեսվող մակարդակը 2010-2020թթ.

Հ/հ	Երկիրը	2010թ.	2015թ.	2020թ.
1	Ալժիր	0.13	0.08	0.03
2	Էկվադոր	0.27	0.2975	0.325
3	Գաբոն	0.308	0.3025	0.297
4	Ինդոնեզիա	0.38	0.37	0.36
5	Իրան	0.405	0.403	0.402
6	Իրաք	0.1	0.085	0.07
7	Քուվեյթ	0.31	0.325	0.34
8	Լիբիա	0.27	0.2975	0.325
9	Նիգերիա	0.458	0.5075	0.557
10	Սաուդյան Արաբիա	0.506	0.55	0.594
11	Արաբական Միացյալ Էմիրություններ	0.33	0.35	0.37
12	Վենեսուելա	0.236	0.2525	0.269
	Միջինը	**0.308**	**0.318**	**0.328**

Աղյուսակ 20

ԱՊՀ երկրների էներգետիկ անվտանգության մակարդակը 2010-2020թթ.

Երկրները	2010թ.	2015թ.	2020թ.
Հայաստան	0,330	0,349	0,369
Ադրբեջան	0,125	0,091	0,057
Բելառուս	0,227	0,177	0,128
Վրաստան	0,188	0,127	0,066
Ղազախստան	0,251	0,205	0,159
Ղրղզստան	0,236	0,254	0,272
Մոլդովա	0,129	0,054	0,01
Ռուսաստան	0,434	0,438	0,443
Տաջիկստան	0,224	0,239	0,254
Թուրքմենստան	0,132	0,123	0,114
Ուկրաինա	0,319	0,269	0,219
Ուզբեկստան	0,095	0,075	0,055
Միջինը	**0,224**	**0,200**	**0,179**
Աշխարհի միջինը	**0,304**	**0,297**	**0,290**

Ինչպես երևում է *Գծապատկեր 11-ից,* 2015թ. համար կատարված կանխատեսումների համաձայն, ԱՊՀ անդամ երկրների շարքում էներգետիկ անվտանգության առումով անվտանգ երկիր չի լինելու, իսկ վտանգավոր խմբում գտնվող երկրներն են Տաջիկստանը, Թուրքմենստանը, Ուզբեկստանը, Բելա-

ռուսը, Վրաստանը, Մոլդովան, Ղազախստանը, Ադրբեջանը: Էներգետիկ անվտանգության առումով միջին անվտանգ երկրների շարքին Ռուսաստանի կողքին ըստ կանխատեսման պետք է լինեն նաև Հայաստանը, Ուկրաինան և Ղրղզստանը: Էներգետիկ առումով անվտանգ երկրների մասնաբաժինը ԱՊՀ անդամ երկրների ընդհանուր թվի մեջ 2005թ. նկատմամբ չի փոխվելու և մնալու է նույնը՝ 0%, միջին անվտանգ երկրների մասնաբաժինը կազմում է 25%, իսկ էներգետիկ անվտանգության առումով վտանգավոր երկրների մասնաբաժինը նվազելու և կազմելու է 75%:

Գծապատկեր 11

ԱՊՀ երկրների էներգետիկ անվտանգության մակարդակը 2015թ.



ԱՊՀ երկրների համար միջին ԷԱՄ-ը ևս նվազելու է 2005թ. նկատմամբ և կազմելու է 0,2, ինչը նշանակում է, որ ԱՊՀ երկրները 2015թ. համարվելու են էներգետիկ անվտանգության առումով վտանգավոր խմբում գտնվող:

Նույն տրամաբանությունը պահպանվում է նաև 2020թ. համար արված կանխատեսումներում:

2020թ. համար արված կանխատեսումները ցույց են տալիս (տե՛ս *Գծապատկեր 12*), որ ԱՊՀ անդամ երկրների շարքում էներգետիկ առումով անվտանգ երկիր չկա, իսկ վտանգավոր խմբում գտնվող երկրներն են Թուրքմենստանը, Ուզբեկստանը, Բելառուսը, Վրաստանը, Մոլդովան, Ղազախստանը, Ադրբեջանը, Ուկրաինան: Էներգետիկ առումով միջին անվտանգ երկրների շարքում Ռուսաստանի կողքին, ըստ կանխատեսման, Հայաստանը, Ղրղզստանն ու Տաջիկստանն են: Էներգետիկ առումով անվտանգ երկրների

մասնաբաժինը ԱՊՀ անդամ երկրների ընդհանուր թվի մեջ 2015թ. նկատմամբ չի փոխվելու և մնալու է նույնը՝ 0%, միջին անվտանգ երկրների մասնաբաժինը մնալու է անփոփոխ՝ կազմելով 25%, իսկ էներգետիկ առումով վտանգավոր երկրների մասնաբաժինը կազմելու է 75%:

Գծապատկեր 12

ԱՊՀ երկրների էներգետիկ անվտանգության մակարդակը 2020թ.



ԱՊՀ երկրների համար միջին ԷԱՄ-ը 2020թ. նվազելու է 2015թ. նկատմամբ և կազմելու է 0,179, ինչը նշանակում է, որ ԱՊՀ երկրները համարվում են էներգետիկ անվտանգության առումով վտանգավոր:

Հարավկովկասյան տարածաշրջանի երկրների համար արված կանխատեսումները մոտ են ԱՊՀ երկրների համար կատարված կանխատեսումների տրամաբանությանը (տե՛ս *Աղյուսակ 21*):

Աղյուսակ 21

Հարավկովկասյան տարածաշրջանի երկրների էներգետիկ անվտանգության մակարդակը 2010-2020թթ.

Երկրները	2010թ.	2015թ.	2020թ.
Հայաստան	0,330	0,349	0,369
Ադրբեջան	0,125	0,091	0,057
Վրաստան	0,188	0,127	0,066
Իրան	0,405	0,404	0,402
Թուրքիա	0,302	0,315	0,329
Միջինը	**0,270**	**0,257**	**0,245**
Աշխարհի միջինը	**0,304**	**0,297**	**0,290**

Ինչպես երևում է *Գծապատկեր 13-ից,* ըստ կանխատեսումների, Հարավային Կովկասի տարածաշրջանի երկրներում էներգետիկ առումով անվտանգ երկրներ չկան, էներգետիկ առումով միջին անվտանգության երկրները Իրանը, Հայաստանն ու Թուրքիան են, իսկ վտանգավոր խմբում գտնվող երկրներն են Ադրբեջանը և Վրաստանը:

Գծապատկեր 13

Հարավկովկասյան տարածաշրջանի երկրների էներգետիկ անվտանգության մակարդակը 2015թ.



Հարավկովկասյան տարածաշրջանի երկրների միջին ԷԱՄ-ը 2005թ. համեմատ նվազելու է՝ կազմելով 0,25, ինչը նշանակում է, որ նշված տարածաշրջանի երկրները կարելի է համարել էներգետիկ տեսանկյունից միջին անվտանգություն ունեցող երկրներ:

Գծապատկեր 14-ում բերված կանխատեսումներով 2020թ. Հարավկովկասյան տարածաշրջանի երկրներում էներգետիկ առումով անվտանգ երկրներ չեն լինելու, անվտանգության միջին մակարդակ ունեցող երկրներն են լինելու Իրանը, Հայաստանը և Թուրքիան, իսկ վտանգավոր խմբում կհայտնվեն երկուսը՝ Ադրբեջանն ու Վրաստանը:

Հարավկովկասյան տարածաշրջանի երկրների միջին ԷԱՄ-ը 2015թ. համեմատ նվազելու է՝ կազմելով 0,24, ինչը նշանակում է, որ նշված տարածաշրջանի երկրների կարգավիճակը փոխվելու է՝ դառնալով էներգետիկ անվտանգության տեսանկյունից վտանգավոր:

Կանխատեսումները ցույց են տալիս, որ տարածաշրջանում, երկարաժամկետ հեռանկարում, էներգետիկ անվտանգության առումով հեռանկարային երկրներ են համարվում Հայաստանը, Թուրքիան և Իրանը, իսկ ԱՊՀ երկրների շրջանակում՝ Հայաստանն ու Ռուսաստանը:

Գծապատկեր 14

Հարավկովկասյան տարածաշրջանի երկրների էներգետիկ անվտանգության մակարդակը 2020թ.



Աղյուսակ 22

Աշխարհի 124 երկրների, ՏՀԶԿ, Եվրամիության, ՆԱԵԿ, ԱՊՀ և Հարավկովկասյան տարածաշրջանի երկրների էներգետիկ անվտանգության մակարդակի միջին արժեքները 1990-2005թթ. և մինչև 2020թ. ընկած ժամանակահատվածում

Երկրները	1990թ.	2005թ.	2010թ.	2015թ.	2020թ.
Աշխարհ (124 երկրներ)	0,336	0,313	0,304	0,297	0,290
ՏՀԶԿ	0,446	0,425	0,414	0,405	0,397
Եվրամիություն	0,409	0,374	0,361	0,353	0,344
ՆԱԵԿ	0,270	0,303	0,308	0,318	0,328
ԱՊՀ	0,312	0,226	0,224	0,200	0,179
Հարավկովկասյան տարածաշրջանի երկրներ	0,316	0,271	0,270	0,257	0,245
Ամենաանվտանգ 10 երկրներ	0,558	0,543	0,557	0,573	0,596
Ամենավտանգավոր 10 երկրներ	0,142	0,143	0,111	0,069	0,028

Աղյուսակ 22-ում ամփոփված են դիտարկվող նախորդ ժամանակահատվածների համար հաշվարկված ԷԱՄ ցուցանիշները, ինչպես նաև ներկայացված են այդ ցուցանիշի վերաբերյալ մեր կանխատեսումները 2010թ., 2015թ. և 2020թ. համար: Այսպես, 1990թ. մեր կողմից դիտարկվող տարածաշրջանները էներգետիկ անվտանգության տեսանկյունից ունեն անվտանգության միջին աստիճան: Նույն վիճակը նկատվել է նաև 2005թ., բացառությամբ ԱՊՀ երկրների, որտեղ էներգետիկ անվտանգության մակարդակը նվազել է՝ հայտնվե-

լով վտանգավորության գոտում: Սակայն պետք է նշել, որ բոլոր դիտարկվող տարածաշրջաններում գրանցվել է ԷԱՄ նվազում, բացի ՆԱԵԿ երկրներից: Հատկապես տատանումները զգալի են ԱՊՀ և Հարավկովկասյան տարածաշրջանի երկրներում: Մինչև 2020թ. ընկած ժամանակահատվածի կանխատեսումները ևս հուսադրող չեն՝ առանձնապես ԱՊՀ և Հարավկովկասյան տարածաշրջանի երկրների համար, քանի որ ակնհայտ է ԷԱՄ նվազման միտումը: Այլ կերպ ասած՝ աշխարհում և առանձին տարածաշրջաններում մինչև 2020թ. ընկած ժամանակահատվածում էներգետիկ անվտանգության մակարդակը նվազելու է:

Ամփոփելով վերլուծությունը՝ կարող ենք փաստել, որ 1990թ. համեմատ աշխարհի 124 երկրներում ԷԱՄ տեսանկյունից նկատվում է անկում, և այդ տեմպը պահպանվում է նաև երկարաժամկետ կանխատեսումներում: Բացի ամփոփ ցուցանիշից, նկատվում է էներգետիկ անվտանգությունն ապահովող առանձին ցուցանիշների անկման միտում: Մեր կարծիքով, այդ երևույթի պատճառն այն է, որ 1990-ական թվականներից սկսած՝ փոխվել է համաշխարհային տնտեսության կառուցվածքը, այն ավելի է կտրվել իրական տնտեսությունից, և նոր տնտեսական կառուցվածքի մեջ կողմնորոշիչ գործոններ են դարձել ֆինանսական նորարարությունները: Ասվածի համատեքստում կարելի է պնդել, որ աշխարհում 1990-ական թվականներից սկսած՝ աստիճանաբար նվազում է երկրների էներգետիկ անվտանգությունն ապահովող գործոնների որակը: Ուստի, աշխարհում առկա է էներգետիկ համակարգերի անվտանգությունն ապահովող գործոնների ցուցանիշային անկումով պայմանավորված ճգնաժամ, որն արագ տեմպերով խորանում է, և երկարաժամկետ հեռանկարում արված կանխատեսումները դրական արդյունքների չեն բերելու: Կարծում ենք, որ անհրաժեշտ է պետությունների տարածաշրջանային միավորումների մասշտաբով համապատասխան պետական մարմինների կողմից նախաձեռնել և վերանայել էներգետիկայի ոլորտի զարգացման ռազմավարությունները՝ դիտարկելով դրանք հեռանկարային էներգետիկ անվտանգության համատեքստում, և ձեռնարկել ԷԱՄ-ը բարձրացնելու բոլոր անհրաժեշտ միջոցները:

Մայիս, 2009թ.

Աղբյուրներ և գրականություն

1. Transition report 2008. Growth in transition. European Bank for Reconstruction and Development, 2008, 212p.
2. "World Development Indicators 2004", "World Development Indicators 2006", "World Development Indicators 2007", "World Development Indicators 2008" ժողովածուներ, Համաշխարհային բանկի հրապարակումները:
3. *Левин Д., Сефан Д., Кребиль Т., Беренсон М.,* "Статистика для менеджеров", М., 2005г., 1310 стр.
4. *Куфель Т.,* "Эконометрика", М., 2007г.
5. Eviews 4 User's guide, Quantitive Micro Software, LLC, 2001.

СВОДНЫЙ (ИНТЕГРАЛЬНЫЙ) ПОКАЗАТЕЛЬ ОЦЕНКИ УРОВНЯ ЭНЕРГЕТИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ И ЕГО ПРОГНОЗИРОВАНИЕ

Карен Карапетян

Резюме

Задача обеспечения энергетической безопасности актуальна во всем мире, где стремительно растет потребность в энергоресурсах и в то же время обостряется проблема их нехватки. Такие тенденции не обошли и Армению, которая рассматривает обеспечение своей энергетической безопасности в контексте важнейшей составляющей национальной безопасности.

Энергетическая безопасность представляется как разностороннее, сложное и многослойное понятие. Чтобы понять, как следует управлять процессом обеспечения энергетической безопасности, необходимо сначала попытаться оценить ее, что, в свою очередь, также сложный и неоднозначный процесс. Сложность задачи связана в первую очередь с методологией оценки. Несмотря на то, что существует очень большой объем информации об отдельных показателях разработки энергоресурсов, производства, использования электроэнергии, показателях эффективности и коммерциализации отраслей инфраструктуры, которые публикуются ежегодно рядом международных организаций и специализирующихся по данным проблемам компаний, тем не менее, эти показатели никак не коррелируются с понятием уровня энергетической безопасности. Можно также сделать предположение о том, что такой связи вообще не существует.

Несмотря на то, что ни одно обсуждение не проходит без рассмотрения проблем, связанных с энергетической независимостью и энергетической безопасностью, существует слабое представление об уровне и методике их оценки.

С целью понять и решить данную задачу в статье разработана и применена методика определения сводного (интегрального) показателя оценки уровня энергетической безопасности. Данная методика применима для всех стран, она позволяет также проводить сравнительный анализ среди стран, объединенных в экономические и региональные союзы, а также прогнозировать показатели энергетической безопасности на базе имеющихся исходных материалов. Методологической основой исследования стал ряд подходов к оценке энергетической безопасности, описанных в специальной литературе. Результаты нашего исследования относительно уровня энергетической безопасности базируются на показателях, которые рассчитываются международными организациями, а прогнозы проведены с использованием выбранной нами методики.

Автор не претендует на то, что данное исследование – единственно верное направление оценки уровня энергетической безопасности, поскольку ряд факторов, характеризующих уровень экономического развития страны, а также социальные, экологические аспекты также имеют большое влияние на энергетическую безопасность. Однако в рамках данной статьи учет всех указанных факторов не представляется реальной задачей.

«ՆԱԲՈՒԿԿՈ» ԳԱԶԱՏԱՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Սնակ Սարուխանյան

«Նաբուկկո» գազատարը ամենահավակնոտ էներգետիկ նախագծերից է։ Այն ենթադրում է խոշոր գազատար ցանցի կառուցում Կենտրոնական Ասիայից մինչև Իրան ու Ադրբեջան, որի միջոցով ԵՄ երկրներին կարող է մատակարարվել տարեկան մինչև 80 մլրդ մ^3 բնական գազ։

Հոդվածում քննարկվում են այդ նախագծի հնարավոր առնչությունները ՀՀ-ի հետ։

2009թ. ապրիլը և մայիսը բավական հարուստ էին իրադարձություններով՝ կապված նոր խոշոր էներգետիկ նախագծերի հետ։ Ապրիլի 24-25-ին Սոֆիայում կայացած «Բնական գազը Եվրոպայի համար. անվտանգություն և գործընկերություն» գագաթաժողովը դրեց Եվրոպայի համար ռազմավարական համարվող «Նաբուկկո» գազատարի նախագծի իրականացման առաջին իրական հիմքերը։ Իսկ մայիսի 8-ին Պրահայում, ԵՄ «Հարավային միջանցք. նոր մետաքսե ճանապարհ» գագաթաժողովում Ադրբեջանի, Վրաստանի, Թուրքիայի և Եգիպտոսի ներկայացուցիչները ստորագրեցին համատեղ հռչակագիր «Նաբուկկո» գազատարի շինարարության վերաբերյալ։

Սույն հռչակագրի ստորագրումը ՀՀ-ի համար հետաքրքրություն է ներկայացնում մի քանի պատճառով։

Նախ՝ գազատարի նախագիծն իրականացվում է մեր տարածաշրջանում և կստեղծի նոր ենթակառուցվածքային առնչություններ դեպի եվրոպական շուկա կասպյան և իրանական գազի արտահանման համար։

Երկրորդ՝ գազատարն անմիջականորեն կապված է տարածաշրջանային քաղաքական հարաբերությունների հետ, որոնք, անկախ այն բանից՝ անցնո՞ւմ է գազատարը ՀՀ տարածքով, թե՞ ոչ, շոշափում են մեր երկրի շահերը։

Երրորդ՝ հայ-թուրքական երկխոսության կարգավորման և Լեռնային Ղարաբաղի շուրջ բանակցային գործընթացների ակտիվացման պայմաններում կարող է տպավորություն ստեղծվել, թե հնարավոր է, որ «Նաբուկկոն» անցնի ՀՀ տարածքով։

Մեր կարծիքով՝ վերոնշյալ բոլոր խնդիրների, այդ թվում և ՀՀ-ի համար

ամենակարևոր՝ վերջին խնդրի դիտարկման համար անհրաժեշտ է անդրադառնալ «Նաբուկկո» գազատարի էությանը, ինչպես նաև Պրահայում ստորագրված հռչակագրի ստորագրմանը:

1. «Նաբուկկոյի» որոշակիությունն ու անորոշությունը

Մի բանում «Նաբուկկոն» միանշանակորեն որոշակի է, և դա այն է, որ նախագիծն ուղղված է Ռուսաստանի՝ որպես Եվրոպային հիմնական բնական գազի մատակարարի, դերի նվազմանը: Սա է, կարելի է ասել, նախագծի հիմնական և գրեթե միակ նպատակը:

Գազատարի անցկացման՝ 2003-ին ծագած գաղափարը սերտորեն կապված էր էներգափոխադրումների երկու այլ խոշոր նախագծերի՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի և Հարավկովկասյան գազատարի (Բաքու-Թբիլիսի-Էրզրում) իրականացման տրամաբանության ու ոգու հետ: Այս երկու նախագծերը կոչված էին Ռուսաստանի տարածքը շրջանցող այլընտրանքային երթուղի ստեղծել կասպյան նավթը և գազը համաշխարհային շուկա ուղղելու համար: Այստեղ հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ նոր խողովակաշարերը ոչ մի կերպ չէին կարող և չեն կարող ազդել միջազգային էներգետիկ հաշվեկշռի վրա, դրանք որևէ կերպ չեն ենթադրում նավթի և գազի արդյունահանման կամ արտահանման ծավալների աճ: Բաքու-Թբիլիսի-Ջեյհանը և Հարավկովկասյան գազատարը ստեղծված են բացառապես ածխաջրածինների մատակարարման ուղիների դիվերսիֆիկացման նպատակով: Ադրբեջանական նավթը և կենտրոնասիական ածխաջրածինները հեշտությամբ էին հայտնվում և այսօր էլ կարող են հայտնվել սպառման համաշխարհային շուկաներում առանց նոր խողովակաշարերի, բայց Ռուսաստանի տարածքով, որի միջազգային և տարածաշրջանային ազդեցության նվազմանն էլ հենց պետք է հասնեին Բաքու-Թբիլիսի-Ջեյհանը և Հարավկովկասյան գազատարը: Այս տրամաբանությունը, մեկ առանձնահատկությամբ, դրված է նաև «Նաբուկկոյի» հիմքում: Իսկ «Նաբուկկոյի» այդ միակ առանձնահատկությունն այն է, որ ի տարբերություն Հարավային Կովկասում կառուցված նոր խողովակաշարերի, այն դուրս է գալիս դեպի Իրանի նոր, խոշոր և չյուրացված գազահանքավայրեր: Բնական գազի պաշարներով աշխարհում 2-րդ տեղը գրավող Իրանն առայժմ զգալի ծավալով գազ չի արտահանում, իսկ Հայաստանի Հանրապետություն և Թուրքիա ձգվող գազամուղները դեռ չեն ազդում ոչ համաշխարհային էներգետիկ հաշվեկշռի, ոչ ԵՄ էներգետիկ անվտանգության վրա:

Նման պայմաններում «Նաբուկկոն» կարող էր դառնալ իրական և նշանակալի նախագիծ, եթե գազատարում «հայտնվի» իրանական գազը: Բայց (և դա տարածաշրջանային բոլոր էներգետիկ նախագծերի հիմնական խնդիրն է) «Նաբուկկոն» ոչ միայն պարզապես էներգետիկ, այլ նաև քաղաքական նախա-

գիծ է: Իսկ քաղաքական հարաբերությունների զարգացումը տարածաշրջանում, առճակատման խորացումը Իրանի և ԱՄՆ-ի հարաբերություններում հարկադրեցին արդեն 2004թ. բացառել Իրանը «Նաբուկկոյի» գերակայություններից: Արդյունքում՝ արդեն 2004-ին «Նաբուկկոն» նախագիծ էր, որը կողմնորոշված էր բնական գազ ստանալու Ադրբեջանից, Կենտրոնական Ասիայից (այդ նպատակի համար պետք է կառուցվեր Անդրկասպյան գազամուղը), Եգիպտոսից և Իրաքից: 2005թ. արդեն Իրաքն է դուրս մնում նախագծից, քանի որ այդ երկրում ծայր առած քաղաքացիական պատերազմը ցույց տվեց երկրի՝ որպես երկարատև էներգետիկ գործընկերոջ, անհուսալիությունը: Հաջորդ երկու տարիներին նախագիծն ակտիվորեն քննարկում էին Կենտրոնական Ասիայում եվրոպական արտաքին քաղաքականության ակտիվացման համատեքստում: Թուրքմենբաշիի մահը և Թուրքմենստանի նոր ղեկավարի ընտրությունը հույս ստեղծեցին, որ այդ երկիրը շուտով կարող է միանալ նախագծին: 2008-ին ակտիվացան Բաքվի և Աշգաբադի շփումները, Թուրքմենստանի նախագահն առաջին անգամ այցելեց Ադրբեջան: Դա, հավանաբար, պատրանքներ ծնեց, թե Անդրկասպյան գազատարի նախագիծը, առանց որի թուրքմենական գազը Ադրբեջանում և «Նաբուկկոյում» հայտնվել չի կարող, շուտով կիրականանա: Բայց հետագա իրողությունները ցույց տվեցին, որ ԵՄ-ը և ԱՄՆ-ը Կենտրոնական Ասիայի ուղղությամբ ճեղքման չեն հասնի:

Անցյալ տարի Իրանը կրկին «վերադարձավ «Նաբուկկո» ծրագիր: Բ.Օբամայի՝ ԱՄՆ նախագահ ընտրվելը և նրա հայտարարած՝ Թեհրանի հետ հարաբերությունների կարգավորման ուղեգիծը քաղաքական ազդանշան հանդիսացան այն բանի, որ Թեհրանի հետ կարելի է կրկին բանակցություններ սկսել «Նաբուկկոյի» վերաբերյալ: 2009թ. սկզբից Թուրքիան, հանձին վարչապետի, սկսեց ակտիվորեն լոբբավորել Իրանի միացումը «Նաբուկկոյին»:

Վերջին ամիսների զարգացումները Իրանի և Թուրքիայի հարաբերություններում խոսում են այն մասին, որ, հավանաբար, Թուրքիայի տարածքը և, մասնավորապես, «Նաբուկկո» գազատարն Իրանի կողմից կօգտագործվի գազը ԵՄ արտահանելու նպատակով: Ակնհայտ է, որ վերջին շրջանում Թուրքիան փորձում է հատուկ ընդգծել Իրանի դերը Եվրոպայի էներգետիկ անվտանգության ապահովման հարցում: Հունվարի 13-ին ելույթ ունենալով Բրյուսելի Եվրոպական քաղաքականության կենտրոնում՝ Թուրքիայի վարչապետ Ռ.Էրդողանը հայտարարեց, որ «Նաբուկկո» նախագիծը կարող է իմաստ ունենալ միայն այն դեպքում, եթե դրանով գազ մղվի Եվրոպա ոչ միայն Ղազախստանից, Թուրքմենստանից և Ադրբեջանից, այլև Իրանից: Թուրք-իրանական էներգետիկ համագործակցության ակտիվացման մասին քննարկումներն սկսվել են դեռևս տարեսկզբին, իսկ դրանց համար հիմք է հանդիսացել Իրանի

խորհրդարանի խոսնակ Ալի Լարիջանիի այցն Անկարա, որի արդյունքում Իրանի և Թուրքիայի էներգետիկայի նախարարներին պաշտոնական հանձնարարական է տրվել՝ ակտիվացնել բանակցությունները գազի ոլորտում համագործակցության խորացման և ընդհանուր նախագծերի իրականացման վերաբերյալ: Դեռևս 2001թ. կառուցված Թավրիզ-Էրզրում գազատարը բավական լավ հիմք է ստեղծում «Նաբուկկո» նախագծին Իրանի միանալու համար:

Այս գազատարով Իրանից Թուրքիա վերջին տարիների ընթացքում տարեկան արտահանվել է միջինը 8 մլրդ մ^3 գազ, այն պայմաններում, երբ գազատարի հնարավորությունները թույլ են տալիս եռակի ավելացնել արտահանվող գազի ծավալները:

Հարավային Կովկասում օգոստոսին տեղի ունեցած իրադարձություններից հետո, երբ հասկանալի դարձավ այն, որ Վրաստանը՝ որպես էներգակիրների տարանցիկ երկիր, անհուսալի է, Հարավկովկասյան գազամուղին *(Բաքու-Թբիլիսի-Էրզրում)* Թուրքմենստանի և Ղազախստանի միանալու հնարավորությունը կտրուկ նվազել է:

Այսօր Ադրբեջանը, փաստորեն, միակ մերձկասպյան երկիրն է, որը պատրաստ է դառնալ «Նաբուկկո» նախագծի մասնակիցը՝ ոչ թե թղթի վրա, այլ գործնականորեն: Ոչ Թուրքմենստանը, ոչ Ղազախստանը նախագծին միանալու ոչ մի քայլ չեն արել և մոտակա տարիներին դժվար թե անեն: Այս պայմաններում Անկարայի համար հասկանալի է դարձել, որ «Նաբուկկո» նախագծի իրականացման և անհրաժեշտ ֆինանսական ու քաղաքական դիվիդենդներ ստանալու համար անհրաժեշտ է այս ծրագրում ներառել նաև բնական գազի զգալի պաշարներ ունեցող Իրանին: Նման գիտակցում կա նաև Եվրոպայում՝ քաղաքական և տնտեսական ակտորների մակարդակով: Բուդապեշտյան գագաթաժողովին Իրանի հետ համագործակցության զարգացման անհրաժեշտության մասին հայտարարեցին «Նաբուկկո» գազատարի նախագծի իրականացման աշխատանքներին ընդգրկված մասնավոր ընկերությունների ղեկավարները, այդ թվում՝ նախագծի հեղինակ և հիմնական լոբբիստ, ավստրիական *OMV Gas & Power GmbH* ընկերության փոխնախագահ Ջ.Բոգարդը:

Նշենք մի կարևոր փաստ. «Նաբուկկո» նախագծի պաշտոնական *www.nabucco-pipeline.com* կայքում 2009թ. հունվարին տեղադրվել է նախագծի նոր քարտեզը, որը ցույց է տալիս, որ գազատարի մի ճյուղը մտնում է Իրանի տարածք (տե՛ս քարտեզը):

Հիմնական դժվարությունները, որոնք կարող են առաջանալ «Նաբուկկոյին» Իրանի միանալուց, կապված են Վաշինգտոնի դիրքորոշման հետ, քանի որ ամերիկյան նոր վարչակազմը, չնայած տարբեր բնույթի վերլուծություններին, դեռևս չի մշակել և ներկայացրել սեփական «իրանական քաղաքականությունը»: Սակայն իրանա-ամերիկյան հարաբերությունների կարգավորման համար այսօր բավական լավ հիմքեր կան, մանավանդ եթե հաշվի առնենք այն դժվարությունները, որոնք Վաշինգտոնի համար կծագեն ղրղզական «Մանասից» ռազմակայանի դուրսբերման պայմաններում: Սա Կենտրոնական Ասիայում ուժերի վերադասավորում կառաջացնի, որն անմիջականորեն կազդի նաև Իրան-ԱՄՆ հարաբերությունների վրա:

Բացի վերը նշված զարգացումներից՝ կարելի է նշել նաև, որ Թուրքիայի տարածքն Իրանի համար գազը ԵՄ արտահանելու այլընտրանք չունի: Իրանական գազի համար դեպի Եվրոպա աշխարհագրական առումով ամենակարճ ճանապարհը լինելով՝ Թուրքիան իր քաղաքական աշխարհագրությամբ նույնպես ամենահարմար ճանապարհն է, քանի որ ապահովում է գազի փոխադրումը ԵՄ՝ հատելով ընդամենը 1 երկրի տարածք, ինչը չի կարելի ասել Հարավային Կովկասով անցնող ճանապարհի մասին:

Սակայն սա չի նշանակում, թե Հայաստան-Իրան գազատարը հզորացման տեղ և անհրաժեշտություն չունի և չի ունենա: ՀՀ իշխանությունների ընդունած որոշումը էներգետիկ համակարգը զարգացնելու, այդ թվում *1000-1500 մվտ* նոր ատոմակայան կառուցելու վերաբերյալ՝ վկայում է այն մասին,

որ ՀՀ-ն գնում է կարևոր էլեկտրաարտադրական հանգույցի վերածվելու ճանապարհով: Այս քաղաքականությունը կարող է հաջողություն ունենալ այն դեպքում, եթե հայ-թուրքական քաղաքական երկխոսությունը միջպետական հարաբերություններում բերի տնտեսական և, մասնավորապես, էներգետիկ ոլորտին առնչվող զարգացումների: Խոսքն առաջին հերթին վերաբերում է էլեկտրաէներգիայի արտահանմանը Թուրքիա, որի արևելյան շրջանները էլեկտրաէներգիայի բավական մեծ պահանջարկ ունեն:

Մեծ է նաև ՀՀ-ից Իրան էլեկտրաէներգիայի արտահանման հզորությունների ավելացման հնարավորությունը, սակայն իրանական շուկան ՀՀ-ի համար երկարաժամկետ տեսանկյունից չի կարելի միանշանակ առաջնային համարել, քանի որ Իրան-Արևմուտք հարաբերությունների բարելավման արդյունքում Իրանի էներգետիկ սեկտոր արտասահմանյան ներդրումների հոսքը, միջուկային ծրագրի զարգացումը, նոր ՋԷԿ-երի կառուցումը վաղ թե ուշ էներգակիրներով հարուստ Իրանը էլեկտրաէներգիայի տեսանկյունից կդարձնեն ինքնաբավ պետություն:

Փաստորեն, այսօր Իրան-Հայաստան գազատարի հզորացման հեռանկարներն ուղղակիորեն կապված են հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հեռանկարների հետ:

Եվ իսկապես, Իրանի միացումը նախագծին կարող է հիմք հանդիսանալ դրա իրագործման համար: Բայց «Նաբուկկոյի» շուրջ Թեհրանի հետ պաշտոնական մակարդակի բանակցություններ դեռ չեն սկսվել, և չի էլ կարելի պնդել, թե սկսվելով հանդերձ՝ դրանք կհանգեցնեն դրական և արագ արդյունքի: Իրանը շատ բարդ բանակցող է, և վերջին տարիների փորձը ցույց է տալիս, որ այդ երկիրը ոչ մի հարցի շուրջ արագ որոշում կայացնելու մեջ աչքի չի ընկնում: Իրան-Հայաստան գազատարի շինարարության վերաբերյալ բանակցությունները տևեցին մոտ 8 տարի, իսկ Իրան-Պակիստան-Հնդկաստան գազատարի շուրջ բանակցությունները սկսվել են 1995-ին և առայժմ, բացի հռչակագրի ստորագրումից, ոչնչի չեն հանգեցրել: Իրանի նավթի նախարարի պաշտոնական հայտարարություններն այն մասին, թե երկիրը հետաքրքրված է «Նաբուկկոյով», իրական քաղաքականության հարթությունում ոչինչ չեն նշանակում: Հետաքրքիր ու ցայտուն օրինակ. մարտի սկզբին Իրանի նավթի նախարարը հայտարարեց, թե Իրանը պատրաստ է բանակցություններ սկսել «Նաբուկկոյին» միանալու շուրջ, իսկ մարտի վերջին նույն նախարարը հայտարարեց, թե Իրանի համար ավելի առաջնահերթ է Իրան-Իրաք-Սիրիա գազատարի անցկացումը և Սիրիայում բնական գազի հեղուկացման գործարանների շինարարությունը, այն դեպքում, երբ «Նաբուկկոն» Իրանի համար առանձնապես կարևորություն չի ներկայացնում»:

2. Սոֆիայի գագաթաժողովը և «Նաբուկկոն»

Ապրիլի 24-25-ին Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում «Բնական գազը Եվրոպայի համար. հուսալիություն և գործընկերություն» գագաթաժողովը, որն անց էր կացվել Բուլղարիայի նախագահ Գ.Պիրվանովի հովանավորությամբ, դեռևս կազմակերպման ընթացքում գաղափարական որոշակիություն էր ստացել. գագաթաժողովի ընթացքում քննարկման հիմնական թեման պետք է լիներ Ռուսաստանից ԵՄ էներգետիկ կախվածության նվազումը: Սա ակնհայտ երևում էր Բուլղարիայի նախագահի՝ գագաթաժողովի կայքում զետեղված ողջույնի խոսքից, որտեղ նշվում էր բնական գազի ներկրման աղբյուրների դիվերսիֆիկացման մասին, առանց որի հնարավոր չէ ԵՄ կայուն զարգացումը: Բացի այդ, մարտ–ապրիլ ամիսների ընթացքում բուլղարա-ռուսական հարաբերություններում նկատվեցին բացասական զարգացումներ՝ կապված, հիմնականում, «Հարավային հոսք» հեռանկարային գազատարի հետ: Բուլղարիայի խորհրդարանում մի շարք պատգամավորներ երկարատև և զգայուն քննարկումներ սկսեցին այն մասին, թե ռուսական կողմը գազատարի կառուցմամբ ցանկանում է «ձեռք գցել» Բուլղարիայի գազատրանսպորտային համակարգը: Նման քննարկումները պատահական լինել չէին կարող: Ամենայն հավանականությամբ, դրանք միտված էին քար նետելու Ռուսաստանի ուղղությամբ՝ դրական տեղեկատվական և քարոզչական դաշտ ստեղծելով գալիք գագաթաժողովում բնույթով հակառուսական «Նաբուկկո» նախագծի քննարկումների համար: Բացառված չէ, որ նման զարգացումները բուլղարական քաղաքականության մեջ պայմանավորված էին ԱՄՆ նախագահ Բ.Օբամայի և Բուլղարիայի ղեկավարության բանակցություններով, որոնցում քննարկվել են նաև էներգետիկ անվտանգության հարցեր:

Ռուսաստանի վարչապետ Վ.Պուտինի՝ Սոֆիայի գագաթաժողովին չմասնակցելու որոշումը կարելի է բացատրել հենց այս գործընթացներով: Չսպասելով գագաթաժողովին, ապրիլի 21-ին Ռուսաստանը հրապարակեց «Ռազմավարական մոտեցում էներգետիկայի ոլորտում միջազգային համագործակցության իրավական բազայի մասին» փաստաթուղթը, որը հակադրվում է եվրոպական մոտեցումներին, որոնց հիմքում ընկած է գազ արտահանող և գազ տարանցող երկրների իրավասությունների սահմանափակումը՝ ի շահ գազ սպառող պետությունների: Ռուսական կողմի փաստացի դեմարշը խոր ազդեցություն թողեց Սոֆիայի գագաթաժողովի ողջ ընթացքի վրա, քանի որ այն անցավ գազ արտահանող հիմնական պետության բարձրաստիճան ղեկավարության բացակայության պայմաններում (գագաթաժողովին Ռուսաստանը ներկայացնող էներգետիկայի նախարար Ս.Շմատկոյի կարճ

ելույթը հիմնականում քննադատական էր)։

Այս գործոնն իր հետքը թողեց ոչ միայն գագաթաժողովի ընթացքի, այլ նաև արդյունքների վրա։ Մոսկվայի կողմից բացասական և կոշտ գնահատականներ ստանալով՝ Բուլղարիայի նախագահ Գ.Պիրվանովն առաջարկեց գագաթաժողովի հռչակագրում ամրագրել ոչ թե «Նաբուկկոյի», այլ «բոլոր նոր նախագծերի», այդ թվում նաև «Հարավային հոսքի», գերակա կարևորությունը ԵՄ-ի համար։ Բուլղարիայի նախագահն իր մամլո ասուլիսի ժամանակ ընդգծեց նաև, որ «Նաբուկկոն» այլընտրանք չէ «Հարավային հոսքին», և իր երկիրը փորձելու է կյանքի կոչել այս երկու նախագծերը միաժամանակ։

Միևնույն ժամանակ, Սոֆիայի գագաթաժողովը ի հայտ բերեց մի շարք այլ հակասություններ, որոնք առաջ են եկել էներգետիկայի ոլորտում միջազգային և տարածաշրջանային համագործակցության մակարդակներում։ Առաջին հերթին աչքի է ընկնում Վրաստանի դիրքորոշումը, որը գագաթաժողովին արտահայտեց երկրի վարչապետը։ Պաշտոնական Թբիլիսիի հիմնական առաջարկները կապված էին ոչ թե «Նաբուկկոյի», այլ «Սպիտակ հոսք» գազատարի կառուցման հետ, որը պետք է Կասպիցից Ադրբեջանի, Վրաստանի տարածքով և Սև ծովի հատակով ձգվի դեպի Ուկրաինա և Եվրոպա։ Վրաստանի մոտեցումները կարելի է ավելի քան տարօրինակ համարել ոչ թե նախագծի անիրատեսականության, այլ այն պատճառով, որ «Սպիտակ հոսքն» ուղղակիորեն հակասում է բուն «Նաբուկկո» նախագծին և Բաքու–Թբիլիսի–Էրզրում գազատարի ողջ իմաստին։

Չնայած Ադրբեջանի մասնակցությանը գագաթաժողովին՝ Բաքվի իրական էներգետիկ շահերը և էներգետիկ քաղաքականությունը նույնպես կարևոր քննարկումների տեղիք են տալիս։ Նախ՝ Բաքուն դեռևս շարունակում է բանակցությունները Մոսկվայի հետ գազի արտահանման ողջ ծավալները Ռուսաստանին վաճառելու վերաբերյալ։ Երկրորդ՝ «Նաբուկկո» գազատարը լինելու է Ադրբեջանից անկախ։ Գազատարի կառուցման և սեփականատերերի մեջ ոչ մի ադրբեջանական ընկերություն ընդգրկված չէ, ի տարբերություն Բաքու–Ջեյհան և Բաքու-Էրզրում խողովակաշարերի։ «Նաբուկկոն» թեև Ադրբեջանի համար ձեռնտու նախագիծ է, սակայն եթե Բաքուն սկսի խաղալ ԵՄ-ի կողմից թելադրվող կանոններով, ապա կարող է կորցնել կարևոր քաղաքական լծակներ, որոնք ունեն էներգիա արտահանող պետությունները։ Երրորդ՝ դեռևս անհասկանալի է, թե հայ-թուրքական հարաբերությունների հաստատման գործընթացը ինչպես կազդի Բաքվի և Անկարայի հարաբերությունների վրա։ Համաձայն բրիտանական հեղինակավոր *«The Daily Telegraph»-ի* մայիսի 7-ի «Էներգետիկ անվտանգության հետ կապված մտահոգություններ հայ-

թուրքական բանակցություններից» հոդվածի, Բաքուն կարող է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ֆոնին հայացքը դեպի Մոսկվա թեքել, ինչը կվտանգի «Նաբուկկոյի» ապագան:

3. Հոչակագիր շինարարության մասին

Մայիսի 8-ին Պրահայում, ԵՄ «Հարավային միջանցք. նոր մետաքսե ճանապարհ» գագաթաժողովում Ադրբեջանի, Վրաստանի, Թուրքիայի և Եգիպտոսի ներկայացուցիչները ստորագրեցին համատեղ հռչակագիր «Նաբուկկո» գազատարի շինարարության վերաբերյալ: Անդրադառնալով Պրահայում ստորագրված փաստաթղթին՝ կարող ենք արձանագրել, որ «Նաբուկկոյի» շինարարության մասին հռչակագրի տակ չկան ոչ Իրանի, ոչ Ղազախստանի, ոչ Թուրքմենստանի, ոչ Ուզբեկստանի ստորագրությունները: Հռչակագիրն ստորագրած գազարդյունահանող երկու պետություններ՝ Ադրբեջանը և Եգիպտոսը, էական դերակատարություն գազի համաշխարհային արդյունահանման գործում չունեն: Եվ ոչ միայն: Ադրբեջանի ստորագրությունը հռչակագրի տակ ևս մեկ կարևոր առանձնահատկություն ունի: Բանն այն է, որ Ադրբեջանից դեպի Թուրքիա արդեն կառուցված է Հարավկովկասյան գազատարը, որն ադրբեջանական գազը մինչև Թուրքիա է հասցնում առանց էական դժվարությունների: Տարեկան 25-30 մլրդ մ^3 թողունակություն ունենալով՝ Հարավկովկասյան գազատարն առանց որևէ խնդրի կկարողանա ադրբեջանական նավթը մղել Թուրքիա: Սրանից հետևում է, որ Ադրբեջանի ներկայացուցչի ստորագրությունը հռչակագրի տակ և «Նաբուկկոյին» Բաքվի միանալը կոնկրետ նոր ու էական ոչինչ ոչ նախագծին, ոչ էլ եվրոպական էներգետիկ անվտանգությանը չեն տա: Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ մի քանի եզրահանգում անենք.

- «Նաբուկկոն», ընդհանուր առմամբ, իր քաղաքական էությամբ հակառուսական նախագիծ է,
- նախագիծը բավական անորոշ է, վերջին տարիներին ամեն տեսակ փոփոխությունների է ենթարկվել և, հավանաբար, դեռ էլի կփոփոխվի,
- ընդհանուր առմամբ, «Նաբուկկո» նախագիծը ներկա փուլում հազիվ թե կարելի կլինի հաջող անվանել, իսկ ստորագրված հռչակագիրը էական ոչինչ չի փոխի համաշխարհային էներգետիկ անվտանգության մեջ:

Բայց միևնույն ժամանակ ակնհայտ է, որ առաջիկա տարիներին նախագծին Իրանի և Կենտրոնական Ասիայի երկրների միացման լոբբավորումն ավելի է ինտենսիվանում, ինչը, բնականաբար.

- առաջ կբերի Ռուսաստանի ուժգին դիմակայությունը,
- էական խթան կհանդիսանա տարածաշրջանի քաղաքական հարաբերությունների համար,
- կշարունակի ազդել նախագծի վրա, փոխել նրա ձևը՝ գուցե նրան մեծ կոնկրետություն հաղորդելով:

4. Հայկական հեռանկարներ

Վերոշարադրյալ գործոններն էլ հենց պետք է հիմք ընդունվեն «Նաբուկկոյին» ՀՀ-ի միանալու հեռանկարների քննարկման համար, իսկ դրանք հաշվի չառնելը չափից ավելի սուբյեկտիվ և իրականությունից կտրված է դարձնում գազատարի շինարարությանը մեր մասնակցության վերաբերյալ ամեն տեսակ կանխատեսում և նախագիծ: Եվ դա պակաս կարևոր չէ. չի կարելի գազատարին ՀՀ-ի միանալու խնդիրն ուղղակիորեն ու կոպիտ կերպով ածանցել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումից: Թուրքիայի հետ սահմանի բացումը, իսկապես, սերտորեն կապված է մեր երկրի էներգետիկական քաղաքականության ապագայի հետ: Թուրքիայի հետ միջպետական նորմալ հարաբերությունների հաստատումը դրական խթան կհանդիսանա ՀՀ էներգետիկ սեկտորի զարգացման համար: Թուրքիա էլեկտրաէներգիայի արտահանման կարգավորումը ՀՀ-ում էներգիա արտադրող հզորությունների զարգացման խոշոր նախագծերի իրագործման անհրաժեշտ հիմք կստեղծի. նոր հզոր ԱԷԿ-ի կառուցում, Հրազդանի ջերմաէլեկտրակայանի 5-րդ բլոկի կառուցման ավարտ, Երևանի ջերմաէլեկտրակայանի արդիականացում, Իրան-Հայաստան գազատարի լիարժեք կիրառություն, ՀԷԿ-ի կառուցում և այլն: Բայց խոսել այն մասին, թե ՀՀ-ն ավտոմատ կերպով կներառվի «Նաբուկկո» նախագծում, ճիշտ չէ:

Այդ նախագծին մասնակցության համար անհրաժեշտ է ուժերի հատուկ համախմբում, քանի որ զուտ աշխարհագրորեն ՀՀ-ն ամենահարմար երկիրը չէ Եվրոպա գազ արտահանելու համար: Սակայն քաղաքական ակտիվությունը և քաղաքական գործոնները, այնուամենայնիվ, կարող են խաղալ իրենց, այն էլ՝ կարևոր, դերը: Խոսքն այս դեպքում հայ-իրանական միջպետական համագործակցության և բնական գազի երթուղիների դիվերսիֆիկացման իրանական քաղաքականության մասին է: Չի բացառվում, որ հանգամանքների բերումով և ՀՀ ակտիվ քաղաքականության շնորհիվ Իրան-Հայաստան գազատարը կարող է ընդլայնվել մինչև այն ծավալների չափով, որ հնարավոր լինի իրանական գազը Թուրքիա կամ էլ Վրաստան վերարտահանել հետագայում դրա՝ «Նաբուկկոյում» հայտնվելու հեռանկարով: Կարող է թվալ, թե նման քաղաքակա-

նությունը կհակասի հայ-ռուսական ռազմավարական գործընկերության ոգուն, բայց միևնույն ժամանակ Ռուսաստանի համար, եթե Իրանն, իհարկե, որոշի միանալ «Նաբուկկոյին», կարևոր կլինի, որ իրանական գազի թեկուզև մի մասն արտահանվի հայկական գազատրանսպորտային համակարգի միջոցով, որը պատկանում է «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ին: Էլ չենք խոսում այն մասին, որ հենց այս ընկերությունն է ապահովելու Իրան-Հայաստան գազատարի թողարկային կարողության ընդլայնումը, կառուցելու նոր խողովակաշարեր, որոնք այսպես թե այնպես գտնվելու են նրա հաշվեկշռում:

Մենք կարծում ենք, որ ներկա փուլում կարելի է խոսել և մտածել «Նաբուկկո» գազատարին ՀՀ-ի միանալու հեռանկարների մասին: Բնականաբար, հնարավորություն կա, որ միանալու հեռանկարը մեզ համար երբեք էլ իրական չդառնա, բայց ակտիվ քաղաքականությունը կարող է հանգեցնել դրական արդյունքների:

ՀՀ-ն հասել է էներգետիկ համակարգի կայունության բարձր մակարդակի, ինչն արդյունք է ինչպես կառավարության, այնպես էլ հանրապետության խոշորագույն էներգետիկ ընկերության՝ «ՀայՌուսգազարդի» իրական և երկարատև աշխատանքի: Այսօր հարկավոր է պահել այդ կայունությունը, ստեղծել օտարերկրյա ներդրումների հոսքի պայմաններ և, ինչը միանգամայն իրական է, մտածել հայկական ներդրումների մասին արտասահմանի էներգետիկ ակտիվներում: Միևնույն ժամանակ, այն պայմաններում, երբ Կենտրոնական Ասիայի երկրները զրկված են համաշխարհային շուկաների հետ ուղղակի էներգափոխադրումային կապերից, իսկ Իրանը հիմնականում փակ է մնում օտարերկրյա ներդրումների համար, այդ պետություններում էներգետիկ ակտիվների ձեռքբերումը ավելի շատ է հնարավոր, քան այն ժամանակ, երբ ամեն ինչ փոխվի: Իսկ ՀՀ-ն, մեր կարծիքով, դատապարտված է ձեռք բերելու նման ակտիվներ, քանի որ առանց դրանց հանրապետության էներգետիկ համակարգի երկարատև կայունությունը կարող է հայտնվել սպառնալիքի տակ:

Հունիս, 2009թ.

ГАЗОПРОВОД «НАБУККО» И РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

Севак Саруханян

Резюме

Апрель и май месяцы 2009г. оказались довольно богатыми событиями, связанными с реализацией новых крупных энергетических проектов. Прошедший 24-25 апреля в Софии энергетический саммит «Природный газ для Европы: безопасность и партнерство» заложил первые реальные основы для осуществления считающегося для Европы стратегическим проекта газопровода «Набукко». 8-го же мая уже в Праге на саммите ЕС «Южный коридор – новый шелковый путь» представителями Азербайджана, Грузии, Турции и Египта была подписана совместная декларация по проекту строительства газопровода «Набукко».

Подписание данной декларации представляет для РА интерес по нескольким причинам.

Во-первых, сам проект газопровода будет реализован в нашем регионе и создаст новые инфраструктурные связи для экспорта каспийского и иранского газа на европейский рынок.

Во-вторых, газопровод непосредственным образом связан с политическими отношениями в регионе, которые, вне зависимости от того, проходит ли газопровод по территории РА или нет, затрагивают интересы нашей страны.

В-третьих, в условиях налаживания армяно-турецкого диалога и активизации переговорного процесса вокруг Нагорного Карабаха может сложиться впечатление, что «Набукко» имеет шансы пройти по территории РА.

ԳԼՈԲԱԼԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Արշակ Սմբատյան, Արտյոմ Տեր-Հարությունյան

Հոդվածում անդրադարձ է կատարվել գլոբալացման ժամանակակից ընկալմանը, դրա գնահատման տարբեր մոտեցումներին՝ շեշտը դնելով գործընթացի հիմնականում տնտեսական ասպեկտների վրա: Ներկայացվել են համաշխարհային գլոբալ տնտեսության ներկա իրավիճակի ընդհանուր բնութագիրը, զարգացման միտումները և ի հայտ եկած մարտահրավերները:

Անդրադարձ է կատարվել նաև արդի պայմաններում տնտեսական անվտանգության տեսական հիմնախնդիրների շուրջ տարբեր հետազոտողների մոտեցումներին: Ելնելով գլոբալացման ներկա փուլի առանձնահատկություններից և համաշխարհային տնտեսությունում ստեղծված իրողություններից՝ փորձ է արվել տնտեսական անվտանգության հիմնախնդիրները դիտարկել առկա հիմնական տեսական մոտեցումների լույսի ներքո:

«Գլոբալացում» հասկացությունը ծագել է անգլերեն *globe* (երկրագունդ) բառից և ընդգծում է այդ երևույթի համակարգաստեղծ, մոլորակային բնույթը: Հասկացության ծագումնաբանության վերաբերյալ ուսումնասիրողները տարակարծիք են. մի մասը գտնում է, որ այն, որպես հայեցակարգային հասկացություն, ներմուծվել է ամերիկացի հետազոտող Թ.Լևիտի կողմից 1983թ., մյուսներն այն կապում են ամերիկացի սոցիոլոգ Ջ.Մաքլենի անվան հետ, որը 1981թ. կոչ է արել «հասկանալ սոցիալական հարաբերությունների գլոբալացման պատմական գործընթացը և տալ դրա բացատրությունը» [1, c. 80]: Կարծիք կա նաև, որ «գլոբալացում» բառը շրջանառության մեջ է դրել անգլիացի գիտնական Ռ.Ռոբերթսոնը, որը 1983թ. *globality* (գլոբալություն) եզրն օգտագործել է «Քննարկելով գլոբալությունը» հոդվածի անվանման մեջ, իսկ ավելի ուշ՝ 1992թ., *«Globalization: Social Theory and Global Culture. (London, 1992.)»* գրքում շարադրել է իր հայեցակարգի հիմքերը: 20-րդ դարի 80-ականների վերջերից արագորեն ավելացավ այն հրապարակումների թիվը, որոնցում օգտագործվում էին «գլոբալացում», «գլոբալություն», «գլոբալիստիկա», «գլոբալ հիմնախնդիրներ» և նմանատիպ այլ հասկացություններ:

Չնայած գլոբալացման վերաբերյալ աշխատությունների պատկառելի

թվին՝ չկա «գլոբալացում» եզրի միանշանակ մեկնաբանություն: Հայտնի գերմանացի սոցիոլոգ Ու.Բեկը գրում է. «Անկասկած, գլոբալացումը վերջին տարիների վեճերի առավել շատ օգտագործվող և շահարկվող, բայց առավել քիչ պարզաբանված և, հավանաբար, ամենաանհասկանալի, մշուշապատված… բառն է, կարգախոսը, գործիքը և այդպիսին էլ կմնա մոտակա ժամանակներում» [2, c. 40]:

Արևմտաեվրոպական և ամերիկյան գիտական կենտրոններում գլոբալացման հասկացության մեկնաբանությունը հիմնականում պայմանավորված է հեղինակների գիտական-հայեցակարգային և քաղաքական դիրքորոշումներով. մեծամասնության կողմից այն ուղղակիորեն կապվում է պետություն հասկացության հետ, այսինքն՝ թե ինչ է տեղի ունենում պետության հետ: Գոյություն ունեն երեք հիմնական մոտեցումներ:

Առաջին մոտեցման կողմնակիցները գտնում են, որ պետությունը շարունակում է մնալ քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային դաշտի հիմնական դերակատարը: Եթե տնտեսական ոլորտում կարելի է առանձնացնել միտումներ, որոնք վկայում են «գլոբալ տնտեսությանը» բնորոշ նոր որակների ի հայտ գալու մասին, ապա հասարակական կյանքի մյուս ոլորտներում աշխարհն, ընդհանուր առմամբ, մնացել է այնպիսին, ինչպիսին կար, այսինքն՝ «պետականակենտրոն»:

Երկրորդ մոտեցման կողմնակիցների մոտեցումը տրամագծորեն հակադիր է առաջինին. պետությունը դանդաղ և անշեղորեն դուրս է մղվում ասպարեզից և աստիճանաբար կորցնում հասարակական կյանքի բոլոր ոլորտներում զբաղեցրած դիրքերը: Տնտեսական կյանքում նրան դուրս են մղում վերազգային կորպորացիաները և միջազգային ֆինանսական կապիտալը, մշակութային ոլորտում՝ տարբեր տեսակի ոչ պետական դերակատարները (մեդիամագնատներից մինչև առանձին խարիզմատիկ անհատներ), արտաքին քաղաքական ասպարեզում ակնառու է «սուվերենության մայրամուտը». որոշումների ընդունման կենտրոններն աստիճանաբար ազգային, պետական մակարդակներից տեղափոխվում են միջպետական և միջազգային կազմակերպությունների մակարդակ: Այսպիսով, մարդկությունը մուտք է գործում նոր՝ «գլոբալ կառավարման» և «գլոբալ հասարակության» դարաշրջան:

Երրորդ մոտեցումը կարելի է բնորոշել որպես փոխզիջումային: Դրա էությունը հանգում է հետևյալին. աշխարհում ընթանում են բավական խոր գործընթացներ, որոնց արդյունքում պետությանը զուգահեռ սկսում են ակտիվ գործել ոչ պետական դերակատարները, ինչը ենթադրում է որոշակի ճշգրտումներ հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, «պետականակենտրոնության» մոտեցումներում: Այնուամենայնիվ, «պետականակենտրոն» պարադիգմից հրաժարումը դիտվում է անժամանակ:

Պատահական չէ, որ նկարագրված երեք տեսական մոտեցումները հիմնականում համապատասխանում են երեք գաղափարական մոտեցումների՝ (նեո)լիբերալիզմի, մարքսիզմի և սոցիալ-դեմոկրատիայի արդի ընկալումներին:

Ըստ նեոլիբերալ մոտեցումների, գլոբալ տնտեսությունը (դրա հետ միասին՝ գլոբալ քաղաքականությունը և գլոբալ մշակույթը) իր հետ բերում է բարիք բոլորի համար: Մարքսիստական մոտեցման համաձայն, գլոբալացումը քարոզչական միջոց է՝ ժամանակակից կապիտալիզմը «զարդարելու» համար, որը ձեռնտու է արդյունաբերական զարգացած երկրներին և անշահավետ՝ թերզարգացածների համար: Առաջինների զարգացման համար անհրաժեշտ պայման է երկրորդների թերզարգացումը:

Այս երկու բևեռների միջև փոխզիջումային դիրքորոշում մշակողները հիմնականում գտնվում են սոցիալ-դեմոկրատների ճամբարում: Նրանց բնորոշ է վերջին տարիներին նկատվող միտումների նկատմամբ քննադատական մոտեցումը, ըստ որի՝ գլոբալացման ներկայումս առկա դրսևորումները կարող են աղետալի հետևանքներ ունենալ բոլորի, այդ թվում՝ արդյունաբերական զարգացած երկրների համար: Կապիտալի շարժունակությունը, որը բազմապատկվում է ազատ առևտրի ռեժիմի պայմաններում, կարող է բերել զարգացած երկրներից արտադրության տեղափոխմանը թերզարգացած, էժան աշխատուժ ունեցող երկրներ, ինչը կարող է հանգեցնել զարգացած երկրների «ապաինդուստրիալացմանը» [3, c. 10]:

«Գլոբալացում» եզրի ոչ միասնական ընկալման մասին է վկայում նաև դրա դիտարկումը կամ շատ նեղ, կամ շատ լայն իմաստներով: Մասնավորապես, հայտնի ֆինանսիստ Ջ.Սորոսը, գլոբալացման վերաբերյալ իր աշխատությունում գրում է. «Ես ընդունել եմ գլոբալացման բավական նեղ սահմանում. ես դրա տակ հասկանում եմ կապիտալի ազատ տեղաշարժ և ազգային տնտեսությունների աճող ենթակայություն վերազգային կորպորացիաներից» [4, c. 7]:

Սակայն, գլոբալացման այսպիսի ընկալման դեպքում արհամարհվում են դրա քաղաքական, մշակութաբանական, բնապահպանական և այլ կողմերը:

Գլոբալացման առավել լայն ընկալման կողմնակիցները դրա տակ հասկանում են ժամանակակից աշխարհի գրեթե բոլոր քիչ թե շատ նշանակալի երևույթները և գործընթացները: Այդ դեպքում բաց է մնում գլոբալացման առարկայի, նրա՝ սոցիալական այլ գլոբալ միտումներից տարբերության հարցը:

Այնուամենայնիվ, խմբավորելով և ամփոփելով տարբեր կողմնորոշումներ ունեցող հետազոտողների մոտեցումները, կարելի է առանձնացնել գլոբալացման հետևյալ բնութագրիչները.

- մարդկային կենսագործունեության տարբեր ոլորտներում երկրների և ժողովուրդների աճող փոխկապվածություն և փոխկախվածություն, որը հեռանկարում բերում է մոլորակային հանրության, ամբողջական աշխարհի ձևավորման,
- համաշխարհային ֆինանսատնտեսական տարածության, մոլորակային մասշտաբների շուկաների կայացում, առանձին տնտեսությունների միաձուլում բոլորի համար ընդհանուր կանոններ նախատեսող գլոբալ համակարգի մեջ,
- տեղեկատվական հեղափոխություն, որը բերում է նորագույն համակարգչային և մեդիատեխնոլոգիաների, գլոբալ հեռուստատեսության, ինտերնետի բազայի վրա հիմնված շփման համաշխարհային ցանցի ստեղծման,
- պետության գործառույթների փոփոխություն, ազգային սահմանների աստիճանական վերացում, թափանցիկության մեծացում և միաժամանակ վերազգային կազմակերպությունների, միավորումների դերի զգալի բարձրացում և գործունեության ոլորտների ընդլայնում,
- աշխարհի «ունիվերսալացում», եվրաատլանտյան քաղաքակրթության կողմից կուտակված լիբերալ-ժողովրդավարական համակարգերի և սոցիոմշակութային արժեքների համընդհանուր տարածում,
- գլոբալիզմի քաղաքականության և գաղափարախոսության տարածում, ձգտում օգտագործելու օբյեկտիվորեն ձևավորված և ընթացող գործընթացները սուբյեկտիվ նպատակներով՝ հանուն միաբևեռության սկզբունքներով նոր աշխարհակարգի ձևավորման:

Թվարկվածները գլոբալացման էության առավել հաճախ հանդիպող և առավել փաստարկված բնութագրիչներն են, որոնք ընդունվում և պաշտպանվում են տարբեր գիտական և քաղաքական կողմնորոշումներ ունեցող ներկայացուցիչների կողմից: Ելնելով նրանց մոտեցումներից՝ ակնհայտ են դառնում գլոբալացման ինչպես օբյեկտիվ սկիզբը, այնպես էլ նրա վրա ազդող սուբյեկտիվ գործոնները: Տարբեր փուլերում առաջնային կարող են լինել կամ օբյեկտիվ, կամ սուբյեկտիվ գործոնները, սակայն, ինչպես շատ ուսումնասիրողների, այնպես էլ մեր կարծիքով, գլոբալացման օբյեկտիվ գործոնն ունի վճռորոշ նշանակություն:

Գլոբալացման գործընթացի կարևորագույն բաղադրիչներից է տնտեսության գլոբալացումը: Այն, ինչպես և ընդհանրապես գլոբալացում երևույթը, դեռևս կայացած չէ, այլ անընդհատ զարգացող գործընթաց է՝ իր բարդություններով և հակասություններով, որն ընդգրկում է ոչ միայն առանձին վերցրած մեկ երկիր կամ տարածաշրջան, այլև ողջ մարդկային հանրությունը:

Տնտեսության ոլորտում գլոբալացումն իրականացվում է արտադրության գործոնների (ապրանքների, ծառայությունների, կապիտալի, նաև սեփականության իրավունքի) և աշխատանքի գործոնների շարժի հաջորդական ազատականացմամբ: Համաշխարհային տնտեսական տարածությունը դառնում է ձեռներեցության միասնական դաշտ, երբ արտադրողական ուժերի տեղաբաշխման աշխարհագրությունը, ներդրումների, արտադրության, մատակարարման ճյուղային կառուցվածքը ոչ միայն հանդիսանում են վերարտադրության գործընթացի ինտերնացիոնալացման որոշակի մակարդակ, այլև նրա առավել բարձր՝ գլոբալացման փուլ: Համաշխարհային տնտեսությունը հենվում է ազգային տնտեսությունների փոխկապվածության և փոխլրացման վրա, ըստ տնտեսվարման մեթոդների, այն դարձել է բավական միաբնույթ, որն էլ ձևավորել է նրա զարգացման որակապես նոր՝ գլոբալացվող փուլի համար անհրաժեշտ պայմաններ:

20-րդ դարը նշանավորվել է գիտատեխնիկական և տեղեկատվական հեղափոխություններով, որոնք փոխել են աշխարհի տարբեր տարածաշրջանների զարգացման ու միջազգային կապերի կառուցվածքի բնույթը և պայմանները: Գիտատեխնիկական առաջընթացը խթանել է ապրանքների և ծառայությունների չտեսնված աճը (համաշխարհային համախառն ներքին արդյունքը 2000թ.՝ 1900թ. համեմատ աճել է 19 անգամ), որը, չնայած աշխարհի բնակչության զգալի աճին (1900թ. աշխարհի բնակչությունը կազմել է 1,6 մլրդ մարդ, իսկ 2000-ին՝ 6,3 մլրդ), բավարար է երկրագնդի բնակչության կենսամակարդակի զգալի բարձրացման համար [5, c. 7]: Այս գործընթացները, կապված ռեսուրսների սահմանափակության հետ, հանգեցրել են համաշխարհային կայուն զարգացումից շեղումների և մի շարք նոր միջազգային հիմնախնդիրների առաջացման:

Գլոբալ զարգացման առավել սուր հիմնախնդիրներից է զարգացած և զարգացող երկրների կամ, այլ կերպ ասած, հարուստ հյուսիսի և աղքատ հարավի միջև առաջացած խզումը: Ներկայումս հյուսիսային կիսագնդի բնակչության 20%-ը սպառում է աշխարհում արտադրվող բոլոր ապրանքների շուրջ 90 և մշակվող էներգիայի 60%-ը, նրանց եկամուտները գերազանցում են զարգացող երկրների եկամուտը շուրջ 60 անգամ: Միևնույն ժամանակ, երկրագնդի բնակչության շուրջ 20%-ը գոյատևում է բնատնտեսության պայմաններում: ՀՆԱ մեկ շնչին ընկնող միջին ցուցանիշի վերլուծությունն ի ցույց է դնում եկամուտների դիֆերենցիայի աճի միտումը և համապատասխանաբար աճող անհավասարությունը: Համաշխարհային բանկի տվյալներով, 21-րդ դարի սկզբին օրական $1-ին համարժեք եկամուտ ունեցել են մոտավորապես 1,2 մլրդ մարդ, որոնց 90%-ը բնակվել է Աֆրիկայում և Ասիայում, 6,5%-ը՝ Լատինական Ամերիկայում և Կարիբյան ավազանում: 2004թ. օրական $1-3-ին

համարժեք եկամուտ ունեցողների թիվն աշխարհում կազմել է ողջ բնակչության կեսը [6, c. 311-312]: Գլոբալացման գործընթացի արդյունքում ավելանում է անհավասարությունը ոչ միայն հարուստ և աղքատ երկրների միջև, այլև այդ երկրների ներսում: Աղքատ բնակչության մեծ մասը կենտրոնացված է զարգացող երկրներում, որտեղ իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով 20-րդ դարի վերջին օրական $2-ից պակաս եկամուտ ունեցող բնակչությունը կազմել է. Չինաստանում՝ 53,7, Հնդկաստանում՝ 86,2, Ինդոնեզիայում՝ 66,1, Պակիստանում՝ 84,7, Բանգլադեշում՝ 77,8 տոկոս [5, c. 12-13]:

Այսօր արդեն իսկ մեծ ծավալներ ընդունող համաշխարհային տնտեսական ճգնաժամը գլոբալ համաշխարհային տնտեսության ձևավորման գործընթացի դրսևորումներից է, որը հարվածում է, առանց բացառության, բոլոր պետություններին՝ անկախ երկրի տնտեսական մոդելի առանձնահատկություններից, սակայն տարբեր են ազդեցության ուժը և հետևանքները:

Որպես օրինակ կարելի է դիտարկել համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցության վերլուծության արդյունքներն այնպիսի տարբեր երկրների տնտեսությունների վրա, ինչպիսիք են Իսլանդիան և Իրանը:

Գլոբալացման առաջամարտիկ հանդիսացող Իսլանդիան վերջին մի քանի տասնամյակների ընթացքում առաջին անգամ 2008թ. նոյեմբերին օգնության խնդրանքով դիմեց Արժույթի միջազգային հիմնադրամին: 300 հազարանոց բնակչությամբ երկիրը ՄԱԿ մարդկային զարգացման ներուժի ինդեքսում զբաղեցնում էր առաջին տեղը, ըստ *Transparency International* կազմակերպության համարվել է ամենաչկոռումպացված երկիրը, ունեցել է բարձր դիրքեր տնտեսական ազատության և բիզնեսի պայմանների վարկանիշային ցանկերում: Այսօր Իսլանդիայում չի աշխատում ֆոնդային շուկան, ազգայնացվում են խոշոր բանկերը, բնակչությունը գնում է արտարժույթ, կատարվում են զանգվածային կրճատումներ, որի պատճառով հայտարարվել է տեխնիկական ռեցեսիայի մասին (երկու եռամսյակ անընդմեջ արձանագրվել է արտադրության անկում) և որի արդյունքում հրաժարական է ներկայացրել կառավարությունը:

Իրանը՝ համաշխարհային ֆինանսական համակարգին ամենացածր մակարդակով ինտեգրված երկիրն է, որի նկատմամբ համաշխարհային հանրության կողմից կիրառվում են բազմաթիվ սահմանափակումներ և սանկցիաներ, ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական բնույթի: Երկրի արդյունաբերությունը հիմնականում ունի հումքային ուղղվածություն (գազ, նավթ, մետաղներ): Իրանը ևս այսօր կրում է հսկայական կորուստներ, մասնավորապես՝ կտրուկ անկում է ապրել արդյունաբերական արտադրությունը, կրճատվել է նավթի արդյունահանումը:

Բռնկված ճգնաժամը բացասական ազդեցություն է ունեցել նաև ՀՀ տնտեսության վրա, մասնավորապես, ըստ ՀՀ Ազգային վիճակագրական ծա-

ռայության տվյալների՝ 2008թ. հունվար-դեկտեմբերին, 2007թ. նույն ժամանակահատվածի համեմատ, օրինակ՝ մանածագործական արտադրությունը կրճատվել է 20,8, քիմիականը՝ 14,8, մետաղագործականը՝ 9,6, մեքենաների և սարքավորումներինը՝ 17,6, ոսկերչական արտադրատեսակներինը՝ 16,3, բեռնափոխադրումները՝ 7,2, արտահանումը՝ 8%-ով [7, էջ 7, 11, 12]: Ըստ առանձին մասնագետների գնահատականի՝ 2009թ. հունվարին մասնավոր տրանսֆերտների ծավալը կազմել է $55,6 մլն, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պակաս է 25%-ով [8, c. 4]:

Հարկ է նշել, որ ճգնաժամի նշված, արդեն իսկ տեսանելի, հետևանքները, իրենց հերթին, առաջ կբերեն նոր հետևանքներ, մասնավորապես՝ պետբյուջե հարկային մուտքերի կրճատում (որպես հետևանք՝ նաև բյուջեի պակասորդի մեծացում), ներդրումների կրճատում, գործազրկության աճ, բնակչության եկամուտների կրճատում (որպես հետևանք՝ նաև սոցիալական լարվածության աճ, որը կարող է ազդել ներքաղաքական իրավիճակի վրա), քրեածին իրավիճակի սրում, ոչ բարեկամ երկրների դեստրուկտիվ գործունեության ակտիվացում[1]:

Գլոբալացման կամ այլ կերպ ասած՝ հետինդուստրիալ նոր քաղաքակրթության ձևավորման ներկայիս փուլում, երբ օրեցօր ահագնանում է տնտեսական ճգնաժամը և դեռևս վերջնականապես չեն ձևավորվել հասարակական և միջպետական հարաբերությունների վերազգային կարգավորման կառույցներն ու նրանց արդյունավետ գործունեության մեխանիզմները (այդ թվում՝ տնտեսության ոլորտում), ազգային պետությունները շարունակում են և դեռ երկար ժամանակ կմնան նշված մակարդակներում հարաբերությունների կարգավորման և կառավարման հիմնական դերակատարներ, ինչն օրախնդիր է դարձնում համապատասխան անվտանգության համակարգերի ձևավորումը կամ առկա համակարգերի վերաձևումը: Ուսումնասիրվող հիմնախնդրի համատեքստում, կարծում ենք, անհրաժեշտ է անդրադառնալ, հատկապես, ազգային անվտանգության հիմնարար բաղադրիչներից մեկին՝ տնտեսական անվտանգությանը: Ուստի, փորձենք վերհանել տնտեսական անվտանգություն հասկացության վերաբերյալ տարբեր հետազոտողների արդի մոտեցումները և ընկալումները:

«Տնտեսական անվտանգություն» եզրը, ինչպես և «ազգային անվտանգությունը», առաջացել է 20-րդ դարի կեսերին: Մինչև Երկրորդ աշխարհամարտն ավելի շատ խոսվում էր «պաշտպանության» և «պաշտպանունակության» մասին: Սակայն, արդեն 1947թ. ԱՄՆ-ում ընդունվեց օրենք «Ազ-

[1] 2009թ. հունվարի ընթացքում Հայաստանում գրանցվել է 534 հանցագործություն, ինչն անցած տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ ավելացել է 23,3%-ով: Մասնավորապես, գրանցված 233 դեպք սեփականության դեմ ուղղված հանցագործություններ են, 34-ը՝ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններ [9, c. 2]:

գային անվտանգության մասին», և ձևավորվեց նախագահին առընթեր համապատասխան խորհուրդ: Վերջինիս հանձնարարվեց հիմնավորել ոչ միայն արտաքին, պաշտպանությանն առնչվող, այլև տնտեսական քաղաքականությանը վերաբերող որոշումներ:

Ամերիկյան մասնագետների մեծամասնության կարծիքով, տնտեսական անվտանգությունը պետք է համապատասխանի առնվազն երկու պահանջների.

- պահպանի երկրի տնտեսական ինքնուրույնությունը, ունակ լինի սեփական շահերից ելնելով տնտեսական զարգացմանն առնչվող որոշումներ կայացնելու,
- ունակ լինի պահպանելու և հետագայում բարելավելու երկրի բնակչության կենսամակարդակը:

Տնտեսական անվտանգությանը նմանատիպ պահանջներ է ներկայացնում նաև Գ.Մաչովսկին: Վերջինիս կարծիքով, տնտեսական անվտանգությունը կենսականորեն անհրաժեշտ տնտեսական պարամետրերում պետք է ապահովի բավական բարձր աստիճանի անկախություն գործընկերոջից, հակառակ դեպքում կսահմանափակվի ազատ ընտրության հնարավորությունը քաղաքական որոշումներում [10, s. 5-18]:

Գ.Մաուլը տնտեսական անվտանգությունը դիտարկում է որպես «ազգի կողմից առաջնային անհրաժեշտություն համարվող հիմնական արժեքների՝ ընդունված նվազագույն մակարդակի նկատմամբ սուր սպառնալիքի բացակայություն: Այդ սպառնալիքը ծագում է այն դեպքում, երբ առաջանում են գործող սոցիալ-քաղաքական կառուցվածքը քայքայելու ունակ նախապայմաններ, ինչպես նաև երբ ինչ-որ մեկը կամ ինչ-որ բան սպառնում է մեզ հետ կանգնել մեր առաջնային արժեքներից» [11]:

Տնտեսական անվտանգության հիմնախնդրում ավելի որոշակի են Կ.Մարդոչի դատողությունները: Վերջինս գտնում է, որ վտանգը ծնվում է այն դեպքում, երբ կատարվում են փոփոխություններ (մասնավորապես, կապված եկամուտների ու հարստության ծավալի և բաժանման, զբաղվածության մակարդակի, սղաճի, հումքի մատակարարման հետ և այլն) տնտեսական ինքնիշխանության, այսինքն՝ քաղաքականության ու ռեսուրսների գործիքների ավելի լայն շրջանակ վերահսկելու հնարավորության մեջ [12, p. 67-98]:

Ընդհանրացնելով վերոհիշյալ մասնագետների կարծիքները՝ կարելի է եզրակացնել, որ տնտեսական անվտանգության հասկացության մեջ առանցքային է ինչպես ներքաղաքական, այնպես էլ միջազգային հարցերում որոշումներ կայացնելիս պետության ինքնիշխանության (անկախության) ապահովումը: Անհրաժեշտ է նշել, որ այսպիսի շեշտադրումով տնտեսական անվտանգությունը ենթադրում է առաջին հերթին պետության շահերի պաշտպանվածություն:

Ռուսաստանյան մասնագետների կողմից տնտեսական անվտանգության հիմնախնդիրները հիմնականում դիտարկվում են Ռուսաստանում այսօր տեղի ունեցող քաղաքական և սոցիալ-տնտեսական փոփոխությունների համատեքստում:

«Տնտեսական անվտանգություն» հասկացությունը վերլուծելով՝ Վ.Պանկովը գրում է. «…դա ազգային տնտեսության այնպիսի վիճակ է, որը բնութագրվում է կայունությամբ, հասարակական վերարտադրման գործընթացի բնականոն զարգացումը խախտող, բնակչության կենսամակարդակը քայքայող և դրանով հասարակության մեջ սոցիալական լարվածություն առաջացնող ու պետության գոյությունը վտանգող ներքին և արտաքին գործոնների հանդեպ դիմադրողականությամբ» [13, c. 5-18]: Գոյություն ունեն ազգային տնտեսական անվտանգության նաև այլ սահմանումներ, որոնք բոլորն էլ այսպես, թե այնպես այն որակում են որպես «ազգի բարեկեցություն և անկախ արտաքին գործոնների ազդեցությունից ներքին շուկայի կայունությունն ապահովելու կարողությամբ օժտված ազգային տնտեսություն»: Տնտեսական անվտանգության համակարգը համարվում է արդյունավետ, եթե արտաքին բացասական ազդեցությունը չեզոքացվում է ի հաշիվ երկրի ռեզերվների՝ թույլ տալով պահպանել տնտեսական և քաղաքական կայունություն [14, c. 31-41]:

Տնտեսական անվտանգությունը նյութաարտադրողական բնագավառում և ֆինանսական հարաբերություններում սղաճի բարձր մակարդակի և տնտեսության ճգնաժամի հանգեցնող սոցիալական, քաղաքական և ներքին ու արտաքին այլ բացասական գործոններից հասարակության և պետության շահերի պաշտպանվածությունն ու կայունությունն է: Խոսելով տնտեսական բնագավառում անձի, հասարակության և պետության գործունեության անվտանգության մասին՝ պետք է հաշվի առնել, որ ցանկացած տնտեսություն բնութագրվում է նախևառաջ նյութատեխնիկական բազայի մակարդակով, արտադրողական ուժերի զարգացման աստիճանով և բնակչության կարիքները բավարարելու կարողությամբ:

Ընդհանուր առմամբ, տնտեսական անվտանգությունը կախված է տնտեսական բնագավառում հարաբերությունները կարգավորող պետական միջոցների արդյունավետ հարաբերակցությունից, ինչպես նաև միջոցներից, որոնք վարչակազմի կողմից կիրառվում են առանձին ձեռնարկությունների մակարդակով: Տնտեսական անվտանգությունն ապահովող սուբյեկտների շարքում կարևոր դեր է հատկացվում պետական կառույցներին:

Մեկ այլ գիտնական՝ Ա.Ա.Վորոնովը, տնտեսական անվտանգությունը բնորոշում է որպես ազգային անվտանգության տեսության բարդ համալիր

կատեգորիա, որը կապված է գիտության տարբեր ճյուղերի (տնտեսական աշխարհագրություն, քաղաքագիտություն, տնտեսագիտություն և այլն) տնտեսական գիտելիքների ինտեգրման հետ: Նրա բովանդակությունը կարելի է ըմբռնել այնպիսի հասկացությունների միջոցով, ինչպիսիք են երկրի տնտեսական հզորությունը, տնտեսական անկախությունը, տնտեսության քրեականացումը, տնտեսական էքսպանսիան:

Արդյունաբերության միջազգայնացմանը համընթաց 21-րդ դարում տնտեսական անվտանգությունը, ամենայն հավանականությամբ, ավելի սերտորեն կկապվի միջազգային և տարածաշրջանային տնտեսական անվտանգության հետ [15, c. 232]:

Ընդհանուր առմամբ, ռուսական հետազոտողների մեծամասնության կողմից տնտեսական անվտանգությունը բնորոշվում է որպես ազգային տնտեսության այնպիսի կացություն, որը բնութագրվում է արտաքին ու ներքին ապակայունացնող գործոնների հանդեպ դիմադրողականությամբ և երկրում համապատասխան ռեսուրսների ու մեխանիզմների առկայությամբ:

Ելնելով վերը շարադրվածից՝ տնտեսական անվտանգության էությունը կարելի է ձևակերպել որպես տնտեսական ու իշխանական ինստիտուտների այնպիսի կացություն, որը երաշխավորում է ազգային շահերի պաշտպանությունը, քաղաքականության սոցիալական ուղղվածությունը, բավարար պաշտպանական ներուժ՝ անգամ ներքին ու արտաքին անբարենպաստ պայմաններում: Այլ կերպ ասած (նաև Վ.Սենչագովի կարծիքով), տնտեսական անվտանգությունը միայն ազգային շահերի պաշտպանվածությունը չէ, այլ նաև իշխանական ինստիտուտների պատրաստակամությունը և կարողությունը՝ ստեղծելու հայրենական տնտեսության զարգացումը և հասարակության սոցիալ-քաղաքական կայունությունն ապահովող մեխանիզմները [16, c. 84]:

Ըստ Ա.Մարկոսյանի՝ պետության տնտեսական անվտանգությունը բարդ և բազմագործոն համակարգ է: Լինելով ազգային անվտանգության համակարգի բաղկացուցիչ մասը՝ այն միաժամանակ հիմք է հանդիսանում ազգային անվտանգության կառուցվածքի մեջ մտնող՝ ռազմական, տեղեկատվական, սոցիալ-քաղաքական, պարենային, բնապահպանական անվտանգության և այլ տարրերի ձևավորման համար:

Տնտեսական անվտանգությունը ենթադրում է տնտեսական համակարգի անխափան գործունեություն, ռեսուրսների մատակարարման և կոմունիկացիայի հստակ գործառնություն, հավասարակշռություն շուկայի ազատականացման և տնտեսական խաղի կանոնների կանոնակարգման միջև, պետության դերի և նշանակության հստակեցում, տնտեսական դինամիզմի գերակայություն ազգային մշակույթում [17, էջ 41, 47]:

Ամփոփելով տնտեսական անվտանգության տարաբնույթ սահմանումների վերլուծության արդյունքները՝ կարելի է հստակեցնել, որ տնտեսական անվտանգությունը երկրի տնտեսության այնպիսի կացություն է, որը՝

- ծավալային և կառուցվածքային չափորոշիչներով բավարար է պետության՝ գոյություն ունեցող կարգավիճակի ապահովման, արտաքին ճնշումից անկախ նրա քաղաքական ու սոցիալ-տնտեսական զարգացման համար,
- կարող է պահպանել օրինական եկամուտների մակարդակը, որն ապահովում է քաղաքակիրթ երկրների ստանդարտներին համապատասխան, բնակչության բացարձակ մեծամասնության բարեկեցությունը:

Նշվածով, ինչպես նաև համաշխարհային զարգացման նոր իրողություններով պայմանավորված՝ օրախնդիր են դառնում անվտանգության խնդիրների նորովի ընկալումը և դրանց լուծմանն ուղղված համարժեք համակարգերի ձևավորումը կամ առկա համակարգերի փոփոխությունը:

Ուսումնասիրելով գլոբալացման և տնտեսական անվտանգությանն առնչվող տեսական հիմնախնդիրները՝ կարելի է փաստել, որ գլոբալ համաշխարհային տնտեսության պայմաններում ազգային տնտեսություններն օգտվում են համընդհանուր բարիքներից (համաշխարհային շուկա, տեխնոլոգիաներ, գիտելիք, տեղեկատվություն, մարդկային ներուժ և այլն), սակայն դրա հետ միաժամանակ ներկայիս համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամն իր դեստրուկտիվ ազդեցությունն է ունենում անխտիր բոլոր ազգային տնտեսությունների վրա:

Կարծում ենք, որ ներկայիս գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում ազգային տնտեսությունների մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների պահպանումը, ազգաբնակչության զբաղվածության և սոցիալական պարտավորությունների ապահովումը պետք է առաջնային խնդիր դառնան ազգային կառավարությունների համար, քանի դեռ չեն մշակվել և չեն ներդրվել գործուն գլոբալ մեխանիզմներ համաշխարհային տարածում ունեցող ճգնաժամը հաղթահարելու համար:

Վերոգրյալի ամփոփումը վկայում է, որ տնտեսական գլոբալացումն օբյեկտիվ գործընթաց է՝ սուբյեկտիվ ընկալումներով և մոտեցումներով ուղղորդվող: Այն ստեղծում է ինչպես առաջանցիկ և դինամիկ զարգանալու, այնպես էլ՝ միջազգային մրցակցությունից դուրս մղվելու հնարավորություն: Չնայած հետինդուստրիալ զարգացման փուլում գտնվող երկրների առավել մեծ զարգացման հնարավորություններին, այնուամենայնիվ, չպետք է անտեսել այն հնարավորությունների պատուհանը, որը ստեղծվել է զարգացման

առավել ցածր մակարդակում գտնվող երկրների համար, մասնավորապես, խոսքը վերաբերում է կապիտալի, ֆինանսական միջոցների, նոր տեխնոլոգիաների ներգրավման հնարավորությունների մեծացմանը, որը պայմանավորված է վերջիններիս վերազգայնացմամբ, արագ տեղաշարժման հնարավորություններով: Ինչ խոսք, նշվածը ստեղծում է միայն օբյեկտիվ նախադրյալներ, որը դեռևս բավարար չէ ցանկալի արդյունքների հասնելու համար: Դրա համար ներկայումս շատ կարևոր գործոն է վերը նշված երևույթների, միտումների տրամաբանության առավել խոր, համակողմանի ըմբռնումը և վերջիններիս համահունչ համապատասխան ոլորտների զարգացման ազգային ռազմավարությունների մշակումը: Այս շրջանակներում էլ պետք է դիտարկել անվտանգության խնդիրների լուծումը, ինչն արդեն իսկ դուրս է գալիս անվտանգության ապահովման ավանդական մոտեցումների և պատկերացումների շրջանակից: Իսկ դա, իր հերթին, առաջացնում է ինչպես շահերի, այնպես էլ սպառնալիքների բնույթի, աղբյուրների, օբյեկտների և սուբյեկտների նորովի ընկալման անհրաժեշտություն:

Վերոգրյալն ուղղակիորեն առնչվում է կազմակերպչական գործոնի, մասնավորապես՝ կազմակերպչական ռեսուրսների արդյունավետ օգտագործման հետ, որի առնչությամբ Գ.Հարությունյանն իր հոդվածներից մեկում իրավացիորեն նշում է. «թերացումները կազմակերպչական ոլորտում սահմանափակում (լիմիթավորում) և նվազեցնում են մնացած բնագավառներում ընթացող գործառույթների արդյունավետությունը… Ակնհայտ իրողություն է, որ բարձր կազմակերպվածությունն այլ ռեսուրսների սակավաթիվ լինելու պարագայում բերում է հաջողությունների, կազմակերպվածության բացակայությունը՝ անհաջողությունների այլ բնույթի հսկայական ռեսուրսներ տիրապետողներին» [18, էջ 10]:

Նկատի ունենալով Հայության զգալի ռեսուրսային ներուժի առկայությունը քաղաքակրթական, տեխնոլոգիական և նյութական ոլորտներում՝ ներկայումս առավել հրատապ են դառնում կազմակերպչական ռեսուրսի զարգացումը և արդյունավետ օգտագործումը, ինչն առանցքային խնդիր է արդյունավետ պետության ստեղծման ճանապարհին, և ինչն էլ իր հերթին կհանդիսանա ազգային տնտեսության անվտանգ զարգացման հիմնական երաշխավորը:

Հունիս, 2009թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Иноземцев В.Л.,* Глобализация: Илюзии и реальность // Свободная мысль-XXI, 2000, N1.
2. *Бек У.,* Что такое глобализация. Ошибки глобализма-ответы на глобализацию / пер. с нем., М., 2001.
3. *Малахов В.,* Государство в условиях глобализации, М., 2007.
4. *Сорос Дж.,* О глобализации / пер. с англ., М., 2000.
5. Мировая экономика в XX веке: потрясающие достижения и серезные проблемы // МЭ и МО., 2001, N1.
6. Современные международные отношения и мировая политика. М., 2005.
7. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2008թ. հունվար-դեկտեմբերին, Տեղեկատվական ամսական զեկույց, Երևան, 2009:
8. Деловой экспресс N 09 (811).
9. Голос Армении, Общественно-политическая газета, N 21 (19812) от 03.03.2009.
10. *Machovski H.,* Ost-West Handel: Entwicklung, Interessenlagen, Aussichten // Aus Politik u.Zeitgeschichte. Bonn, 1985. № 5.
11. *Maull H.,* Raw materials, energy and Western security. L., 1984.
12. *Murdoch C.,* Economic factors as objects of security: Economics security & vulnerability // *K.Knorr, F.Trager.* Economics issuies & national security. Lawrence, 1977.
13. *Паньков В.,* Экономическая безопасность: мирохозяйственный и внутренний аспекты // Внешнеэкономические связи. 1992. Вып. 8.
14. *Рубанов В.,* Безопасность - лозунги, теория и политическая практика // Свободная мысль, 1991, № 17.
15. *Воронов А.А.,* Основы национальной безопасности, Науч.-практ. пос. Общая часть. М., 2000.
16. Экономическая безопасность (производство, финансы, банки) / Под ред. *В.К. Сенчагова,* М., 1998.
17. *Ա.Սարկոսյան,* Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները. մեթոդաբանություն և արդյունքներ, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Ե., 2005:
18. *Գ.Հարությունյան,* Հայության կազմակերպման և տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրները, «21-րդ ԴԱՐ», տեղեկատվական-վերլուծական հանդես, #2(20), Ե., 2008:

ОБ ОТДЕЛЬНЫХ ТЕОРЕТИЧЕСКИХ ВОПРОСАХ ЭКОНОМИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ В УСЛОВИЯХ ГЛОБАЛИЗАЦИИ

Аршак Смбатян, Артем Тер-Арутюнян

Резюме

Анализ состояния мировой экономики свидетельствует о том, что экономики национальных государств интегрированы в глобальную экономическую систему сложных и взаимосвязанных отношений. Сложившийся миропорядок подразумевает зависимость отдельных национальных экономик от глобализирующихся процессов, исходящих от мировых и региональных держав. По оценкам Всемирного банка, в 2007г. глобальный (мировой) ВВП составил более $56 трлн. На долю США пришлось почти $14 трлн (25% от этой суммы). На сегодняшний день 53 % глобального ВВП обеспечивают транснациональные компании.

В условиях глобальной мировой экономики разразившийся финансово-экономический кризис затронул все национальные государства без исключения. Кризис оставил свои негативные последствия на экономику Армении. В сложившейся ситуации, перед лицом новых вызовов и угроз независимому армянскому государству необходимо определить и обозначить национальные интересы, на основе которых и должна выстраиваться система национальной безопасности. Безопасное существование национального государства в современном мире прежде всего должно быть гарантировано развитой экономикой в интересах как государства, так и общества и гражданина. Сегодня именно экономическая безопасность Республики Армения должна определять реализацию военно-политических и социально-экономических решений.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՈՒՐՎԱԳԻԾ

Վարդան Հայկազյան

Հոդվածում դիտարկվում են այն պայմանները, որոնք կարող են նպաստել ՀՀ կայուն զարգացմանը տարբեր ոլորտներում: Առաջարկվում է հանրապետության տարածքի վարչական բաժանման նոր մոդել՝ հիմնված կենսոլորտային գավառների և ուղղահայաց գոտիների թվի նվազեցման սկզբունքների վրա, որի արդյունքում ունենում ենք 5 մարզ՝ Շիրակ, Լոռի-Տավուշ, Գեղամա, Արարատյան, Սյունիք և որպես առանձին կառուցվածք՝ Երևանի ագլոմերացիան իր արբանյակ քաղաքներով: Ներկայացվում են դրույթներ, որոնք կարող են նպաստել առանձին բնագավառների կայուն զարգացմանը:

Ապագայի ստվերը պետք է երկար լինի:
Ռոբերտ Աքսելրոդ, «Կոոպերացման էվոլյուցիա»

1. Ներածություն

Արդի, ինչպես և պարբերաբար կրկնվող այլ ճգնաժամերի «լույսի» ներքո ավելի հստակ է երևում ներկա քաղաքակրթության հիմքում ընկած մարդկանց ձգտումը՝ ունենալ որքան հնարավոր է ավելի շատ իրեր, ուտելիք և զվարճալիքներ, որի բավարարումը, ինչպես և դրա հետ կապված՝ հասարակությունում համապատասխան դիրքի գրավումը, պայմանավորված է նրա տրամադրության տակ գտնվող, հիմնականում՝ ֆինանսական, ռեսուրսներով: Մարդ սպառողը, որի հոծ զանգվածի մեջ հազիվ է նշմարվում մարդ ստեղծագործողը, դարձել է գլխավոր գործող անձ, կազմակերպում է հասարակությունն ու իշխանություն ընտրում, ապրում և աշխատում է այնպես, որ այդ ձգտումը բավարարվի առավելագույնս, ինչը հանգեցրել է այնպիսի հասարակության կայացմանը, որտեղ ոչ միայն ունևոր ռանտիեն, այլև ինտելիգենտն ու բանվոր-գյուղացին ևս հանրային կյանքում հանդես են գալիս գրեթե միայն որպես սպառող[1]: Աշխատանքն արդեն գրեթե չի դիտվում որպես ինքնադրսևորման և ինքնահաստատման միջոց. այն ընկալվում է որպես մի կերպ գոյությունը պահպանելու հնարավորություն:

[1] http://www. trinitas.ru

Բարեկեցությունը շռայլության, ունևորության հետ որևէ կապ չունի: Եվ որպեսզի բարեկեցությունն ազատենք այժմյան առաձգական իմաստաբանական վիճակից, ավելացնենք, որ այն ենթադրում է միայն *անհրաժեշտ* կարիքների բավարարում: Հակառակ դեպքում «նյութական բարիքների անընդհատ աճող մակարդակի» պատրանքը, որ հատուկ է ինչպես կապիտալիստական, այնպես էլ սոցիալիստական հասարակարգին՝ երկուսին էլ հատուկ ստիպողականորեն աճող կարիքների առավելագույն բավարարմամբ, տեղ չի թողնի այնպիսի հասկացությունների համար, ինչպիսիք են ներդաշնակությունը, գթությունը, խղճի ձայնը, սոցիալական կապիտալը և այլ իսկական արժեքները [1, p. 30]:

Իր գոյության հատկապես սկզբնական շրջանում մարդկությունը հարաբերությունները շրջապատի, բնության հետ կառուցում էր մեղմ, փոխադարձ հարմարվողության սկզբունքների հիման վրա: Հակառակ այդ *սիմետրիկ* հարաբերությունների՝ հետագայում ավելի գերակշռող դարձան *ասիմետրիկ* հարաբերությունները, երբ նվազող ռեսուրսների համալրման ուղիներ համատեղ փնտրելու փոխարեն նախապատվությունը տրվեց ավելի արագ ընդունվող անհեռատեսական որոշումներին, և հարաբերությունների պլաստիկան փոխարինվեց նվաճողի հարացույցով (պարադիգմով). գրավվում էին նոր տարածքներ, անտառն անխնա ոչնչացվում էր՝ նոր կենսատիրույթ ստեղծելու նպատակով: Իսկ հետագայում արդեն մարդն այդ մոտեցումը սկսեց կիրառել հենց մարդու նկատմամբ և ավելի անողոք կերպով. կամ դու՝ ինձ, կամ ես՝ քեզ (այն դեպքում, երբ բնությունը համակեցության և փոխադարձ հարմարվողության բյուր օրինակներ ունի, և արդեն մի քանի տասնամյակ է, ինչ այդ սկզբունքներով որոշ երկրներում վարում են նաև գյուղատնտեսությունը՝ անվանելով դրա այդ տեսակը «պերմակուլտուրա» [2]): Դա էլ մեզ հանգեցրեց այն բանին, ինչ այսօր ունենք. արդեն առօրյա դարձած ռազմական գործողությունների բազում օջախներ (իսկ մարդկության պատմության մեջ արդեն տեղի է ունեցել ավելի քան 14.000 պատերազմ): Շատ անգամ «կարո՞ղ է արդյոք սկսվել Երրորդ համաշխարհային պատերազմը» հարցին ի պատասխան լսում ենք. «այն վաղուց արդեն ընթանում է»:

2. Իրավիճակի գնահատում

Այսօր մարդկության մեջ լայն իմաստով բացակայում է որևէ նպատակային կառուցողական ընդհանուր գործոն. չի կարելի ոչ ՀՆԱ-ն ընդունել որպես որևէ պետության հասարակության հաջողության ցուցանիշ, ոչ էլ ժողովրդավարությունը (իր՝ շատ անգամ բռնազբոսիկ մեկնաբանություններով)՝ նրա առաջադիմության չափանիշ: Գյուղատնտեսությունում բերքի լրացուցիչ միավոր ստանալու համար ավելի ու ավելի շատ է ծախսվում թե՛ ֆինանսական, թե՛

էներգետիկ ռեսուրս [3, էջ 60-83]: Արդյունաբերությունում գործող նոր տեխնիկան, մի քանի տոկոսով ավելացնելով արտադրության ծավալները, դառնում է շատ ավելի վտանգավոր մարդու կամ բնության, իսկ երբեմն՝ երկուսի համար էլ (նշենք թեկուզ Չեռնոբիլը): Նոր տեխնոլոգիաները, աննշան չափով բարձրացնելով արտադրանքի որակը, բազմապատիկ բարձրացնում են արտադրության էներգատարողությունն ու բնության էկոլոգիական լարվածությունը: Անգամ կենցաղում օգտագործվող էլեկտրաէներգիայի ծավալներն աստիճանաբար անընդհատ աճում են[1]:

Տնտեսության, գիտության և տեխնիկայի հապճեպ, երբեմն շնչակտուր զարգացում և այսպիսի հասարակություն. պարզ է, որ մեկի զարգացումը մյուսի հաշվին է տեղի ունեցել: Այսինքն՝ երկրները տվյալ ուղիով տանելու իշխանությունների մտադրությունն իրականացվել է հասարակության ինքնակարգավորման ինստիտուտի վրա մշտապես ճնշում գործադրելով և հանգել սոցիալական դեգրադացիայի:

Ինչպես իր աշխատություններից մեկում իրավացիորեն նշում է Աշոտ Վ.Ոսկանյանը, «…պետության և ընտանիքի լայնորեն տարածված գերագնահատումը՝ ընդդեմ քաղաքացիական հասարակության կառույցների» բերում է նրան, որ «հասարակական հարաբերությունները… դրսևորվում են ոչ ուղղակի՝ *վիրտուալ* ձևով», և ընդհանրապես, «հայկական սոցիալական իրականությունը *վիրտուալ* է» [4, էջ 121-136]: Եվ «տպավորությունն այն է, որ հայկական զանգվածային գիտակցության համար պետությունը և ընտանիքը հիմնարար են և արժեքավոր, իսկ հասարակական կառույցները՝ երկրորդական և պատահական»: «Դրանով են պայմանավորված նաև ավանդույթի *անձեռնմխելիությունը* և *սոցիալական խմբերի համերաշխության նկատմամբ ցուցաբերվող անտարբերությունը,* …սոցիալական խմբերի ինքնուրույն արժեքն անտեսվում է, քանի որ անձնավորության՝ *մեկուսի* և ազգի՝ *հավաքական* սուբյեկտները ծածկում են ողջ սոցիալական դաշտը… Դասական առումով *հասարակության* համար տեղ պարզապես չի մնում»:

Այս ամենն, անշուշտ, վկայում է աշխարհընկալման խեղման և դրանից խուսափելու համար ծրագրեր մշակելու և իրականացնելու անհրաժեշտության մասին: Եվ ցանկացած զարգացման ծրագրի հիմքում պետք է դրված լինի արժեքների համակարգի վերանայման և հասարակությունը սպառողականության փակուղուց դուրս բերելու գաղափարը [5, c. 75-77]: Մանավանդ որ սահմանափակ ռեսուրսների պայմաններն ավելի են խթանում դրանց սպառումը՝ մրցակցության բացարձակեցման պայմաններում: Մինչդեռ բնության՝ որպես մրցակցության դասական օրինակի, հաճախակի մատնանշումը հիմքեր գրեթե չի պարունակում. օրինակ, կենդանի օրգանիզմների ենթահա-

[1] http://www.fao.org

մակարգերը (ներքին օրգանները) բացարձակապես չեն մրցակցում: Մրցակցություն կա միայն օրգանիզմների, համակեցությունների, տեսակների միջև, բայց դա երբեք մշտական բնույթ չի կրում: Փոխարենը հայտնի են համատեղ պաշտպանության և սիմբիոզների բազում օրինակներ, ինչը շատ անգամ ընդօրինակվում է շուկայական հարաբերություններում՝ դաշինքների, միությունների, կորպորացիաների ձևով:

Վերադառնալով հասարակության խնդրին՝ նշենք, որ լրացնելով այդ շոշափելի բացը՝ հասարակության փաստացի բացակայությունը, կամ ապավիրտուալացնելով հասարակությունը, մենք քայլ առաջ կանենք, բայց ընդամենը կհայտնվենք համընդհանուր և տևական ճգնաժամային դաշտում՝ բոլորի հետ միասին: Եվ այստեղ արդեն անհրաժեշտ կլինի այլ պետությունների հետ համագործակցությամբ ստեղծել ինչպես մեր, այնպես էլ ողջ համաշխարհային տնտեսության նոր ճարտարապետություն, որտեղ բարոյական նորմերը, ժուժկալությունն ու բոլոր լուծումները բնության հետ համագործակցության մեջ տեսնելու անհրաժեշտությունը հանդես կգան որպես որոշիչ սկզբունքներ: Այդ ճարտարապետությամբ կառուցված տունը հարմար է լինելու ըստ Էրիխ Ֆրոմի *գոյության,* այլ ոչ *ունեցվածքի* կոնցեպտն ընտրած (որին անընդհատ հագուրդ են տալիս սպառողականության ընդլայնման օգտին աշխատող վարկային տեխնոլոգիաները, ռեալ նյութական բովանդակությունից առանձնացված արժեթղթերը, շուկայի սպեկուլյատիվ անընդհատ ընդլայնվող հատվածը) մարդն ու հասարակությունը [6]: Այս պարագաներում պետության դերակատարությունը կլինի առողջ բանկային համակարգ ստեղծելն ու այն վերահսկելը, և մակրոէկոնոմիկայի վարումը՝ ընդգծված ազգայնամետությամբ (դեռ Ֆիխտեի կողմից առաջադրված [7, c. 193] և ռուսերենում *экономический национализм* հաջող թարգմանություն ունեցող հասկացության հայերեն համարժեքը մեզ հայտնի չէ): Նման տնտեսական համակարգը լինելու է այնքան ինքնաբավ, որ երկիրը ճգնաժամից դուրս բերելուն պես պետության հովանավորչությունը հետզհետե դուրս է գալու ասպարեզից:

Բաց համակարգերի տեսության տեսակետից, իշխող կառույցն, իհարկե, պետք է տեղյակ լինի և կարողանա ազդել ենթակա կառույցներին հասնող նյութական, էներգետիկ, տեղեկատվական, հոգևոր ռեսուրսների վրա, բայց դա չպետք է լինի նրա մենաշնորհը: Իշխանական կառույցն ինքը պիտի ստեղծի թափանցիկության այնպիսի պայմաններ, որ այդ ամենը տեսանելի լինի բոլորին: Այդ ժամանակ հասարակությունն էլ կկրի իր բաժին պատասխանատվությունը, և արատը կդադարի լինել իշխանության արտոնություն և ենթականերին կառավարելու լծակ:

Մինչդեռ այսօր արատն է հանդիսանում տնտեսության ամենահզոր շարժիչը, իսկ կառուցել-քանդել դիքոտոմիայում հավասարակշռությունն ան-

ընդհատ թեքվում է դեպի աջ: Մեր գիտակցության վերակողմնորոշումը դեպի բնություն կբերի այդ շարժիչի փոխակերպմանը՝ բնության նպատակահարմարության հիմքի վրա կառուցված:

Ըստ Ա.Դ. Պանովի՝ հասարակության զարգացման արագությունը 10-15 տարի հետո կհասնի անվերջության՝ այստեղից բխող բոլոր հետևություններով [8]: Հավանաբար, այսօրվա ճգնաժամը հենց դրա նախերգանքն է և նախազգուշացումը. բնակչության աճի և սպառման ֆետիշացման այսպիսի պայմաններում մարդկությունը քաղցկեղային ուռուցք կարող է դառնալ կենսոլորտի անընդհատ հյուծվող մարմնի վրա, եթե համապատասխան միջոցներ չձեռնարկի:

3. Որտեղ փնտրել ելքը

Մարդկանց անտարբեր վերաբերմունքը մոլորակի վրա մշտապես ընթացող ռազմական գործողությունների նկատմամբ վկայում է հասարակության մեջ արմատական փոփոխություններ կատարելու անհրաժեշտության մասին: Այն, որ հասարակության կառավարումը դառնում է ավելի բարդ և միաժամանակ անարդյունավետ, ևս վկայում է այդ մասին. վերը հիշատակված ասիմետրիկության, թերևս, առաջին օրինակն էր Հին աշխարհից, հատկապես՝ Արևելքից եկած շահադիտականությունը, որի գաղափարախոսությունը՝ տեսություն դարձած, կոչվեց «էկոնոմիկա», և ստեղծվեց այնպիսի հայեցակարգային մթնոլորտ, որտեղ ագրեսիան դիտվում է որպես նորմ: Հետին պլան է մղվել «բնություն» հարացույցը, և կառուցվել է մի քաղաքակրթություն, որի հիմնադրույթները հակասում են մարդու էությանը և նրա՝ բնության հետ ի սկզբանե ունեցած հարաբերություններին: Բնությանը շրջվելու անհրաժեշտությունը պայմանավորված է ոչ միայն այն սերունդների համար պահպանելու իմպերատիվով: Սիմետրիկ հարացույցից ասիմետրիկին՝ նվաճումայինին անցնելը հանգեցնում է հաղթողի և պարտվողի, կառավարողի և կառավարվողի, սուբյեկտի և օբյեկտի, և ի վերջո «հաղթում է ուժեղագույնը» արատավոր դրույթի:

Այնպես որ՝ բնությունը և նրա պահպանությունը, էկոհամակարգային մոտեցումները և կենսոլորտային մտածելակերպը հարկավոր են ոչ միայն մոլորակը հետագա խաթարումներից հետ պահելու և սերունդներին ավելի բարվոք վիճակում հանձնելու, այլև բնության օրենքներն ավելի լավ հասկանալու և դրանց հիման վրա անձի և հասարակության կյանքը կառուցելու համար: Եվ չմոռանանք, որ խաթարելով բնությունը՝ մենք խաթարում ենք ինքներս մեզ, իսկ կենսոլորտի հետ մրցելու արդյունքում պարտվողն ի վերջո լինելու է մարդը:

Մինչ Վ.Ի.Վերնադսկու ուսմունքի հաղթարշավը XX դարի ընթացքում մարդը և հատկապես մարդկության պատմությունն ուսումնասիրվել են

բնությունից անջատ, ավելի ճիշտ՝ բնությունը ենթադրելով որպես նշված գործընթացների անկենդան առհավատչյա: Վերնադսկին եկավ այն եզրահանգման, որ մարդն օրինաչափ մասն է այն բնական օրգանիզմի, որը կոչվում է կենսոլորտ, և բոլոր վերլուծությունների՝ հատկապես պատմական, կենտրոնում պետք է դիտարկվեն մարդ-բնություն հարաբերությունները:

Անհրաժեշտ է մշակել նոր աշխարհայացք և կացության նոր նախագիծ՝ զարգացման նոր չափանիշներով. ամենահարուստ երկրներն անգամ ապահովագրված չեն արհավիրքային նահանջներից: Ընդհակառակը, ով չի ընկնում գերշահույթի հետևից, հեշտությամբ կտանի ցանկացած ճգնաժամ: Նույնը վերաբերում է գերսպառողին. ինչպես ցույց տվեցին կենսոլորտի փորձն ու պատմությունը, խոշոր կենդանիները հետզհետե վերացան, և նրանց տեղը համապատասխան էկոլոգիական հարթություններում զբաղեցրին կենդանիներ, որոնք բավարարվում էին շատ ավելի քիչ կերային ռեսուրսով: Սպասվում է, որ այսպիսի վերանայված արժեքներով նոր նախագիծը, յուրաքանչյուր երկիր դիտարկելով որպես բնական էներգահամակարգ, միևնույն ժամանակ հրաժարվելով ընդերքի պրիմիտիվ շահագործումից, որի արդյունքում մի քանի մարդ հարստանում է, մի քանի հարյուր մարդ աշխատանք է ստանում, իսկ բնության մարմինը թողնվում է հավերժորեն ապականված՝ պոչամբարների դաջվածքներով, ստեղծագործորեն կփոխազդի բնության և կենդանի նյութի հետ և արտադրաուժերի օպտիմալացման միջոցով կապահովի բոլոր մարդկանց համար բարեկեցիկ սոցիալական աշխարհ:

Դեռ XIX դարի վերջին իտալացի հայտնի տնտեսագետ Վիլֆրեդո Պարիզոն նշել է, որ վտանգավոր անհամապատասխանություն գոյություն ունի սպեկուլյատիվ ֆինանսական գործարքների և իրականում արտադրված արդյունքի միջև, ինչն էլ մինչ այժմ տեղի ունեցած ճգնաժամերի դրդապատճառն է հանդիսացել: Ըստ Նոբելյան մրցանակի դափնեկիր Մ.Ալլեյի, մի շարք համաշխարհային ճանաչում ունեցող սոցիոլոգների և տնտեսագետների (Ի.Վալերսթայն, Է.Լարուշ, Պ.Կուզնեցով), տարադրամա-ֆինանսական համակարգի հիմքերը պետք է վերանայվեն, և որպես ֆինանսական ակտիվների ապահովման չափանիշ պետք է հանդիսանա երկրի օգտակար հզորությունը, այսինքն՝ տարվա ընթացքում երկրում առկա էներգիայի աղբյուրների գումարային հզորությունը, որն էլ արտահայտում է երկրի տնտեսական հնարավորությունները: Այդ դեպքում առանձին վերցրած երկրի և տարբեր երկրների միջև հասարակական-տնտեսական կյանքի յուրաքանչյուր երևույթ ու դրսևորում (ներկրում, արտահանում, նոր տեխնոլոգիաների կիրառում, մասնագետների պատրաստում և վերապատրաստում և այլն) նաև համեմատելի է դառնում: Այսպես, մեկ բարձրակարգ մասնագետի պատրաստումը 25 տարիների ընթացքում պահանջում է մոտ 34 մվտ էներգիա, ինչը համահավասար է

75.000 տ նավթի: Արտահայտման այսպիսի ձևն ավելի արդյունավետ է թե՛ երկրի ներսում ու դրսում կատարվող համեմատությունների համար՝ միաժամանակ զերծ պահելով հնարավոր պատահական և մտածված մոլորություններից, թե՛ ավելի հավաստի տեղեկատվություն է հանդիսանում ավելի տևական ժամանակային պարբերականության համար:

Էներգետիկ պարունակությունը որպես տնտեսական գործունեության արտահայտման միջոց օգտագործելը նաև հնարավորություն է տալիս էներգիայի տնտեսման կոնցեպտը միշտ աչքի առաջ ունենալ և ձգտել բարելավված կառավարման:

4. Որ արժեքներն են կարևոր մեզ համար

Հակակրելի սոցիալիզմից հազիվ ձերբազատված՝ հայտնվեցինք «բաղձալի» կապիտալիզմում, այժմ ակնկալում ենք հասարակության կայացման նոր ձևաչափեր: Դա խիստ ցանկալի է, որ տնտեսավարման ձևերի զանազանության մեջ հնարավոր դարձնի գերակայող քաղաքացիական սեփականության զարգացումը՝ հիմնված հասարակական ինքնակարգավորման վրա: Եվ առաջին հերթին՝ մոբիլիզացնելով և խթանելով ինտելեկտուալ գործունեությունը:

Ի՞նչ հիմքեր կան նման սպասելիքների համար, և ի՞նչ քայլեր է անհրաժեշտ ձեռնարկել պահը մոտեցնելու համար:

Ինչպես կոմունիստական դիկտատուրային հատուկ ուղղահայաց հարաբերությունները հետզհետե փոխարինվում են հորիզոնականով, այնպես էլ դրանք, իրենց հերթին, պետք է հենք հանդիսանան իրենց հետագա զարգացումը ցանցային համակարգերում տեսնելու համար:

Ցանցային համակարգի ունիվերսալությունը ցույց տալու համար նրա արդյունավետության օրինակը բերենք առևտրից: Դրանով այլ կարգի խնդիր է լուծվում: Ցանցային առևտուրն ավելի հեռանկարային է այն պատճառով, որ չնայած սկզբում աճում են գործողությունների ավտոմատացման ծախսերը, այնուհետև աշխատանքների կատարելագործված տեխնոլոգիան կրճատում է ընդհանուր ծախսերը, իսկ եկամուտն ավելանում է ընդհանուր մարքեթինգային հայեցակարգի, միասնական վարչական, ֆինանսական և լոգիստիկ միավորի, ինչպես նաև մեծ մասշտաբներում կատարված տնտեսումների հաշվին: Իսկ ցանցի համար գոյություն ունեցող միևնույն բարձր ստանդարտը տրամադրում է հաճախորդին իր բրենդի նկատմամբ և բարձրացնում ցանցի մրցունակությունը: Սա կարևոր հայեցակարգային հենասյուն է:

Կայուն զարգացման համար, որն ըստ սահմանման՝ այն զարգացումն է, որ, բավարարելով տվյալ սերնդի կարիքներն ու պահանջները, ոչ մի պարագայում չի վտանգում նույնը հաջորդ սերունդների համար, մեկ այլ կարևոր հենասյուն է հանդիսանում էկոհամակարգային մոտեցումը: Մարդու կյանքը

ծավալվում է բնության մեջ, և զարմանալի կլիներ որևէ տնական հաջողություն ակնկալել այն դեպքում, երբ այդ օրենքներն ուսումնասիրելու և կիրառելու փոխարեն դրանք շարունակաբար անտեսվում են:

Եթե սկզբում երկրակենսահամակարգերն այն բնական համակարգերն էին, որտեղ գոյություն ուներ հավասարակշռություն բույսերի և կենդանիների տարբեր տեսակների միջև, իսկ դրանք միասին բավարար սնունդ էին ապահովում մարդու համար, հետագայում մարդը դուրս եկավ այդ բնական սահմաններից, բնակեցրեց հսկայական տարածքներ, առաջացան պետություններ, որոնց սահմաններն արդեն չէին համընկնում երկրակենսահամակարգերի սահմանների հետ: Դրա հետ մեկտեղ, մարդու գործունեությունն ընթացավ կամ բնական միջավայրից կտրված, կամ բնության վրա անցանկալի՝ երբեմն կոշտ տնական ազդեցություններով, և այդ ֆոնի վրա վարչական միավորների անհամաչափ զարգացումը բերեց երկրակենսահամակարգերի հավասարակշության խախտման: Այսօրվա մեր իրավիճակում մարդ-բնություն համակարգը նորից կարող է արդյունավետ դառնալ, եթե ինքնակազմակերպումը հետզհետե դառնա այն գիտակցված ընթացքը, որն իրականանում է համաձայն բնության օրենքների և պահպանելով ամբողջի ու նրա մասի փոխհամաձայնությամբ պայմանավորված համակարգերի ներդաշնակությունը: Իսկ գործնականում դրան կհասնենք, եթե փորձենք համապատասխանեցնել վարչական սահմանները երկրակենսահամակարգերի բնական սահմանների հետ, ստեղծելով *կենսոլորտային գավառներ:* Դրանցից բաղկացած պետությունը չի լինի լոկ տնտեսական, քաղաքական կամ այլ նպատակներով բաժանված տարածքների մեխանիկական միավորում, այլ ամբողջական կենդանի օրգանիզմ և կհայտնվի մարդ-բնություն համակարգի զարգացման նոր, ավելի բարձր մակարդակում:

Եթե որևէ պետություն որդեգրում է բնօգտագործման կառավարման էկոհամակարգային մոտեցում, այսինքն՝ կարելի է ասել, որ այն, փաստորեն, սկսում է բնության մաս կազմել, ապա այն ձեռք է բերում բազում առավելություններ: Դիցուք, նրան մշտապես հատուկ ունիտարիզմի և ֆեդերալիզմի միջև անընդհատ գոյություն ունեցող հակասությունը պարզապես վերանում է:

Իր նյութական կյանքը կենսոլորտի օրենքներին համահունչ կառուցելով՝ մարդն օգտագործում է նրա ողջ հզորությունը. հասարակությունում ուժեղանում են կառուցողական միտումները, առաջանում է հզոր համակարգաստեղծ գործոն:

Կենսոլորտային գավառների առաջացման հետ տեղի է ունենում մարդու գիտակցության էկոլոգիացում, և որպես հետևանք՝ կազմավորվում է առողջ բնակչություն: Ինչպես ասում է Նոբելյան դափնեկիր Է.Չարգաֆը, բնության ձևափոխման կամ նրան խորամանկելու փորձերը բերել են բնության գրեթե վախճանին: Մինչդեռ բնությունն ընդամենը ընկալելը մարդուն դարձնում է

դրա մի մասը, այսինքն՝ հզորության մի մաս: Մարդը դառնում է էկոնոմիկայի զորեղ մեխանիզմների գործելու նպատակը, այլ ոչ թե նրա չնչին անդեմ մասնիկը, և արդեն դժվար կլինի նրան խամաճիկի տեղ դնել, օգտագործելով իր իսկ արատները՝ ագահությունը, նախանձը, չկամությունը, փառասիրությունը:

Առաջարկվում է սրանց վրա հենվելով կազմակերպել մեր սոցիումը և մշակել մեծամասնության մասնակցությունն ակնկալող գիտական ռացիոնալ կառավարման հիմնադրույթներ, այլ ոչ թե նորից ակնկալենք իբր թե խարիզմատիկ, իրականում՝ պատահական լիդերների գալը, հատկապես որ վերջերս նրանք ոչ պատահականորեն դադարում են նաև խարիզմատիկ լինելուց:

5. Կենսոլորտը, ազգային բնավորությունը և հասարակությունը

Մարդն օրինաչափորեն մաս է հանդիսանում այնպիսի բնական և ամբողջական օրգանիզմի, ինչպիսին կենսոլորտն է, և հիմնարարն այստեղ բնություն-մարդ կապն է, որի կատարյալ դրսևորումը բնության կանոններով և մարդու ղեկավարմամբ իրականացվող ինքնակազմակերպման գիտակցված ընթացքն է:

Հազարամյակներ անց մարդը դժվարությամբ փորձում է շրջվել դեպի իր ակունքները, որ անքակտելիորեն կապված են բնության հետ: Սկսում է գիտակցել և վերագնահատել այդ կապը, քանի որ հասկացել է, որ խեղելով բնությունը՝ խեղում է նաև իրեն:

Այսինչ մարզում կամ այնինչ քաղաքում բնակվելը անձի համար առանձնապես չի կարևորվի, եթե դրա հետևում չի կանգնած իր էությունը պայմանավորող անկրկնելի բնաշխարհը, լինի դա հազվադեպ օազիսներով անապատ, լեռնազանգված ամայություն, թե անտառներով կամ մարգագետիններով ծածկված դրախտավայր: Որքան ամբողջական է ու հստակ մարդու պատկերացումն իրեն ծնած բնաշխարհի մասին, այնքան ամուր է ու փոխարդյունավետ նրանց կապը: Չի բացառվում, որ երկրում մեկ կամ երկու աշխարհագրական-կլիմայական գոտիների առկայությունը նպաստում է կայուն ազգային բնավորության առաջանալուն, ճիշտ է՝ նաև շատ անգամ անհետաքրքրության աստիճանի հասնող կանխատեսելիությամբ հանդերձ, և, ընդհակառակը, բազմազոտիականությունը կարող է նախահիմք դառնալ բարդ ազգային խառնվածքի ձևավորմանը, ինչը մենք տեսնում ենք Հայաստանի փոքր տարածքում՝ 9 ուղղահայաց գոտիների պայմաններում: Ոսկե միջինի կամ օպտիմումի պարագան կարող է լինել չափավոր թվով գոտիների առկայությունը՝ թող որ սահմանափակ տարածքում, ինչին զգալի չափով կարելի է հասնել վերը նշված կենսոլորտային գավառների պայմաններում, երբ առանձին վերցված էկոլոգիական տարածքը դեռ պահպանում է իր ամբողջականությունը:

Սահմանափակ ռեսուրսներ և սոցիալական կապիտալի ցածր մակարդակ ունեցող հասարակությունում, ինչպիսին առայժմ մեր հասարակությունն

է, հարաբերությունները մարդկանց միջև պայմանականորեն անվանենք փոխադարձ վեկտորային, այլ ոչ թե պլանետար, այսինքն՝ անձը բևեռված է մեկ այլ անձի (կամ անձերի) նկատմամբ, բայց ոչ թե հարաբերվում է հասարակությանն ամբողջապես կամ նրա մի մասին, ինչը հարմար ենք գտնում սխեմատիկորեն պատկերել հետևյալ ձևով.



Պատկերվածը հավակնում է սխեմատիկորեն ներկայացնել արդի եվրոպական հասարակության մեջ ընդունված հաղորդակցման հիմնական սկզբունքը՝ դիսկուրսի էթիկան (ձախ պատկերը) և այն, ինչ մեզ մոտ դրա փոխարեն օգտագործվում է (աջ պատկեր): Հասարակությունը, առավել ևս՝ տիեզերքը, այլևս շփման եզր չեն մեզ համար. դիմում ենք սովորաբար մեկս մյուսին, և դրա համար մեր տեղի-անտեղի արտահայտված զգացմունքները խտանում են այդ համեմատաբար փոքր օբյեկտի վրա և դառնում (կամ առնվազն հիշեցնում) ագրեսիա. դիմացինը եթե մեր կարծիքին հակառակ կարծիքի է, դառնում է հակառակորդ կամ յուրային դառնալու ինչ-որ շանսեր է պահպանում: Բոլոր դեպքերում տեղի է ունենում գիտակցական հակադրություն. չեզոքությունը մերժվում է՝ կամ-կամ: Որովհետև երկուսով ենք, առանձին *դիպոլ.* հասարակությունն առհասարակ մեր տեսադաշտից դուրս է:

Մաթեմատիկայի բաժիններից մեկում՝ խաղերի տեսությունում կատարված վերջին հետազոտությունները պարզաբանում են վերը նկարագրված ճգնաժամի տանող իրավիճակները և միաժամանակ լուծումներ հուշում, որն է բարոյականի վերջնական հաղթանակը՝ գնալով զարգացող հասարակության առկայության պայմաններում: Քիչ թվով մասնակիցների (դասական դեպքում՝ 2) և սահմանափակ ռեսուրսների պարագայում ընթանում են այսպես կոչված զրոյական գումարով խաղեր. այսինքն՝ մեկը հաղթում է, մյուսը՝ պարտվում, մեկին՝ ամեն ինչ, մյուսին՝ ոչինչ. ճիշտ այնպես, ինչպես ներկայացվեց վերևում:

Սակայն, երբ խաղին սկսում են մասնակցել ավելի մեծ թվով մարդիկ, իսկ դա նշանակում է նաև ավելի շատ ռեսուրսների առկայություն, այսինքն՝ մոդելավորվում է հասարակությունը, խաղացողների վարքը դադարում է այդպես պարզունակ լինելուց, և բացարձակապես սկսում են գերակայել այնպիսի լուծումներ, որտեղ հաղթում է մեծամասնությունը. բազմիցս արձանագրվում են դեպքեր, երբ վերը նշված հետազոտողներից մեկի՝ Ռ.Դոկինզի խոսքերով, «ամենաագահն իսկ կարող է իրեն զսպել, որպեսզի կասեցնի ամբողջ խմբի ոչնչացումը»:

6. Վարչական կառուցվածք և տարածքային զարգացման խնդիրներ

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ տարածքների ճիշտ դիվերսիֆիկացումը բերում է նրան, որ մոտավորապես համազոր տարածքներից որևէ մեկն իր զարգացմամբ առաջ ընկնելով՝ իր հետևից տանում է մյուսներին և հետագայում տևական ժամանակ մնում որպես զարգացման կենտրոն: Ֆրանսիայում դա Փարիզի շրջանն է, Իտալիայում՝ Լոմբարդիան, ուր հանգրվանում է արտասահմանյան ներդրումների զգալի մասը և որը՝ Միլան կենտրոնով, ապահովում է երկրի ՀՆԱ մոտ քառորդը: ԱՄՆ-ում ինովացիոն կենտրոններ համարվում են 50 նահանգներից 5-ը. Կալիֆորնիա, Ֆլորիդա, Վաշինգտոն, Կոլորադո և Քոնեկթիկուտ (իր չափերով ավելի մեծ երկրում զարգացման մի քանի կենտրոնի առկայությունը նորից հաստատում է ցանցային սկզբունքի արդյունավետությունը):

Հայաստանի համար նման բաժանում՝ էկոլոգիական գավառների ձևով, կարող էր լինել 5 մարզերով և Երևանի ագլոմերացիայով կառուցվածքը: Արարատյան մարզը այսպիսի բաժանման դեպքում ներառում է հիմնականում այժմյան Արմավիրի և Արարատի մարզերը և Վայոց ձորի մի մասը: Արագածոտնի զգալի մասը միանում է Շիրակի մարզին (որին միանում է նաև Լոռվա մարզի մինչև Սպիտակ ընկած տարածքը), ինչպես Կոտայքի զգալի մասը՝ Գեղամա մարզին, իսկ Վայոց ձորի արևելյան մասը միանում է Սյունիքին:

Ինչ խոսք, ավելի ճշգրիտ սահմանները հարկ եղած դեպքում կանցկացվեն համապատասխան բազմապրոֆիլ հանձնաժողովների կողմից, բայց նման բաժանումը լիովին համապատասխանում է ամեն մի նոր մարզում ուղղահայաց գոտիների թվի հնարավոր նվազեցման և կենսոլորտային գավառների սահմանման պայմաններին: (Ի դեպ, այս բաժանումը որոշ չափով հիշեցնում է Երկրորդ հանրապետության վերջերում հրատարակված ՀԽՍՀ սոցիալ-տնտեսական շրջանների բաժանումով տնտեսական քարտեզը):

Որքան մարզերը հիմնական պարամետրերի սակավաթվությամբ տարբերվեն իրարից, այնքան ավելի ներդաշնակ կլինի նրանց փոխհամագործակցությունն ու ավելի հավանական՝ համատեղ զարգացումը: Սակայն գիտենք նաև, որ առայժմ մարզերում նկատելի զարգացման գործընթացներ տեղի չեն

ունենում, և հատկապես ծանր է վիճակը այն ռեգիոններում, որոնք պարփակված են իրենց շուկաներում և մրցունակ չեն մակրոռեգիոնալ մասշտաբներում: Ուստի և կարելի է առաջարկել ընդհանուր թիրախ ունեցող 3 սցենար՝ զարգացման տարբեր մակարդակներում գտնվող ռեգիոնների համար:

Առավել դեպրեսիվ տարածքների համար ճիշտ կլինի օգտագործել առկա մատչելի ռեսուրսը (առաջին սցենար). էժան աշխատուժը, էժան հողը, էներգիայի համեմատաբար ավելի էժան աղբյուրները: Սովորաբար այստեղ առկա է լինում նաև հնից մնացած որևէ ռեսուրսային բազա: Հետաքրքիր է, որ այս մակարդակում ոչ միայն ապահովվում է տնտեսական բարիքների ստեղծման անհրաժեշտ-նվազագույն աստիճան, այլև արդեն ենթակառուցվածքներ են առաջանում հաջորդ՝ երկրորդ սցենարին անցնելու համար, որն է սեփական տեխնոլոգիական բազայի վրա զարգացող էկոնոմիկան: Եվ երրորդ՝ ամենաբարձր մակարդակը ենթադրում է դրսից մրցունակ տեխնոլոգիաների ներկրում և ոչ ռեզիդենտների սպասարկում դրսում կամ ներսում:

Կենսոլորտային գավառների կազմակերպման փոքրիկ նախանշան կարող է հանդիսանալ օրերս ձևավորվող Տաթևի վանքի նախագիծը, որը, բացի Հայաստանի հարավում զբոսաշրջության զարգացումից, ստեղծելու է հոգևոր, գիտական և կրթական ռեգիոնալ բազա, նպաստելու է հանրապետության գիտակրթական ենթակառուցվածքի ապակենտրոնացմանը:

Ինչ վերաբերում է Երևան քաղաքին, ապա զարմանալի է, որ շրջապատված լինելով մի շարք արբանյակ քաղաքներով՝ Աբովյան, Էջմիածին, Մասիս, Արտաշատ, Աշտարակ, Եղվարդ, մինչ այժմ երբևիցե որևէ առաջարկություն չի արվել դրանցով մեկտեղ ստեղծել մայրաքաղաքային ագլոմերացիա, որի հետևանքով Երևանը մնում է վարչական ռեսուրսով գերբեռնված՝ իր շառավղային, այլ ոչ թե ցանցային կառուցվածքով: Կորիզի բեռնաթափումից բացի, ագլոմերացիայի առկայությունն ավելի արդյունավետ կդարձնի կենտրոնի փակուղային (որովհետև՝ ոչ ցանցային) հարաբերությունները մարզերի հետ և հնարավորություն կտա.

- բավարարել մայրաքաղաքի տնտեսությունների հաճախակի առաջացող հողատարածքային կարիքները,
- ընդլայնել մայրաքաղաքի ռեկրեացիոն հնարավորությունները,
- բեռնաթափել քաղաքները էկոլոգիապես ավելի մաքուր կենսամիջավայր փնտրողներին նոր հնարավորություններ տրամադրելով,
- ավելի մատչելի դարձնել ագլոմերացիայի կորիզի ուսումնական, մշակութակենցաղային և շուկայի, այդ թվում՝ աշխատանքային, հնարավորությունները՝ հարկ եղած դեպքում ստեղծելով դրանց կրկնօրինակները կամ տարատեսակները,
- որպեսզի աշխատանքային միգրացիան արդեն սկսի կրել ճոճանակային բնույթ, որի միջոցով հնարավոր է դառնում լուծում տալ այն պարադոք-

սային վիճակին, երբ առկա աշխատատեղերի քանակը շատ անգամ համեմատելի է աշխատանք որոնողների թվի հետ, բայց բավարարման խնդիրը երկար ժամանակ մնում է անլուծելի, մինչդեռ լուծումը տալիս է ագլոմերացիայի անդամների տվյալների բազաների միավորումը,

- ավելի արագ զարգացնել ծայրամասային գոտու տարածքները՝ փոխարինելով խոշոր քաղաքի աճի զսպման դոկտրինը ագլոմերացիայի համալիր զարգացման հայեցակարգով, որը հնարավորություն կտա մեգապոլիսի արվարձաններն անընդհատ ընդլայնելու փոխարեն ստեղծել աճի կենտրոններ նրա սահմաններից դուրս:

Այդ կենտրոնները կարող են լինել մասնագիտացված-ճյուղային՝ համալիր արդյունաբերական զարգացման, ագրոպարենային, ռեկրեացիոն, կրթական համալիրների զարգացման, ներդրումային զարգացման, տրանսպորտային ենթակառույցների զարգացման և այլն: Այսպիսի կենտրոնների առաջացումը և հնարավորինս համալիր ինքնաբավ գոյատևումը (դրա լավ օրինակ կարող է ծառայել Ավան-Առինջի արդեն բավական լավ հաշվեկշռված տարածքը, իսկ ժամանակին՝ նաև Աբովյան քաղաքը) էապես կբեռնաթափի ոչ միայն մեգապոլիսի կորիզը, այլև այնտեղ տանող տրանսպորտային ուղիները:

Ագլոմերացիայի ծայրամասային գոտին ընդհանրապես պետք է ունենա այնպիսի էկոլոգիական կոմպենսացման համակարգ, որը բավարարի և՛ իրեն, և՛ կորիզը:

Այս բոլորով հանդերձ, հարկ է նշել, որ չնայած ներկա ժամանակներում ուրբանիզացման էքստենսիվ փուլն իրեն սպառել է, այնուամենայնիվ, փոքր քաղաքների զարգացման համար նախապայմաններ են ստեղծվել հատկապես այն դեպքերում, երբ վերջիններս ներգրավվում են միջկորպորատիվ համագործակցություններով պայմանավորված արժեքի առաջացման գործընթացներում:

7. Կրթություն և գիտություն

Վերոշարադրյալ հեռանկարի իրականացման ճանապարհին շատ կարևոր կլինի կրթական համակարգի դերը նոր հարացույցի նկատմամբ անհրաժեշտ հասարակական-հոգեբանական մթնոլորտ ստեղծելու և սոցիալական ադապտացիա կատարելու համար:

Իսկ մինչ այդ անգամ այն սակավ հնարավորությունները, որ առիթ են հանդիսանում համակարգը բարելավելու համար, ինչպես, օրինակ, մեզանում գոյություն ունեցող այդ համակարգը միջազգային կրթական համակարգին համապատասխանեցնող կրեդիտային ժամերի ներմուծումը բարձրագույն կրթության կամ 12-ամյա ուսուցումը հանրակրթական համակարգերում, ոչ թե բարեփոխումների առիթ են հանդիսանում, այլ անճանաչելիության աստիճան

դեֆորմացվելով՝ հարմարեցվում են գոյություն ունեցող մեռած կառույցին:

Կրթական բոլոր աստիճաններում իրավիճակն անչափ անմխիթարական է: Փոխարենը՝ այն առանձին լուծումները, որ կարծես տեսանելի են արդեն, բայց նաև փոխադարձ անիրականանալի (օրինակ, դպրոցում վիճակը շտկելու համար պետք են *նոր* մանկավարժներ, որոնց պետք է կրթեն *նոր* դասախոսները), միաժամանակ միակ ճիշտ լուծումն են հուշում. փոփոխությունները պետք է մեկնարկեն *միաժամանակ* ՝թեկուզ և ուժերի գերլարումով. խնդրի կարևորությունը պարտավորեցնում է:

Տարրական և միջնակարգ կրթության բնագավառում մատուցվող կրթական ծառայությունների որակի բարելավումը պատկերվում է հեղինակային մանկավարժության բացվածքում: Երեխաների կրթության և դաստիարակության խաթարման հիմնական պատճառը երկու հզոր ուժերի՝ ծնողի և ուսուցչի ազդեցությունից նրանց դուրս թողնելն է: Առաջարկվող մոդելում ազդեցությունը կորցնող այդ երկու ուժերն այնքան պետք է կենտրոնացված լինեն դեպի երեխան, որը նրանց հաղորդակցման կամուրջն է հանդիսանալու և ապահովելու է նրանց միջև ուղղակի և անուղղակի, բայց անարգել տեղեկատվության փոխանցումը, որ այդ ուժերից մեկի բացակայության պայմաններում մյուսն անպաշտպան չթողնի մշտապես ուշադրություն պահանջող երեխային:

Եթե գոյություն ունի կրթության դոկտրին, ապա դա պետք է լինի կարողությունների և ընդունակությունների հնարավորինս վաղ բացահայտումը, որպեսզի անձի կենսական պոտենցիալը մինչև ծերացում որքան հնարավոր է ավելի լիարժեք օգտագործվի: Հանրակրթության որակն էապես կբարելավվի, եթե տարրական դպրոցում աշխատանքն սկսվի փոքր խմբերում՝ մանկավարժների կողմից ստեղծագործական և հարկ եղած դեպքում՝ անհատական աշխատանք տանելու պայմաններում, ընդհուպ մինչև *աստեղային կամ ինդիգո* երեխաների բացահայտումը, իսկ բարձր դասարաններում գերիշխողն արդեն պետք է դառնան մասնագիտական կողմնորոշումն ու նախապատրաստումը: Այս ամենին էապես կարող է նպաստել հեռուստատեսությունը, որն այսօրվա աղբը մեզ մատուցելու և դրանով մի քանի հոգի հարստացնելու փոխարեն պետության ազդու և արթուն հայացքի ներքո կլծվի հայ քաղաքացի կրթելու ազնիվ գործին:

Միջին մասնագիտական կրթական համակարգը խիստ գործնական խնդիրներ ունի լուծելու՝ պահանջարկի ճկուն արձագանքմամբ, որի համար հարկ կլինի շատ անգամ փոխել նաև ուսուցման տևողությունը. եթե լավ հաշվապահ լինելու համար երկու տարի է պետք, իսկ մեղվապահ լինելու համար՝ մեկ, ապա տնամերձում փոքր հզորության տեխնիկա աշխատեցնելու կամ ճագարաբուծությամբ զբաղվելու համար կբավարարի մի քանի շաբաթը:

Գիտության՝ որպես ազգի և պետության առաջատար բնագավառն

արդեն երկու տասնամյակ այդպիսին չէ:

Գոյատևելով զբաղված գիտնականներն աստիճանաբար մոռացան գիտության իսկական կոչումը. այն պետք է սպասարկի: Ի դեպ, կարելի է ասել, որ դա խորհրդային հզոր գիտության միակ թերությունն էր. հատկապես պերիֆերիկ գիտությունում չկար հստակ պատկերացում, թե որտեղ է վերջանում կիրառական գիտությունը և սկսվում հիմնարարը, և կարծես ինչ-որ մեկը մյուսի նկատմամբ ենթակա լինելու երևակայական խնդիր էր առաջանում: Եվ այդ շփոթությունն ինչ-որ չափով ներթափանցեց մեր օրերը՝ ավելի անորոշ դարձնելով իրավիճակը: Ուրեմն, գիտությունը պետք է սպասարկի. գյուղատնտեսական գիտությունը՝ գյուղատնտեսությանը, բժշկական գիտությունները՝ առողջապահությանը, երկրաբանական գիտությունները և երկրաֆիզիկան՝ ընդերքի հետ կապված արտադրություններն ու գործընթացները: Եվ երբ կգա պահը և այս կիրառական գիտությունները կհայտնվեն փակուղում կամ դժվարությունների կհանդիպեն, այդժամ իր ծանրակշիռ խոսքը կասի հիմնարար գիտությունը՝ կսկսի *սպասարկել* կիրառականին:

Մեկ այլ «անլուծելի» խնդիր. ակադեմիակա՞ն, համալսարանակա՞ն, թե՞ ճյուղային: Կրթական համակարգի սիմբիոզը հետազոտականի հետ բոլոր ժամանակներում եղել է ամենաարդյունավետը: Այսօր էլ համալսարանական համակարգն իր հզոր գիտակրթական համակարգով շատ երկրներում գալիս է ապացուցելու դա: Ավելին, այն արդյունավետ և փոխշահավետ կերպով համագործակցում է ճյուղային գիտության հետ. կատարվում են ոչ միայն համատեղ հետազոտություններ, այլև համալսարանական կադրերին աշխատանքի վերցրած ճյուղային միավորը՝ այսպես կոչված ֆիրման, շատ անգամ վերապատրաստելով նրանց հատուկ դասընթացների միջոցով, հետագայում հանձնում է այդ թեմատիկ դասընթացները համալսարանին՝ արդեն այնտեղ ուսանողների գուցե ավելի լայն շրջանակներում դասավանդելու համար: Այսպիսով, համալսարանականը՝ հիմնական, ճյուղայինը՝ օժանդակ, իսկ ակադեմիականը՝ հրատարակչական, փորձագիտական, գիտատեխնիկական քաղաքականություն մշակող, գուցե ինչ-որ հարցերում համակարգող... Միայն թե հրաշքով պահպանված գիտական պոտենցիալի մնացորդների հետ պետք է վարվել մեծագույն զգուշությամբ: Ինչ վերաբերում է գիտության և կրթության նախարարությանը, ապա նրան կարելի է լիազորել ֆինանսավարչական գործընթացները: Կարելի է, իհարկե, նաև ինչ-որ կոմիտեներ հորինել: Բայց ինչո՞ւ:

Ի պատիվ առանձին գիտնականների և գիտական կոլեկտիվների՝ առանձին ճյուղերում գիտական կյանքն ընթանում է համաշխարհային մակարդակով՝ արտասահմանյան առաջավոր գիտական կենտրոնների հետ կանոնավոր կապերի պահպանումով: Որպեսզի այդ գործընթացը պահպանվի, զարգանա և ընդլայնվի, անհրաժեշտ է, որ ստեղծվի.

- ինտելեկտուալ ակտիվների շուկա և գիտահետազոտական աշխատանքների մոնիթորինգի և հաշվառման ազգային համակարգ,
- ներդրումային կապիտալի շուկա (ֆինանսական ինստիտուտներ, որոնք ապահովում են ֆինանսավորման անընդհատությունը),
- գիտական մենեջմենթի համակարգ,
- մասնագետների և կառավարիչների արհեստավարժությունը զարգացնող համակարգ:

8. Գյուղատնտեսություն

Գյուղատնտեսության մասին խոսքն արժե սկսել պարզաբանումից. ի վերջո, գյուղատնտեսությունը եկամտաբեր բնագավա՞ռ է, թե՞ ոչ, քանի որ այդ հարցին միարժեք պատասխան չունեն շատերը, անգամ բուն բնագավառում աշխատողները: Գուցե այս հարցի պատասխանը փորձենք գտնել մեկ ուրիշ հարցադրման մեջ. իսկ մեր առողջությունն ապահովելու համար արժե՞ այսքան միջոց ծախսել, թե՞ ոչ, այդ ներդրումներն արդարացվա՞ծ են, թե՞ ոչ: Կարծում եմ՝ պատասխանն ակնհայտ է. մենք պետք է առավելագույնս հոգանք մեր առողջության մասին: Իսկ զուգահեռն այս երկուսի միջև նույնպես ակնհայտ է. որքան կարևոր է մեր առողջության պահպանումը և մենք կանգ չենք առնում այն ապահովելու համար ոչ մի ծախսի առջև, նույնքան կարևոր է հողի առողջության պահպանումը, քանի որ գյուղատնտեսություն ասելով առաջին հերթին նկատի ունենք հողը, և որպեսզի գյուղատնտեսությունը եկամտաբեր լինի, մենք պետք է ունենանք առողջ հող[1]: Այսինքն՝ երկու դեպքում էլ մենք պետք է հասնենք մեր նպատակին, ցանկալի է՝ նվազագույն ծախսերով: Հատկապես որ այդ ջանքերը մեծ չեն. եթե զգում ես բնությունը և քեզ ու հողը դիտարկում որպես բնության մաս, այդպիսի ընկալման հետ մեկտեղ գործում ես ստեղծագործելով և հենվելով հետզհետե ավելացող գիտելիքներիդ վրա, այլ ոչ թե ընդամենը ինչ-որ մեկի հրահանգը կատարում, ապա ծախսերդ՝ լավ հող և հետևապես լավ բերք (ինչպես և լավ առողջություն) ունենալու համար կլինեն նվազագույն: Համենայնդեպս, այսօր կատարվող ծախսերի ընդամենը մեկ երրորդի չափով[2]:

Այս ամենը հավասարապես վերաբերում է մեր երկու տեսակի գյուղատնտեսությանն էլ՝ պայմանականորեն անվանենք դրանք *տնամերձային,* ուր գործում է գյուղացին, և *ապրանքային տնտեսություն,* ուր գործում է ֆերմերը: Սա է մեր այսօրվա գյուղատնտեսության մոդելը, և այն ոչ թե պետք է փոխել, ինչպես առաջարկում են որոշ հեղինակներ, ճիշտ է՝ գյուղատնտեսությանը ոչ այնքան մոտ կանգնած, այլ փորձել իրավիճակը բարելավող լուծումներ գտնել

[1] http://www.anastasia-nn.narod.ru
[2] http://www.viktoriy.ru

[9]: (Փոխելն ինքնանպատակ չէ. փոփոխված իրավիճակում նորից առաջանում են լուծման կարոտ խնդիրներ)[1]:

Ապրանքային տնտեսության դեպքում, որը կարելի է դասել բիզնեսի բնագավառին (և որպես լավ բիզնես այն, իհարկե, եկամտաբեր է և հակառակը), շատ բան ավելի պարզ է, որքանով որ բիզնեսը կարող է պարզ լինել: Վերջերս մոսկովյան հանրահայտ ԻՆՏԵԿՈ շինարարական ընկերությունը վաճառեց ցեմենտի գծով ողջ ակտիվները, որ միջինից բարձր եկամտաբերություն էին ապահովում, և Բելգորոդի մարզում գյուղատնտեսական մեծ տարածքներ ու վերամշակող ձեռնարկություններ գնեց[2]: Նման դեպքերում ճիշտ և ժամանակին կատարված ներդրումները, գրագետ մենեջմենթը և նոր տեխնոլոգիաները կապահովեն միջինից բարձր եկամուտներ, իսկ եթե դրանք որոշ դեպքերում սպասվածից պակաս լինեն, բնագավառին հատուկ՝ «բնության գրկում» գործող սուբյեկտների «ազնվացումը» կդիտվի որպես փոխհատուցում:

Ավելի բարդ է իրավիճակը տնամերձային տնտեսությունների դեպքում [10, էջ 41-66]: Ցանկացած երկրի գյուղատնտեսության պատմությունն անցել է փոքր տնտեսությունների զարգացման բավական տևական փուլ: Միացյալ Նահանգներն, օրինակ, հնարավորին չափ ձգձգեց փոքր տնտեսությունների կոնսոլիդացումը՝ գրեթե ողջ XX դարի ընթացքում, որի նպատակն էր, թող որ ցածր արտադրողականության պայմաններում, բայց հնարավորինս երկար ժամանակ պահպանել երկրի գյուղաշխարհը, որը ազգի ոգու և մշակույթի կարևոր մաս է կազմում: Մենք, կարծես, նման խնդիր չունենք: Մեր խնդիրը՝ ի թիվս մի շարք երկրների, ինչպես նշվում է Համաշխարհային բանկի համաշխարհային գյուղատնտեսությունը մոտ քառորդ դարի կտրվածքով ամփոփող վերլուծական ծավալուն հատորում [11], առաջին հերթին այն է, որ զսպվի գյուղից քաղաք միգրացիան, այսինքն՝ գյուղական աղքատությունը չվերածվի քաղաքային աղքատության, երբ գյուղաբնակը զրկվում է իր վերջին արտադրամիջոցից՝ հողից, իսկ քաղաքը դեռ պատրաստ չէ նրան աշխատատեղ տրամադրել: Ուրեմն, ելքն այն է, որ գյուղացուն տրամադրվեն ժամանակակից տեխնոլոգիաներ, իսկ դրանք առկա են և միանգամայն մատչելի, որպեսզի մինչև քաղաք գալը և գործի անցնելը (դա անխուսափելի է. բնակչության կեսը չի կարող գյուղատնտեսությամբ զբաղվել, այդ թիվը առնվազն մեկ կարգով պետք է փոքր լինի) նա կարողանա արժանապատվությամբ պահպանել գոյությունը[3]:

Գյուղատնտեսության մեջ մեկ այլ հիմնարար խնդիր կարելի է համարել գրեթե մշտապես գոյություն ունեցող գների անհավասարությունը (դիսպարի-

[1] http://www.cnshb.ru
[2] http://www.nsh.ru
[3] http://www.ecology.md

տետը)[1]: Վերջին տասնամյակներին արդյունաբերական ապրանքների գներն աճել են մոտ 5 անգամ ավելի արագ, քան գյուղատնտեսական ապրանքներինը (մինչ այդ 1լ բենզինի և 1 ձվի գները համեմատելի էին, իսկ հիմա՞): Նման իրավիճակից խուսափելու համար պետությունները սովորաբար մշակում են ագրոարդյունաբերական հատվածի երկարաժամկետ զարգացման այսպիսի ռազմավարություն. քանի որ գյուղատնտեսական մթերքի գներն ավելի դանդաղ են աճում, քան արդյունաբերականինը, իսկ շատ անգամ նաև իջեցվում են, որպեսզի ապրանքը կարողանա մնալ սպառման շուկայում, այլ բնագավառների գերշահույթները թաքնված մեխանիզմներով տեղափոխվում են գյուղատնտեսություն՝ անուղղակի դոտացիաների (տոկոսադրույքների սուբսիդավորում, ավանդների երաշխավորում, պետական գնումների միջոցով գների կարգավորում) միջոցով:

Եվ վերջապես, թվարկված հիմնախնդիրներից ամենակարևորը պարենային անվտանգության խնդիրն է: Անգամ ոչ հարուստ հողային ռեսուրսի պայմաններում Հայաստանի համար աննկարելի շռայլություն է սննդամթերքի ներկրումն այդ չափերով: Գրագետ ագրարային քաղաքականություն վարելու դեպքում և հաշվի առնելով մեր վերջին աշխատությունում բերված հիմնադրույթները՝ երկրի սպառողական շուկան միայն հատուկ պատվիրված ապրանքների ներկրման կարիք կունենա, այլ ոչ թե ինչպես հիմա է՝ ամենօրյա սննդամթերքի [3]: Տեղական արտադրանքի խթանման բազմաթիվ մեխանիզմներ գոյություն ունեն, այդ թվում՝ պարզագույնը, երբ մեզանում արդեն թափ հավաքող խոշոր առևտրային ցանցը շրջանառու միջոցների համար ցածր տոկոսադրույքով պետության երաշխավորմամբ վարկեր կստանա կամ որոշ դեպքերում կազատվի հարկերի մի մասից, եթե տեղական արտադրանքի տոկոսը լինի ոչ պակաս, քան, ասենք, ողջ տեսականիի 2/3-ը: Դրանով, հիմնական խնդրի լուծման հետ, կշահեն գյուղմթերքի արտադրողից դեպի սպառող տանող շղթայի կարևոր եզրային անդամները, այլ ոչ թե աստիճանաբար բազմացող միջնորդները:

Բազմատեսակ կարգավորումներ պահանջող այս հիմնախնդիրների ընդհանուր բանալին այն է, ինչ կոչվում է օրգանական երկրագործություն [12]: Այս անվանումը տասնյակից ավելի ժամանակակից (կամ վաղուց մոռացված) ուղղություններից և անվանումներից ամենաօգտագործվողն է[2], իսկ դրանց բոլորի նպատակը՝ հիմնականում ոչ էական տարբերակումներով, այն է, որ գյուղատնտեսական արտադրանքը ստացվում է առանց բնության հաշվեկշռի խախտման, նվազագույն էներգետիկ և ֆինանսական ծախսերով, բարձր համային հատկանիշներով և անցանկալի նյութերից միանգամայն զուրկ[3]: Եվ ամենակարևորն այն է, որ այս բոլորը հավասարապես կիրառելի են թե՛ ֆեր-

[1] http://www.fadr.msu.ru
[2] http://www.ifoam.org
[3] http://www.goldenhill.ru

մերային, թե՛ փոքր՝ գյուղացիական տնտեսություններում:

Վերջին պարբերությունում շոշափված նյութը հատորներով ծավալվելու հնարավորություն է տալիս և առանձին ներկայացնելու կարիք ունի: Համենայնդեպս այնքան ժամանակ, մինչև չստանա պետական ծրագրի տեսք:

9. Մեր անելիքները՝ ընդհանուրի համատեքստում

1. Կոնսոլիդացնել նոր տեսլական և կառավարման ժամանակակից ընկալում ունեցող մարդկային և ինստիտուցիոնալ ռեսուրսը, որը ոչ միայն զարգացման ռազմավարություն և դրա իրականացման քայլերը կմշակի, այլև անհրաժեշտության դեպքում հանդես կգա օրենսդրական ուղիներ հարթելու պատրաստակամությամբ՝ նախաձեռնություն, որն ավելի շատ ի վիճակի են իրականացնել կարող հասարակությունն ու կառավարությունը, քան անկարող ազգային ժողովը:
2. Ներդնել եկամուտների հայտարարագրման նոր տոտալ համակարգ՝ մոնոպոլիստների գերեկամուտների հարաճուն հարկմամբ, ֆիզիկական անձանց և այն սուբյեկտների հարկման մեղմացմամբ, ովքեր պատրաստ են ներդրումներ կատարել կրթության, մշակույթի և սոցիալական ոլորտներում:
3. Ընդունել երկրի զարգացման օրենք, որտեղ, զարգացման հիմնական գերակա ուղղություններից և դրան նպաստող գործողությունները խթանող օրենսդրական մթնոլորտ ապահովելուց բացի, նորմեր և խիստ պատժաչափեր մշակվեն այն խախտումների համար, որոնք արդեն բերել են քաղաքային լանդշաֆթի դեգրադացման և առանց որի վերացման որևէ առաջընթացի և զարգացման մասին անիմաստ է խոսել: Հարցը կկարգավորվի կոշտ վարձավճար սահմանելու միջոցով, որը «համարձակ սեփականատերն» անկարող կլինի վճարել և ստիպված կլինի հանձնել այն պետությանը (որն էլ օպտիմալ ձևով կտնօրինի այն):
4. Ներմուծել բնօգտագործման նոր ձևեր՝ ագրո- և էկոտուրիզմ, թռչունների և վայրի կենդանիների դիտարկումներ կատարելու ռեկրեացիոն հարթակներ, էկոլոգիական ուսուցման իրականացում կրթական բոլոր աստիճաններում:
5. Նպաստել երկրում քաղաքացիական ակտիվության կայացմանը՝ բարձր էկոլոգիական և սոցիալական պատասխանատվությամբ, բարոյականի նկատմամբ բարձր զգայունությամբ, մերժելով դժկամությունը. անհասցե վրդովմունքի տեղը պետք է զբաղեցնի հասցեագրված զայրույթը և ավելի լավ երկիր կառուցելու վճռականությունը:

Մայիս, 2009թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Haykazyan V.* and *Pretty J.,* Sustainability in Armenia: new challenges for the agricultural sector// Centre for Env. And Soc. Occasional Paper 2006-1, Univ. of Essex, Colchester. UK.
2. *Вайтфилд П.,* Пермакультура-что это?, Санкт-Петербург, 1992.
3. *Հայկազյան Վ.,* Հայաստանի պարենային անվտանգության հիմնախնդիրները // «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի «21-րդ ԴԱՐ» հանդես, # 4, Երևան, 2007:
4. *Ոսկանյան Ա.,* Հայ անհատը և նրա «վիրտուալ հասարակությունը», «D'Arme'nie/ Հայաստանից» երկլեզու հանդես, Printinfo, Erevan, Arme'nie/ Quimper-Cedex, France, 2008.
5. *Айказян В.Ц.,* К вопросу о постановке задачи гармонизации общества // Материалы XVII международного симпозиума "Нетрадиционное растениеводство. Эниология. Экология и здоровье", Симферополь, 2008.
6. *Фром Э.,* "Иметь" или "быть". Аст, Москва, 2008.
7. *Фихте И.Г.,* Замкнутое торговое государство. Избранные сочинения, т. 1, Москва, 1916.
8. *Панов А.Д.,* Завершение планетарного цикла эволюции? // Философские науки, N 3-4, 2005.
9. *Нагдалян Э.,* Нужна новая модель сельского хозяйства // "Деловой Экспресс", N 12, 2009.
10. *Հայկազյան Վ.,* Հայաստանի գյուղատնտեսության խնդիրները և զարգացման հեռանկարները, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի «Հայաստան» տեղեկագիր, #2, Երևան, 2004:
11. World Development Report 2008. Agriculture for Development/ The World Bank, Washington DC, 2007.
12. *Newton J.,* Profitable Organic Farming, BPC, Oxford, UK, 2004.

КОНТУРЫ КОНЦЕПЦИИ УСТОЙЧИВОГО РАЗВИТИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Вардан Айказян

Резюме

В работе сделана попытка на фоне положения дел в мировой экономике, социального и нравственного состояния общества, реальных и возможных путей его развития оценить возможные парадигмы видения места человека в обществе, в природе и космосе. Проанализированы условия, которые могли бы способствовать становлению активного гражданского общества. Предложена новая модель административного деления территории республики, основанная на принципе выделения биосферных губерний и минимизации числа вертикальных зон в них и состоящая из 5 марзов – Ширак, Лори-Тавуш, Гегама, Араратян и Сюник, а также агломерации Еревана с городами-спутниками. Обосновывается привлекательность такого разделения. Приводятся предложения, которые могли бы способствовать устойчивому развитию в отдельных отраслях: образовании, науке, строительстве, сельском хозяйстве.

ՏՊԱԳԻՐ ՆՅՈՒԹԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՆԻՊՈՒԼՅԱՑԻՈՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀՆԱՐՔՆԵՐԸ

Վահրամ Միրաքյան

Հոդվածում ներկայացված են տպագիր լրատվամիջոցներում կիրառվող տեղեկատվա-հոգեբանական (մանիպուլյացիոն) հնարքների առավել հաճախ կիրառվող օրինակները, որոնց նպատակն է ազդել մարդկանց կարծիքների և դիրքորոշումների վրա՝ շեղելով նրանց անհրաժեշտ ուղղությամբ: Տեղեկատվա-հոգեբանական ազդեցության մեթոդները ընդունված ձևակերպումներով ներկայացնելուց հետո կատարվել է ՀՀ տպագիր վեց լրատվամիջոցների մոնիթորինգ, որի արդյունքում ընտրված թերթերը դասակարգվել են ըստ մանիպուլյացիոն ազդեցության երեք աստիճանների՝ հիմնվելով նրանց մանիպուլյացիոն հնարքների կիրառման հաճախակիության և հոգեբանական ազդեցության խորության վրա: Մոնիթորինգի համար ընտրվել է 2008թ. փետրվարը, որովհետև հաջորդելու էին նախագահական ընտրությունները, իսկ այդ շրջանում մամուլի մանիպուլյացիոն հնարքներն ավելի ընդգծված են:

Մանիպուլյացիան տեղեկատվա-հոգեբանական ազդեցության ձևերից է, որն ուղղված է հոգեբանական ազդեցության միջոցով մարդկանց մտավոր ակտիվության ուղղությունն աննկատ փոխելուն [1, c. 180]:

Մանիպուլյացիան ազդում է հայացքների, կարծիքների, ստերեոտիպերի վրա, ինչն էլ իր հերթին ստեղծում է դիրքորոշում, ապա՝ վարք: Անհատի սոցիալականացման, անձնավորություն դառնալու ընթացքի հիմնական արդյունքներից մեկը, նրա ես-կոնցեպցիայի հետ միասին, սոցիալական դիրքորոշումների համակարգի ձևավորումն է: Սոցիալական դիրքորոշումներն անձի հոգեբանական կառուցվածքի կարևորագույն բաղադրիչներն են, միաժամանակ՝ նրան ակտիվացնող հիմնական պատճառը [2, էջ 241]:

Անձի սոցիալականացման, նրա սոցիալական ակտիվության ոչ մի գործընթաց հնարավոր չէ խոր վերլուծության ենթարկել՝ առանց դրանք շարժման մեջ դնող ուժերի, միտումների, դրդապատճառների տեսակներն ու բնույթը բացահայտելու: Իսկ տեղեկատվա-հոգեբանական ազդեցության հնարքները մարդկանց սոցիալական ակտիվության դրդող ուժերից մեկն են: Այս պատճառով նման ազդեցության հնարքների ուսումնասիրությունը կարևոր է նաև մարդ անհատի խմբային սոցիալականացման և հարմարման, սոցիալական ակտի-

վության և պասիվության պատճառները հասկանալու համար:

Կա նաև որոշակի տարբերություն կարծիքի և դիրքորոշման միջև: Կարծիք ունենալ՝ ենթադրում է ունենալ որոշակի գիտելիք և որոշակի արժեքային դատողություններ անել դրա մասին, իսկ դիրքորոշման մեջ տեսակետներն ու պատկերացումները զուգորդվում են հուզական լիցքերով: Եթե որևէ երևույթի մասին կարծիք հայտնելով մենք կարող ենք չհուզվել, ապա դիրքորոշման դեպքում անձն արդեն շահագրգռված է ու չեզոք դիրք ունենալ չի կարող:

Այս պատճառով տեղեկատվա-հոգեբանական ազդեցություն ծրագրավորելու համար անհրաժեշտ է սահմանել՝ նպատակը դիրքորոշումներ ձևավորե՞լն է, թե՞ կարծիք ստեղծելը: Որպես կանոն, առաջինն ավելի բարդ է ու պահանջում է ավելի շատ ժամանակ, քան երկրորդը:

Տպագիր նյութերում մանիպուլյացիոն հնարքները բազմաթիվ են, և անընդհատ ստեղծվում են նորերը, այդ պատճառով դժվար է թվարկել բոլորը, ուստի կթվարկենք այն հիմնական մեթոդները, որոնք մանիպուլյացիայի միջուկն են ու կիրառվում են համեմատաբար ավելի հաճախ:

Պիտակների փակցնում. սա մարդկանց, կազմակերպությունների, գաղափարների, ցանկացած սոցիալական երևույթի պիտակ փակցնելն է [3, c. 195]: Պիտակներ փակցնելը լեզվահոգեբանական մանիպուլյացիոն հնարք է, երբ անձանց կամ գաղափարները վարկաբեկելու համար, նրանց՝ առանց ապացույցների և հիմնավորման, տրվում են «անբարենպաստ բնորոշումներ»: Օրինակ՝ ՀՀՇ-ական ընդդիմությունն իր մամուլի միջոցով ներմուծեց «ավազակապետություն» տերմինը, որով պիտակավորեց ՀՀ վարչակարգը:

Իդեալական կամ փայլուն ընդհանրացում. այս մեթոդի բնույթն այն է, որ փոխվում է սոցիալական երևույթի նշանակությունը՝ գաղափարին, երևույթին, մարդուն ավելի դրական վերաբերմունք առաջացնող ընդհանուր անուն տալու միջոցով: Այս մեթոդն ուղղված է դրական զգացմունքներ, ասոցիացիաներ առաջացնող բառերի ներմուծման միջոցով մարդկանց մեջ դրական վերաբերմունք առաջացնելուն: Նման բառ-ստերեոտիպերից են «հայրենասեր», «ազատություն», «խաղաղություն», «սեր», «հաղթանակ» բառերը:

Տեղափոխում (transfer). այս մեթոդի իմաստը գրագետ ու անտեսանելի ձևով, հարգված, սիրված երևույթների ասոցիացումն է այն օբյեկտի հետ, որն անհրաժեշտ է մանիպուլյատորին: Նույն եղանակով առաջացնում են նաև բացասական զգացումներ, երբ ասոցիացիաներն արվում են սոցիալապես չհանդուրժվող երևույթների հետ: Այս ձևն օգտագործվում է առանց փաստերի օբյեկտի վարկաբեկման դեպքում:

Հեղինակության վկայակոչում. այս հնարքի իմաստն այն է, որ մեջ է բերվում հեղինակությունների խոսքն ինչ-որ երևույթի, անձի նկատմամբ դրական վերաբերմունք առաջացնելու նպատակով: Կարելի է նաև հակառակ արդյունքը ստանալ՝ բացասական հեղինակություններից մեջբերումներ անելով: Ի դեպ, անպայման չէ, որ հեղինակությունը լինի այն ոլորտից և հասկանա այն խնդիրները, որի մասին նա կարծիք է հայտնում: Դրանով է պայմանավորված սիրված երգիչ Ռուբեն Հախվերդյանի աջակցությունը ՀՅԴ-ին կամ դերասան Երվանդ Մանարյանի աջակցությունը ՀՀՇ-ին:

Այս մեթոդը հնարավոր է կիրառել նաև առանց հեղինակության վկայակոչման: Օրինակ՝ «գիտնականների հավաստմամբ», «բժիշկների խորհրդով», «ըստ հավաստի աղբյուրների» և այլն: Այս հնարքի արտահայտումներից մեկն է նաև անանուն աղբյուրը վկայակոչելը:

Խաղաթղթերի վերադասավորում կամ փաստերի վերադասավորում. այս դեպքում ընտրվում և մեկը մյուսի հետևից դասավորվում են միայն դրական կամ միայն բացասական փաստերը կամ կարծիքները՝ լռելով հակառակ կողմի տեսակետների կամ փաստերի մասին: Ծանրակշիռ փաստերի կամ կարծիքների շարադրանքը հնարավորություն է տալիս դրական կամ բացասական վերաբերմունք ստեղծել ընթերցողի մեջ, և եթե հաղորդվող փաստերն անհերքելի են, իսկ կարծիքները՝ հարգված, ընթերցողի մեջ հետագայում հակառակ կարծիք ձևավորելը շատ դժվար է լինում, որովհետև նա արդեն ունի տեղեկատվության անհրաժեշտ պաշար համապատասխան կարծիք ունենալու համար [2, էջ 392]:

Ընդհանուր վագոն կամ կառք՝ նվագախմբով. այս հնարքի ժամանակ հավաքվում են տարբեր դասի և կարգի մարդկանց կարծիքները՝ մեկ խնդրի աջակցության համար, և տպավորություն է ստեղծվում, թե բոլորի կարծիքը տվյալ հարցում համընկնում է: Նման հնարքի օգտագործման դեպքում նախադասությունը կարող է սկսվել այսպես. «Բոլոր նորմալ մարդիկ հասկանում են, որ…», «Ոչ մի խելամիտ մարդ չի հակաճառի, որ…» և այլն: Մանիպուլյացիայի ենթարկվողը, «սպիտակ ագռավ» չդիտվելու համար, ընդունում է մատուցվող թեզը՝ հաճախ՝ ենթագիտակցորեն: Բացի այդ, մարդիկ հակված են ընդունել մեծամասնության կարծիքը: Դրանով է պայմանավորված, օրինակ, այն, որ ընտրություններից առաջ բոլոր քաղաքական գործիչները պնդում են, թե իրենք են հավաքելու մեծամասնության ձայները: Այս միտումը սոցիալական հարմարվողականության (կոնֆորմիզմի) արտահայտություններից մեկն է [4, էջ 44]:

Ծաղր. այս դեպքում ծաղրի կարելի է ենթարկել ինչպես կոնկրետ անձանց, այնպես էլ հայացքներ, մարդկանց միավորումների, գաղափարներ և այլն: Այս հնարքի հզորությունն այն է, որ հումորը շրջանցում է այն հոգեբա-

նական արգելքները, որոնք կարող էին առաջանալ նույն տեղեկատվության «չոր» մատուցման դեպքում: Այս պատճառով հումորն ամենաուժեղ քարոզչական հնարքներից է: Հետազոտությունները ցույց են տվել, որ մարդկանց մեջ դիրքորոշումների առաջացումն ու դրանց փոփոխությունները, հույզերի օգտագործման շնորհիվ, հեշտանում են [2, էջ 347]:

Օբյեկտիվ հոդված կամ խնդրի բազմակողմանի դիտարկում. այս հնարքի ժամանակ ընթերցողին ներկայացվում են տարբեր կարծիքներ ինչ-որ խնդրի վերաբերյալ, միևնույն ժամանակ՝ կոմունիկատորին ցանկալի տեղեկատվությունը դիտարկվում է ավելի շահեկան տեսանկյունից: Հնարավոր է նաև անհրաժեշտ տեսակետը տեղադրել հակառակ տեսակետի հետ, միևնույն ժամանակ հակառակ տեսակետը պետք է լինի ավելի թույլ:

Բամբասանք. նախատեսված է հանրության մեջ կարծիք ձևավորող տեղեկատվության տարածման համար, որը չի համապատասխանում իրականությանը կամ հնարավոր չէ տարածել պաշտոնական աղբյուրներից: Բամբասանքի միջոցով կարելի է տարածել վարկաբեկող, ապակողմնորոշող տեղեկատվություն: Ապացուցված է, որ որքան ավելի անհավատալի է բամբասանքի բովանդակությունը, այնքան հեշտությամբ է այն տարածվում [5, էջ 499]: Այս հնարքի ժամանակ նյութում որպես աղբյուր գրվում է. «ինչպես ժողովուրդն է խոսում…», «ըստ վերջերս տարածված լուրերի…» և այլն: Այս մեթոդով հիմնականում աշխատում է «դեղին մամուլը»:

Տեղեկատվության բնույթից ելնելով՝ բամբասանքը լինում է չորս տեսակի.

- բացարձակ սուտ բամբասանք
- սուտ բամբասանք՝ ճշմարտության տարրերով
- ճշմարտանման բամբասանք
- ճշմարիտ բամբասանք ստի տարրերով:

Պատճառահետևանքային կապի մոլորություններ. մարդկանց մեծամասնությունը մտածում է «պատճառ-հետևանք» կառուցվածքով: Հաճախ մի իրադարձության պատճառահետևանքային կապն օգտագործվում է այլ՝ «օրիգինալի» հետ կապ չունեցող իրադարձությունը բացատրելու համար:

Արևմուտքում գոյություն ունեցող արժեքների կամ օրենքների վկայակոչումով քննադատվում են ներքին խնդիրներ, առանց որևէ ուսումնասիրության, թե համապատասխանում են դրանք արդյոք մեր կենսակերպին, մտածողությանը, ավանդույթներին:

Գովերգում. այս մեթոդն օգտագործվում է ինչ-որ երևույթի կամ անձի նկատմամբ բացասական վերաբերմունք ստեղծելու համար՝ տեղին ու որ ավելի կարևոր է՝ անտեղի գովերգության միջոցով: Շատ արագ դա բոլորին

ձանձրացնում է, և հասարակությունում գովերգվողի անունը սկսում է զայրույթ առաջացնել: Այս մեթոդը կիրառողներին մեղադրելը շատ դժվար է, որովհետև փաստացի վարկաբեկում տեղի չի ունենում:

Հակափաստարկ. «անցանկալի» թեկնածուի բարձրացրած թեման «կոտրելու» հնարքներից է: Նյութի սկզբում հայտարարելով «հակառակորդ» թեկնածուի մեղադրանքները, թեմայի մեջ խորանալով և հակափաստարկներ ներկայացնելով՝ թերթը սկսում է կասկածել դրանց ճշմարտացիությանը, իսկ հոդվածի վերջում հանգում է «թշնամական» թեզի դատապարտմանը:

Լռության պարույր. սրա իմաստը հետևյալն է. հասարակական կարծիքի կեղծ հարցումներին հղում անելով՝ քաղաքացիներին համոզում են աջակցել «հասարակության մեծամասնության» համակրանքը վայելող քաղաքական դիրքորոշմանը: Դա ստիպում է այլ դիրքորոշում ունեցող մարդկանց փոխել այն՝ սոցիալ-հոգեբանական մեկուսացումից խուսափելու համար: Ընդդիմադիր կարծիքի լռության ֆոնն՝ «իրական կամ կարծեցյալ մեծամասնության» ձայնն առավել ուժեղ է հնչում, և սա ավելի է դրդում տատանվողներին համաձայնել «մեծամասնության կարծիքին»:

Լռեցում կամ տեղեկատվական շրջափակում. այս հնարքի միջոցով «թշնամուն» զրկում են իր տեսակետները հայտնելու հնարավորությունից: ԶԼՄ-ն տեղեկատվական շրջափակման են ենթարկում իրադարձությունը՝ նույնիսկ այն դեպքում, երբ անդրադառնում են դրան: Օրինակ՝ Թուրքիայի կողմից Հայաստանի տնտեսական շրջափակումն արևմտյան մամուլում ներկայացվում է «փակ սահմաններ» չպարտավորեցնող արտահայտությամբ և այլն:

Կարծրատիպերի օգտագործում. կարծրատիպը (ստերեոտիպ) որևէ երևույթի պարզեցված, սխեմայացված ընկալումն է: Միանգամայն բնական է նույնական հատկանիշներով մի խումբ անհատների որոշակի «սոցիալական տիպեր» վերագրելը: Ժամանակի ընթացքում այս պատկերը, ամրագրվելով մարդկային գիտակցության մեջ, կարծրատիպով համեմված տեղեկատվության հանդիպելիս, փորձնական ստուգման այլևս չի ենթարկվում և մարսվում է «հում»:

1. Մանիպուլյացիոն հնարքների կիրառումը հայկական տպագիր լրատվամիջոցներում

Առանձնացվում է մանիպուլյացիոն ազդեցության երեք աստիճան.

- Մարդկանց ուղեղներում եղած գաղափարների, նորմերի, արժեքների խորացում:

- Երկրորդ մակարդակը գործում է ինչ-որ իրադարձությունների, գործընթացների վերաբերյալ անհատների հայացքները փոքր փոփոխությունների ենթարկելու ուղղությամբ: Այն նաև ինչ-որ երևույթի նկատմամբ զգայական, պրակտիկ վերաբերմունք է առաջացնում:
- Մարդկանց ուղեղների, մտածելակերպի արմատական փոփոխում՝ սենսացիոն, անսովոր, նրանց համար կարևոր տեղեկատվություն հաղորդելու միջոցով [1, стр. 182]:

Մանիպուլյացիայի միջոցով կարելի է հասնել մտածելակերպի փոփոխության առաջին երկու մակարդակներում: Հայացքների, մտածելակերպի արմատական փոփոխության, որը երրորդ մակարդակի խնդիրն է, կարելի է հասնել երկարաժամկետ հատվածում, և պահանջվում են, բացի ԶԼՄ-ից, նաև այլ ոլորտների համատեղ գործողություններ:

2. Հայաստանի տպագիր լրատվամիջոցների մոնիթորինգի հաշվետվություն

I. Ընդհանուր տեղեկություններ

Հայաստանի տպագիր լրատվամիջոցների մոնիթորինգն իրականացվել է մեկ ամսվա կտրվածքով՝ 2008թ. փետրվարի 1-28-ը: Մոնիթորինգը նպատակ ուներ քանակական տվյալներ ստանալու և վերլուծելու միջոցով պարզել՝

- հայկական տպագիր լրատվամիջոցներում կիրառվող հիմնական մանիպուլյացիոն հնարքները,
- դասակարգել դրանք՝ վերոնշյալ մանիպուլյացիոն երեք աստիճաններին համապատասխան, ըստ մանիպուլյացիոն հնարքների օգտագործման քանակի և մակարդակի:

Մոնիթորինգի են ենթարկվել Հայաստանի 6 տպագիր ԶԼՄ («Ազգ» օրաթերթ, տպաքանակը՝ 3000 օրինակ, «Առավոտ» օրաթերթ, տպաքանակը՝ 3000 օրինակ, «Հայկական ժամանակ» օրաթերթ, տպաքանակը՝ 8000 օրինակ, «Հայք» օրաթերթ, տպաքանակը՝ 3000 օրինակ, «Հայոց աշխարհ» օրաթերթ, տպաքանակը՝ 3500 օրինակ) 2008թ. փետրվարի բոլոր համարների հոդվածներն ու վերլուծությունները: Ընտրվել են համեմատաբար մեծ լսարան ունեցող թերթեր:

II. Մեթոդաբանությունը

Մոնիթորիգի մեթոդաբանությունը ներկայացնում է ԶԼՄ-ից համապատասխան բովանդակությամբ հոդվածների դուրսբերում և դրանց դասակարգում՝ ըստ վերոնշյալ մանիպուլյացիոն ազդեցության երեք աստիճանների՝

հիմնվելով նրանց մանիպուլյացիոն հնարքների կիրառման հաճախակիության և հոգեբանական ազդեցության խորության վրա:

Կանդրադառնանք 2008թ. Հայաստանի նախագահական ընտրարշավի ընթացքում, փետրվարի 1-28-ն ընկած հատվածում տպագիր մամուլում այդ հնարքների կիրառման օրինակներին՝ նշելով կիրառված մանիպուլյացիոն հնարքի անվանումը: Նշված ժամանակահատվածում ուսումնասիրվել են ընտրված պարբերականների բոլոր համարները և դուրս են բերվել ամենավառ և կրկնվող օրինակները: Գործնականում, նույն քարոզչական համատեքստում հաճախ կիրառվում է մեկից ավելի մեթոդ, կամ՝ մեթոդը կիրառվում է այլ մեթոդների համադրությամբ:

Յուրաքանչյուր թերթից կներկայացվեն ավելի հաճախ հանդիպող և տվյալ պարբերականին բնորոշ մանիպուլյացիոն հնարքների օրինակներ:

III. Մոնիթորինգ

«Հայք» օրաթերթ (փետրվար 2008)

Այս պարբերականում մանիպուլյացիոն հնարքների օրինակները բազմաթիվ են, ուստի ներկայացնում ենք ամենից հաճախ հանդիպող և վառ օրինակները:

Հեղինակության խոսք և հակափաստարկ. «Հայքի» փետրվարի 12-ի համարում տպագրված՝ «Երկրի նախագահը չպետք է լինի խաղամոլ կամ թմրամոլ» վերնագրով հոդվածում պարբերականը հակափաստարկներով է պատասխանում Սերժ Սարգսյանի և Ռոբերտ Քոչարյանի այն հայտարարություններին, ըստ որոնց՝ Լևոն Տեր-Պետրոսյանը, երկրի նախագահ դառնալուց հետո, պատրաստվում է հանձնել ԼՂՀ-ն: Հոդվածում ներկայացված են այս հարցի վերաբերյալ Վարդաշենի քրեակատարողական հիմնարկում գտնվող Վարդան Մալխասյանի՝ իբրև ռազմական հեղինակության, հայտնի ազատամարտիկի, դիտարկումները: Նա նշում է. «Բոլոր այն վայրահաչություններն ու բամբասանքները, թե իբր Լևոն Տեր-Պետրոսյանը գալիս է Արցախը հանձնելու, ամբողջությամբ զրպարտանքներ են և տգիտություն: Հակառակը, Սերժն է պատրաստ հանձնել Ղարաբաղը՝ բոլոր առումներով»: Այնուհետև «Հայքը» գրում է, թե Լևոն Տեր-Պետրոսյանը գալիս է ինչպես Ղարաբաղը, այնպես էլ ողջ Հայաստանը փրկելու վերահաս կործանումից: Ղարաբաղը ազատող նախագահը երբեք այն չի հանձնի»:

Մեծամասնության էֆեկտ կամ լռության պարույր. փետրվարի 12-ի «Ցածր վարկանիշ» վերնագրված լուրում «Հայքը» գրում է. «Լրագիր.am» կայքի տեղեկացմամբ՝ *«Populus»-ի* անցկացրած հարցման տվյալները Սերժ Սարգսյանի շտաբում ոգևորություն չեն առաջացրել: ՀՀԿ-ն ներքին օգտագործման

համար նույնպես հարցում է անցկացնում, որի մասին հայտնել են ՀՀԿ պատասխանատուները, և որի տվյալները մտահոգիչ են այդ կուսակցության համար: Ըստ դրանց՝ Երևանում Սերժ Սարգսյանն առաջատար եռյակում է, բայց ոչ առաջինը և ոչ ջախջախիչ առավելությամբ, ինչպես հայտարարում են ԶԼՄ-ները: **ՀՀԿ-ին մոտ կանգնած աղբյուրները** (**Բամբասանք- Վ.Մ.**) մեզ տեղեկացրին, որ Ս.Սարգսյանի իրական վարկանիշը Երևանում չի գերազանցում 15, իսկ մարզերում՝ 12 տոկոսը»:

Այստեղ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանը ներկայացվում է որպես փոքրամասնության ընտրյալ՝ հղում անելով սոցհարցմանը: Ըստ էության, թերթը փորձում է չեզոքացնել նույն *«Populus»-ի* հարցումների հիման վրա իշխանամետ ԶԼՄ-ի ստեղծած լռության պարույրի ազդեցությունը, որոնք Սերժ Սարգսյանի այլ վարկանիշ էին քարոզում՝ իբրև մեծամասնության թեկնածու: Ընդ որում՝ սոցհարցման տվյալները «Հայքի» հրապարակման պարագայում պաշտոնական չեն (ստացված են անհայտ, «ներքին» աղբյուրներից), ուստի ավելի քիչ վստահություն են ներշնչում:

Տեղեկատվության խլացում հակափաստարկներով. փետրվարի 15-ի՝ «Աղքատներին խաբելու ժամանակը» վերնագրված հոդվածում «Հայքը» գրում է. «Երեկ նույնպես ՀՀ վարչապետ Ս.Սարգսյանը քարոզարշավի էր մեկնել: Հերթական անգամ նա ելույթներ է ունեցել և հերթական խոստումները տվել: Ասել է, որ աղքատությունը մեր թշնամին է, և ինքը կվերացնի այդ աղքատությունը: Բայց մինչ նա այդ մասին հերթական քարոզն էր կարդում մարզերում, աղքատությունը հերթական անգամ եկել չոքել էր կառավարության շենքի առջև: Դրանք պետական կարիքներից տուժած քաղաքացիներն են՝ Հյուսիսային պողոտայի, Բուզանդի, Եզնիկ Կողբացու, Նորքի այգիների, Աղբյուր Սերոբի և այլ փողոցների բնակիչները, Դալմայի այգիների սեփականատերերը»:

«Հայոց աշխարհ» օրաթերթ (փետրվար 2008)

Պիտակավորում և ծաղր. փետրվարի 22-ի «Լևոնի վկաներ» վերնագրով հոդվածում Գագիկ Մկրտչյանը գրում է. «Վերջերս հայոց աշխարհում հայտնվել է ծայրաստիճան ակտիվ ու ագրեսիվ քաղաքացիների մի խումբ, որին ժողովուրդը տվել է «Լևոնի վկաներ» անվանումը: Օգտագործելով «Լևոնի վկաներ» անունը՝ հեղինակը ցանկացել է ոչ միայն պիտակավորել, այլ նաև ծաղրել ու անլուրջ, ցնորական իմաստներ հաղորդել հասարակության այն զանգվածի գործողություններին, որոնք սատարում էին Լևոն Տեր-Պետրոսյանին: Գիտակցելով աղանդավորների հանդեպ ունեցած շատերի բացասական, նաև թշնամական վերաբերմունքը՝ «Հայոց աշխարհ»-ը, որն իր թերթի էջերում բազմիցս անդրադարձել է զանազան աղանդների վնասակար և հակապետական գործունեությանը, հանրահավաքի մասնակիցներին զուգորդում է «Եհովայի վկաներ» աղանդի հետ:

Փոխաբերություն կամ ծաղր. փետրվարի 26-ի համարում «Պայքար ոչ թե հանուն իշխանության, այլ իշխանության դեմ» վերնագրով հոդվածում Գ.Մկրտչյանը Թատերական հրապարակում հավաքված հանրությանը համեմատում է հրաշքների աշխարհում հայտնված Ալիսայի հետ: Նա գրում է, որ Ալիսան սկզբում զվարճանում էր, հետո, ինչպես վայել է անդաստիարակ աշխարհում հայտնված դաստիարակված մարդուն, փորձում է հարմարվել և խաղալ այդ խաղի կանոններով, մինչև տեսնում է, որ դրանք բացակայում են, այնուհետև՝ տեղի է ունենում զայրույթ և բաղձալի արթնացում. «….երեխային հիմարացնելն առավել դժվար է, նա ներզգացողաբար հասկանում է լավն ու վատը, չէ՞ որ հենց երեխան էր, որ բացականչեց՝ թագավորը մերկ է»:

Պիտակավորում. փետրվարի մի շարք համարներում այս պարբերականն առաջին նախագահի աջակիցներին անվանում է նեոբոլշևիկներ, ինչը պիտակավորման դասական օրինակ է և վարկաբեկման նպատակ ունի: Օրինակ՝ փետրվարի 16-ի համարում՝ «Ինչու է մեզանում անհնար գունավոր հեղափոխությունը» վերնագրով հոդվածում նշվում է. «…Նրանում, որ նեոբոլշևիկները Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ, ջախջախիչ պարտություն կրելով ընտրություններում, կփորձեն ռևանշ վերցնել փողոցում, քչերն են կասկածում…»:

«Հայոց աշխարհ» օրաթերթը կարելի է դասակարգել մանիպուլյացիոն ազդեցության երրորդ մակարդակին համապատասխան, որը ենթադրում է ուղեղների, մտածելակերպի արմատական փոփոխում՝ սենսացիոն, անսովոր, նրանց համար կարևոր տեղեկատվություն հաղորդելու միջոցով:

«Ազգ» օրաթերթ (փետրվար 2008)

Հեղինակության վկայակոչում. Փետրվարի 15-ի համարում «Ժողովուրդը բախումների գնալու ցանկություն չունի. Տեր-Պետրոսյանն իր հետ վտանգ է բերում» նյութը անդրադառնում է բանաստեղծ Ռազմիկ Դավոյանի խոսքերին. Ռ.Դավոյանը ընդդիմության թեկնածուին ենթարկում է ամենասուր քննադատությունների, որոնց շարքում «ամենաազդեցիկն» այն է, որ 1989թ. Լ.Տ.-Պետրոսյանը «250.000 մարդ զոհելով՝ ուզում էր գալ իշխանության»:

Կարծիքի առաջատարներ. այս մեթոդի կիրառման օրինակ է փետրվարի 27-ին հրապարակված «Լևոն Տեր-Պետրոսյանը 10 տարի ուսումնասիրել է հոգեբանական բոլոր հնարքները» նյութը, որում հեղինակը վկայակոչում է հայտնի հոգեբան Կարինե Նալչաջյանի խոսքերը: Համաձայն դրանց՝ «քարոզարշավի հենց սկզբից մարդկանց որպես գործիք օգտագործած» Լ.Տ.-Պետրոսյանը հետընտրական հանրահավաքներում մարդկանց նկատմամբ կիրառել է «հասարակական մարդու», «պիտակներ փակցնելու», «փայլուն ընդհանրացումների», «տրանսֆերտի՝ փոխանցման» հոգեբանական հնարքները: Լրագրողը նյութը եզրափակում է հոգեբանի հոռետեսական կանխատեսումով. «Իր

պարտության հետ հաշտվելուց համառորեն հրաժարվող լեռնական թևն այս պահին օգտագործում է երիտասարդների հուզական պոռթկումները՝ իրենց ճանապարհին խոչընդոտող ամեն ինչ ավերելու, ջարդելու տենչով, իսկ ի՞նչ կլինի դրանից հետո՝ այդ երիտասարդները չեն գիտակցում, որովհետև մի քանի ամսվա ընթացքում նրանց գիտակցությունը դարձրել են թունելային»:

«Ազգ» օրաթերթի հրապարակումների մեկամսյա ուսումնասիրության արդյունքից կարելի է ենթադրել, որ այն գործում է մանիպուլյացիոն ազդեցության առաջին մակարդակին համապատասխան՝ մարդկանց ուղեղներում եղած գաղափարների, նորմերի, արժեքների խորացում:

«Առավոտ» օրաթերթ (փետրվար 2008)

Բամբասանք/երգիծանք. նախատեսված է հանրության մեջ կարծիք ձևավորող այնպիսի տեղեկատվության տարածման համար, որը չի համապատասխանում իրականությանը կամ որը հնարավոր չէ (տարբեր պատճառներով) տարածել պաշտոնական աղբյուրներով:

Այս մեթոդը կիրառվել է փետրվարի 5-ի գլխավոր հոդվածում, որտեղ գրված է. «….Փետրվարի 3-ին Ազատության հրապարակում հավաքվածների համար Սանատրուկ Սահակյանն ընթերցեց իր այս ստեղծագործությունը. «Դռները բացեք, Գարուն է գալիս: Գարուն է գալիս՝ Սերժն է լալիս, Ինչո՞ւ է լալիս, Արթուրն է գալիս, Դռները բացեք, Արթո՛ւրն է գալիս»:

Հեղինակը գտել է տարբերակ՝ ասելու համար, թե Արթուր Բաղդասարյանը միանալու է ընդդիմությանը, միևնույն ժամանակ խուսափելով պատասխանատվությունից ստի համար:

Նույն համարի խմբագրականում Արամ Աբրահամյանը (շարժվելով Գեբելսի օրինակով, ով ասում էր, որ քարոզչության արդյունքն ապահովված է միայն այն ժամանակ, երբ հանրությունը չի կասկածում, որ իրեն քարոզչության են ենթարկում) գրում է. «Ինչքան ուզում ես՝ գրիր, հավաստիացրու (ուզում ես՝ նույնիսկ երդվիր), որ «Առավոտը» ոչ մի բան և ոչ մեկին չի քարոզում կամ հակաքարոզում, որ մենք որևէ նյութ չենք տեղադրում որևէ անձին հաճույք կամ ցավ պատճառելու նպատակով, միևնույն է՝ նման կասկածները չեն փարատվելու»: Սրանով հանդերձ՝ նույն համարի առաջին երկու մեծ հոդվածը նվիրում է նախագահի թեկնածու Լ. Տեր-Պետրոսյանի քարոզարշավի լուսաբանմանը:

Խաղաթղթերի վերադասավորում. այս հնարքի ժամանակ ընտրվում և մեկը մյուսի հետևից դասավորվում են միայն դրական կամ միայն բացասական փաստերը կամ կարծիքները՝ լռելով հակառակ կողմի տեսակետների կամ փաստերի մասին:

Փետրվարի 8-ի համարում նախագահի թեկնածու Ս.Սարգսյանի ելույթը լուսաբանող նյութը սկսվում էր շատ անորոշ ձևակերպումով. «ՀՀ վարչապետ,

նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանը Լոռու մարզում հայտարարեց, որ ինքը խոսում է և՛ «հանուն», և՛ «ընդդեմ», իսկ ողջ նյութում, որը հանրահավաքի լուսաբանման մասին է, բերվում են փաստեր այն մասին, թե ինչպես են մարդկանց ստիպելով բերել հանրահավաքի: Միայն բացասական փաստերի դասավորման միջոցով կարդացողի մեջ տպավորություն է ստեղծվում, թե բոլորին հանրահավաքի բերել են ստիպելով, և միևնույն ժամանակ լրագրողը ներկայացնում է իրական փաստեր:

Լ.Տեր-Պետրոսյանի ելույթը լուսաբանող նյութը, ի տարբերություն նախորդի, սկսվում է շատ կոնկրետ ձևակերպումով. «Մենք արդեն հաղթած ենք»: Սրանք էին ՀՀ առաջին նախագահի պատգամները լոռեցիներին: Իսկ նյութում տեղադրված փաստերը մյուս թեկնածուին նվիրված նյութի հակապատկերն են ու ներկայացնում են, թե ինչպես են լոռեցիները ոգևորությամբ եկել ելույթը լսելու:

Պիտակների փակցնում. փետրվարի 13-ի համարում հանդիպում ենք «Գիտնականները գովեցին Սերժին» վերնագրով նյութին, որտեղ, ճիշտ է՝ պիտակներ չեն փակցվում, բայց երբ թեկնածու Սերժ Սարգսյանը կանոնավորապես անվանվում է Սերժ, իսկ Լ. Տեր-Պետրոսյանը՝ «ՀՀ առաջին նախագահ, նախագահի թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյան», դա արդեն վերաբերմունք է ձևավորում ընթերցողների շրջանում:

Հաշվի առնելով մանիպուլյացիոն ազդեցության տեխնոլոգիաները՝ «Առավոտը» կդասվի մանիպուլյացիոն ազդեցության երկրորդ աստիճանում:

«Հայկական ժամանակ» օրաթերթ (փետրվար 2008)

Պատճառահետևանքային կապի մոլորություններ. այս հնարքի օգտագործման փայլուն օրինակ է փետրվարի 5-ի՝ «Ով չգիտի աշխարհագրություն» նյութը: Այստեղ փաստերով նշվում է, թե Հայաստանը, Թուրքիայի և Ադրբեջանի տարածքով, արտաքին աշխարհի հետ կապվելու մեծ հնարավորություններ ունի, որոնք, սակայն, չի օգտագործում «քաղաքական դրդապատճառներով»՝ «մոռանալով» նշել, որ Ադրբեջանն ու Թուրքիան իրենք են շրջափակել Հայաստանը, և որ այդ երկրները գործնականում թշնամական քաղաքականություն են վարում Հայաստանի դեմ: Այսինքն՝ այդ հրապարակման մեջ թույլ է տրված տրամաբանական և փաստացի պատճառահետևանքային կապի սխալ, քանի որ այն ենթադրում է, թե Հայաստանը/հայ ժողովուրդը պատասխանատու է նշված երկրների կողմից շրջափակման մեջ գտնվելու համար, և շրջափակումը վերացնելը Հայաստանի/հայ ժողովրդի քաղաքական հնարավորությունների սահմաններում է, սակայն իրականում Ադրբեջանի ու Թուրքիայի գլխավոր նպատակը Հայաստանի ոչնչացումն է, ինչն ապացուցվում է նրանց տասնամյակներ տևած և այժմ էլ շարունակվող քաղաքականությամբ:

«…Սրանք են մեր երկաթուղու հնարավորությունները, որոնք, սակայն, տեսական են դարձել միայն քաղաքական դրդապատճառներով: Այս ուղղու-

թյունները վերագործարկելու համար տեխնիկական որևէ դժվարություն չկա: Բայց նշված 4 ուղղություններից գործում է միայն մեկը՝ դեպի Վրաստան ուղղությունը, այն էլ՝ իր հնարավորությունների կեսով: Այսինքն՝ Հայաստանի արտաքին առևտրի համար գոյություն ունեցող երկաթուղային հնարավորությունների միայն ութերորդ մասն ենք օգտագործում կամ մի 12%-ը: Ավտոմոբիլային ճանապարհների պարագայում ևս վիճակը գրեթե նույնն է: Չեն գործում Ադրբեջանի տարածքով անցնող այն ավտոճանապարհները, որոնք անցնում են Ադրբեջանի տարածքով…»:

Անանուն աղբյուրների վկայակոչում. փետրվարի 8-ի համարում կար այսպիսի նյութ. «Լոս Անջելեսի մեր աղբյուրները պնդում են, որ վերջին շրջանում ամերիկահայերով լեցուն այդ քաղաքում տարօրինակ բաներ են կատարվում: Ըստ այդմ, վերջին 15 օրերում Լոս Անջելես են տեղափոխվել ՀՀ բարձրաստիճան պաշտոնյաների ընտանիքներ»:

Այս հնարքը «Հայկական ժամանակ» օրաթերթում ամենաշատ կիրառվողներից է ու նկատվում է գրեթե բոլոր համարներում:

Խաղաթղթերի վերադասավորում կամ փաստերի վերադասավորում. փետրվարի 8-ի համարում կա Հայաստանի արդյունաբերությանը վերաբերող նյութ հետևյալ վերնագրով՝ «Հայաստանի արդյունաբերության անցած տարվա ցուցանիշներն ուսումնասիրելով՝ ակամա հանգում ես այն եզրակացության, որ Հայաստանում արդյունաբերության առանձին ոլորտներ, եթե այսպես շարունակվի, ընդհանրապես կվերանան», որտեղ բերվում են փաստեր միայն տնտեսական հետընթաց ապրած ճյուղերի մասին:

«Հայկական ժամանակ» օրաթերթը կարելի է դասել երրորդ մակարդակում, որը ենթադրում է մարդկանց ուղեղների, մտածելակերպի արմատական փոփոխում՝ սենսացիոն, անսովոր, կոշտ տեղեկատվություն հաղորդելու միջոցով:

Մեր ուսումնասիրած հայկական տպագիր լրատվամիջոցները դասակարգված են ստորև՝ ըստ մանիպուլյացիոն ազդեցության մակարդակների

1-ին մակարդակ. մարդկանց ուղեղներում եղած գաղափարների, նորմերի, արժեքների խորացում	**2-րդ մակարդակ.** իրադարձությունների, գործընթացների վերաբերյալ անհատների հայացքներում փոքր փոփոխություններ: Այն նաև ինչ-որ երևույթի նկատմամբ զգայական վերաբերմունք է առաջացնում	**3-րդ մակարդակ.** մտածելակերպի արմատական փոփոխում՝ սենսացիոն, անսովոր, լսարանի համար կարևոր տեղեկատվություն հաղորդելու միջոցով
«Ազգ» օրաթերթ	**«Առավոտ» օրաթերթ**	**«Հայկական ժամանակ» օրաթերթ**
«Հայք» օրաթերթ		**«Հայոց աշխարհ» օրաթերթ**

Ապրիլ, 2009թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Вепринцев В.Б., Манойло А.В., Петренко А.И., Фролов Д.Б.,* Операции информационно-психологической войны, Краткий энциклопедический словарь-справочник, М., 2005.
2. *Նալչաջյան Ա.*, Սոցիալական հոգեբանություն, «Զանգակ», Երևան, 2004:
3. *Панарин И.Н.,* Информационная война, PR и мировая политика, М., Горячая линия-Телеком, 2006.
4. *Նալչաջյան Ա.Ա.,* Պրոպագանդիստական գործունեության հոգեբանական հարցերը, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1984:
5. «Հայրենիք և ծառայություն», ՀՀ ՊՆ, Երևան, 2001:

МАНИПУЛЯЦИОННЫЕ МЕТОДЫ ВОЗДЕЙСТВИЯ В ПЕЧАТНЫХ СМИ

Ваграм Миракян

Резюме

В настоящее время владение манипуляционными технологиями, а также эффективное и целенаправленное их использование стало одним из важнейших критериев воздействия на общество.

Мониторинг армянских СМИ показывает, что для правильного восприятия и владения ситуацией в деятельности общества необходимо также постоянно проводить мониторинги СМИ по информационно-психологическому, манипуляционному влиянию, которые дают возможность выявить информационные течения, вредные для душевной стабильности общества.

ՉԻՆԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ

Հայկ Նազարյան

Արդի միջազգային քաղաքականության տրամաբանության մեջ այսօր կարևոր նշանակություն ունի էներգետիկ պաշարների տիրապետումը: Հումքային պաշարների նվազման, նավթի և գազի պահանջարկի մեծացման պայմաններում պետությունների համար մեծապես կարևորվում է էներգետիկ պաշարների ձեռքբերումը, էներգետիկ անվտանգության ապահովումը, և որպես ինքնիշխանության պահպանման կենսական գրավական՝ ստիպում է վերջիններիս խառնվել իրենց համար անցանկալի քաղաքական գործընթացներին:

Չինաստանի պատմությունը, մշակույթը և սովորույթները, գրված տարածքի չափը, տնտեսության և ինքնորոշման դինամիկան մղում է երկրին զբաղեցնել գերիշխող դիրք արևելյան Ասիայում: Այս ամենը, իհարկե, արդյունք է երկրի տնտեսության արագ զարգացման [1, c. 366]: Չինաստանի պես արագ տեմպերով աճող տնտեսությամբ պետության համար էներգիայի նոր աղբյուրների ձեռքբերման պահանջարկը ստիպեց համառ ջանքեր գործադրել տարածաշրջանի երկրների շահագործման բնագավառում առաջատար դիրքերի հասնելու համար: Չինաստանն ավելի մեծ հետաքրքրություն սկսեց դրսևորել Ասիայի ռեսուրսներով հարուստ երկրների նկատմամբ [2, c. 198]: Մերձավոր և Միջին Արևելքը, Կասպից ծովը, Կենտրոնական Ասիան, Հյուսիսային Աֆրիկան այն շրջաններն են, որոնք գտնվում են Պեկինի էներգետիկ շահերի ոլորտում, որտեղ նկատվում է չինական ներդրումների զգալի աճ:

1980-90-ական թվականներից երկրի տնտեսության դինամիկ աճը, համաշխարհային նշանակության տնտեսական նվաճումները, բարեփոխումների քաղաքականության հետևողական իրագործումը մեծապես նպաստեցին Չինաստանի տարածաշրջանային և միջազգային հեղինակության բարձրացմանը, ինչը վերջինիս համար ազդեցության լծակներ և իրավունք ապահովեց գլոբալ, մասնավորապես՝ մերձավոր և միջինարևելյան էներգետիկ պաշարների նկատմամբ [3]:

Տնտեսական արագ զարգացման պայմաններում, 1993-2003թթ. մեկ տասնամյակի ընթացքում, Չինաստանի նավթի սպառումն ավելացավ 90%-ով

[4]: Չկարողանալով ներքին սպառման պաշարներ ապահովել՝ կարևորվեց ներմուծման անհրաժեշտությունը: 1996թ. տվյալներով՝ նավթի սպառումը 20 մլն տոննայից հասավ 70 մլն տոննայի՝ 2002թ., իսկ 2005թ.՝ 100 մլն տոննայի: Տեսաբաններն այն կարծիքին են, որ 2010թ. այն կհասնի 150 մլն տոննայի [5]: Գազի սպառումը ևս հսկայական քանակության կհասնի մոտ ապագայում և 2010թ. կհասնի 120, իսկ 2020թ.՝ 200 մլրդ մ^3-ի: 1980-90-ական թվականներից ՉԺՀ-ում սկիզբ առած նավթարդյունահանման խնդիրները, չինացի փորձագետների կարծիքով, գագաթնակետին կհասնեն 2010 կամ 2015թթ.: Առաջիկա երկու տասնամյակներին նավթարտադրությունը կբավարարի երկրի վառելիքի պահանջարկի 50%-ը, իսկ մնացածը կախված կլինի ներկրումից [6]:

Չինաստանի տնտեսական զարգացման տեմպերին (չինական տնտեսության աճի ամենամյա տեմպերը տատանվում են 8.5-10%-ի սահմաններում) այլևս չհամապատասխանող վառելիքային անբավարարության պայմաններում Պեկինի համար կենսական նշանակություն ունեցավ Էներգետիկ պաշարներով հարուստ մերձավոր և միջինարևելյան տարածաշրջանի նավթարդյունահանող երկրներում ազդեցության խոշոր լծակների ապահովումը: Մեծ խթան հանդիսացավ 1999թ. ՉԺՀ նախագահ Զյան Զեմինի կողմից Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի հետ Չինաստանի հարաբերությունների զարգացման ռազմավարության հռչակումը, ինչն էլ տարածաշրջանից նավթի առաքումն ապահովելու ուղղությամբ վերջինիս ջանքերի առավել ակտիվացման պատճառ հանդիսացավ [7]:

Մերձավոր և Միջին Արևելքում Պեկինի էներգետիկ քաղաքականության ակտիվացման պատճառն այն էր, որ այնտեղ էին գտնվում համաշխարհային 19 խոշոր նավթահորերից 14-ը, որոնք կազմում են համաշխարհային էներգետիկ ընդհանուր պաշարների 68%-ը: Իրանի, Քուվեյթի, Սաուդյան Արաբիայի և Կենտրոնական Ասիայի շահագործման ենթակա պաշարները կազմում են 70 մլրդ բարել: Համաշխարհային նավթի արտահանման 35%-ը պատկանում է Մերձավոր Արևելքին, որն ապագայում կարող է ավելանալ: Իրանը, Օմանը, Սաուդյան Արաբիան, Սուդանը, Եմենը, 2005թ. տվյալներով, մատակարարում են Չինաստան ներկրվող նավթի 60%-ը [7]:

Պեկինի էներգետիկ հետաքրքրությունների մեջ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Պարսից ծոցը՝ որպես էներգառեսուրսներով հարուստ տարածաշրջան: Ծոցն առանցքային նշանակություն ունի էներգետիկ մատակարարման և էներգետիկ անվտանգության ապահովման հարցում: Որպես ասիական խոշոր էներգետիկ ներմուծող երկիր՝ Չինաստանը մեծ կախվածություն ունի ռեսուրսների ներկրման, տարածաշրջանի անվտանգության հարցում, ուստի Պարսից ծոցի տարածաշրջանի երկրներից Պեկինն առաջնահերթ է համարում Իրանի Իսլամական Հանրապետության՝ որպես տարածաշրջանում առանց-

քային դեր ունեցող, նավթի և գազի պաշարներով հարուստ երկրի հետ հարաբերությունների զարգացումը [8]:

Միաժամանակ, բնական պաշարներով հարուստ, սակայն միջազգային խնդիրներ ունեցող մերձավոր և միջինարևելյան խոշոր տերություն հանդիսացող Իրանը փոխադարձաբար գիտակցում է Պեկինի հետ դաշնակցության և համագործակցության անհրաժեշտությունը, ինչն առավել ակնհայտ է դառնում Վաշինգտոն-Պեկին հակասությունների համատեքստում: Իսկ Արևմուտքի՝ Թեհրանին ուղղված մեղադրանքները, թե վերջինս փորձում է ստեղծել միջուկային զենք, ինչպես նաև նրա նկատմամբ տնտեսական պատժամիջոցների կիրառումը, իրենց հերթին ամրապնդում են Պեկին-Թեհրան փոխհամաձայնեցված քաղաքականությունը: «Քանի դեռ շարունակվում է մուսուլմանական ժողովրդագրական և ասիական տնտեսական աճը, գլոբալ քաղաքականության մեջ Արևմուտքի հետ առճակատումը ձեռք կբերի առավել մեծ նշանակություն: Շատ հավանական է, որ մուսուլմանական երկրների իշխանությունները հետագայում ավելի ու ավելի քիչ բարեկամանան Արևմուտքի հետ: Նման պայմաններում կոնֆուցիական և իսլամական աշխարհների միջև հարաբերությունները կզարգանան և կամրապնդվեն»,- նշում է Սամուել Հանթինգթոնը [1, c. 383]:

Էներգառեսուրսներով հարուստ տարածաշրջանը, որպես Չինաստանի ազգային շահերի դրսևորման կարևոր լծակ, Պեկինի համար, բնականաբար, առաջնահերթ է դարձնում տարածաշրջանի էներգետիկ անվտանգության թեման [8]:

Մերձավոր Արևելքի հետ համագործակցության զարգացումը Չինաստանին ներքաշում է քաղաքական հակասությունների և տարածաշրջանային խնդիրների հորձանուտը՝ պայմանավորված մերձավորարևելյան շուկայում ԱՄՆ-ի, Ճապոնիայի, Եվրոպայի հետ Պեկինի անխուսափելի մրցակցությամբ: Հետևաբար, Չինաստանը հարկադրված է որոնել իր մրցակիցների համար անցանկալի շուկաներ, այսինքն՝ միջազգային խնդիրներ ունեցող այնպիսի երկրներ, ինչպիսիք են Իրանը, Իրաքը, Սուդանը: 1990-ական թթ. Չինաստանի Ազգային նավթային կորպորացիան (*CNPC*-ՉԱՆԿ) նավթային կոնցեսիաներ ձեռք բերեց Իրանում, Իրաքում, Ադրբեջանում, Ղազախստանում, Սուդանում, Ինդոնեզիայում, Կանադայում: 1996-97թթ. սահմանային անվտանգության վերաբերյալ պայմանագրեր ստորագրվեցին Ռուսաստանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի հետ՝ ամրագրելով, որ Չինաստանն ապահով է Սիբիրի և Կենտրոնական Ասիայի էներգետիկ անվտանգության հարցում ևս:

Մերձավոր և Միջին Արևելքի աշխարհաքաղաքական իրադրությունը հանգեցնում է ՉԺՀ-ԻԻՀ ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական համագործակցության ընդլայնմանը: Ինչպես գրում է *«EurasiaNet»*-ը՝ «Չինաստանի և

Իրանի երկկողմանի հարաբերությունների ընդլայնումը կողմերին կբերի տնտեսական և աշխարհաքաղաքական օգուտներ» [9]: Կողմերի միջև հարաբերությունների զարգացման կարևոր գործոն հանդիսացավ ԱՄՆ «միակողմանիության» քաղաքականության ընդհանուր անհանգստությունը[1]: Ինչպես չինական, այնպես էլ իրանական ներկայացուցիչներն անհանգստություն հայտնեցին Իրաքում, Աֆղանստանում, Ղրղզստանում և Ուզբեկստանում տեղակայված ամերիկյան ուժերի կողմից իրենց երկրների հնարավոր «շրջափակման» առիթով: Երկկողմանի հարաբերությունները մեծ թափ ստացան հատկապես 2003թ. հետո: Իրաքյան պատերազմը ստիպեց Թեհրանին և Պեկինին սկսել բանակցություններ: Ռազմական գործողությունների ժամանակ իրանական և չինական կողմերը պարբերական կապ պահպանեցին: Այդ կապերի զարգացման վառ վկայությունն են ԻԻՀ նախագահ Մուհամադ Խաթամիի Պեկին և ՉԺՀ նախկին նախագահ Զյան Զեմինի այցերը Թեհրան: 2004-ը դարձավ այն տարին, երբ Չինաստանն անցավ բավական լուրջ ներդրումային քաղաքականության Կենտրոնական Ասիայում և Կասպյան ավազանում: Այդ թվականին էր, որ նախանձելի թվացին Վաշինգտոնի հաջողություններն Իրաքում: Հենց այս տպավորությունը Լիբիային ստիպեց 2003թ. հրաժարվել միջուկային ծրագրից, իսկ Իրանին՝ 2004թ. դադարեցնել ուրանի հարստացման աշխատանքները: Չինաստանը հենց 2004թ. ակտիվացրեց մերձավորարևելյան նավթի և գազի որոնման աշխատանքները: Փաստորեն, 2004թ. Չինաստանի ակտիվացման պատճառները տնտեսական և քաղաքական նշանակություն ունեին:

Ինչպես հայտնում է չինական «Սինխուա» լրատվամիջոցը, Իրանի համար Չինաստանի հետ համագործակցությունը շահավետ է, քանի որ Թեհրանը կարող է դառնալ դիվանագիտական լծակ Մերձավոր և Միջին Արևելքի աշխարհաքաղաքական ասպարեզում, էներգիայի ներկրման հարուստ աղբյուր զարգացող Չինաստանի համար և չինական արտադրանքի արտահանման նոր շուկաներ ձեռք բերել: 2002թ. ԻԻՀ-ի և ՉԺՀ-ի միջև առևտրի ծավալը կազմեց $4.5 մլրդ, իսկ 2003թ.՝ մինչև $5 մլրդ: Մոտ 40 չինական կազմակերպություններ մասնակցեցին էներգետիկ, արդյունաբերական և շինարարական նախագծերում, այդ թվում նաև $400 մլն արժողության «Նեքքա-Թեհրան» խողովակաշարի կառուցմանը, որի նպատակն է Ղազախստանի և Թուրքմենստանի հետ նավթային առևտրի ընդլայնումը: Այդ տարիներին ընդլայնվեց համագործակցությունը նաև տեխնիկական, գյուղատնտեսական ապրանքների առևտրի բնագավառում, հայտնում է իրանական «Իռնա» լրատվական գործակալությունը [9]:

[1] Դեռևս 1990-ական թթ. ԱՄՆ-ի համար լուրջ անհանգստության պատճառ հանդիսացավ, թերևս, Թեհրանի և Պեկինի միջև համագործակցությունը ատոմային էներգիայի բնագավառում: Սակայն ԱՄՆ ուժեղ ճնշումների ներքո Պեկինը համաձայնեց 1997թ. տապալել ատոմային համագործակցության ծրագիրը Թեհրանի հետ:

Իրան-Չինաստան կապերի զարգացումը կնպաստի նոր առևտրային ուղիների ձևավորմանը կողմերի միջև (այսպես կոչված «հյուսիս-հարավ միջանցք»-ը, որը կապում է Հնդկաստանը, Իրանը և Ռուսաստանը): ՉԺՀ նախկին նախագահ Զյան Զեմինի 2002թ. ապրիլյան այցի ժամանակ իրանական վերլուծաբանները նշեցին, որ «հյուսիս-հարավ» միջանցքը մեծ ձեռքբերում է երկկողմանի հարաբերություններում: Ոմանց կարծիքով՝ այդ «միջանցքը» կարևոր է ոչ միայն տնտեսական զարգացման, այլև աշխարհաքաղաքական առումով, այն ուղղված է ամերիկյան «միակողմանիության» քաղաքականության դեմ: «Իրան–Չինաստան հարաբերությունների կարևորագույն հարցերից մեկը բազմակողմանի համագործակցությունն է Թեհրանի, Պեկինի և Մոսկվայի միջև, որը նպատակ ունի հաստատել խաղաղություն, կայունություն և բարգավաճում»,- նշում է «Իրան Նյուզը» [9]:

2004թ. մարտին չինական «Զհուհաի Զհենրոնգ Քորփ» նավթային ընկերությունը քսանհինգամյա համաձայնագիր կնքեց Իրանից 110 մլն տոննա բնական գազ արտահանելու մասին, որից հետո, 2004թ. հոկտեմբերին, ևս մեկ խոշոր՝ $100 մլրդ արժողության գործարք կնքվեց «Սինօփեք» նավթային ընկերության հետ [10]: Չինացի գործարարները մեծ ներդրումներ արեցին Իրանում էներգառեսուրսների հայտնաբերման համար: Չինաստանը դարձավ իրանական նավթի արտահանման գլխավոր շուկան: Բացի բնական գազի և նավթի արտահանման գործարքներից, չինական ընկերությունների խոշոր ներդրումներն իրանական էներգետիկ ոլորտում խափանում են Իրանի դեմ ԱՄՆ պատժամիջոցների կիրառման հնարավորությունները:

Ընդհանուր առմամբ ակնհայտ է, որ.

- Չինաստանի ազգային շահերը մղում են իշխանություններին լուրջ քայլեր ձեռնարկել ասիական էներգառեսուրսներով հարուստ երկրների հետ համագործակցության ուղղությամբ,
- ներմուծելով անհրաժեշտ էներգետիկ պաշարներ՝ Չինաստանը կկարողանա հետագայում ևս ապահովել երկրի տնտեսական վերելքը,
- ազգային շահերի դրսևորման և հատկապես էներգառեսուրսների ներկրման հարցում Պեկինը շահագրգռված է համագործակցելու մրցակիցների համար անցանկալի, նրանց հետ հակասություններ ունեցող երկրների հետ: Այս համատեքստում Իրանի հետ Չինաստանի համագործակցության շահավետությունն ակնհայտ է,
- Պեկինը ցանկանում է կայուն տեսնել մերձավոր և միջինարևելյան տարածաշրջանը, քանի որ դա համապատասխանում է Պեկինի որդեգրած քաղաքականությանը,
- Պեկինի նավթագազային քաղաքականությունը մերձավոր և միջինարևելյան տարածաշրջանում կանխում է մրցակցի՝ ԱՄՆ տարածաշրջանային դիրքերի ամրապնդումը,

- Պեկինը կողմ չէ Թեհրանի դեմ ռազմական գործողությունների կիրառմանը, ԱՄՆ դիրքերի ամրապնդմանը տարածաշրջանում, Թեհրանի դեմ ավելի խիստ պատժամիջոցների կիրառմանը: Վաշինգտոնի կողմից պատերազմական գործողությունները կապակայունացնեն տարածաշրջանը, որն էլ կխաթարի Չինաստանի էներգետիկ անվտանգությունը (ՉԺՀ-ն նավթի 12%-ը ներմուծում է Իրանից) [11],
- Պեկինի աջակցությունը Թեհրանին, նրա հետ տնտեսական և ռազմական համագործակցությունը խափանում է ԱՄՆ՝ Իրանի դեմ ռազմական գործողությունների իրականացման հնարավորությունը: Հավանական պատերազմի կանխումը կնպաստի նաև տարածաշրջանում կայունության հաստատմանը:

Պեկին-Մոսկվա-Թեհրան համագործակցությունը.- Վերածվելով նավթ և գազ ներմուծող պետության՝ ՉԺՀ զարգացումը մեծապես կախման մեջ ընկավ արտաքին շուկաներից, ներկրվող կապիտալից, ինչն էապես նվազեցրեց լայն ռազմավարական և աշխարհաքաղաքական ընտրության հնարավորությունները: «Ռուսաստանի հետ Չինաստանի տնտեսական և քաղաքական սերտ դաշինքը ոչ հեռանկարային համարվեց, քանի որ Ռուսաստանի համար այն կարող էր նշանակել պարզապես «ենթարկվել Չինաստանին» (չինացիների համար «Ռուսաստան» բառը նշանակում էր «սոված հող»): Չինաստանի համար առավել ամուր աշխարհաքաղաքական և տարածաշրջանային նշանակություն ունի Իրանի և Պակիստանի հետ համագործակցությունը, սակայն դա էլ չի կարող ծառայել որպես մեկնարկային կետ համաշխարհային մեծ ձեռքբերումների հասնելու համար: Որպես համագործակցության լուրջ հիմք կարող է ծառայել միայն հակաամերիկյան կոալիցիան, եթե Չինաստանը զգա, որ իր ազգային և տարածաշրջանային շահերը շրջափակվում են Միացյալ Նահանգների կողմից» [2, c. 222],- նշում է Զբիգնև Բժեզինսկին: Սակայն Բժեզինսկու այն տեսակետը, թե ռուս-չինական սերտ դաշինքը չի կարող հեռանկարային համարվել, շատ վիճելի է վերջին տարիներին նկատվող Պեկին-Մոսկվա-Թեհրան համագործակցության համատեքստում:

Այսօր խիստ արդիական է դարձել Ռուսաստան, Չինաստան և Իրան քաղաքական հարաբերությունների ուսումնասիրությունը, քանի որ դրանք էականորեն ազդում են համաշխարհային քաղաքական գործընթացների վրա: Վերոհիշյալ համագործակցությունը դիմակայում է Ամերիկայի Միացյալ Նահանգների՝ միաբևեռ աշխարհ ստեղծելու նկրտումներին և մեկ անգամ ևս հաստատում բազմաբևեռ աշխարհի ստեղծման անհրաժեշտությունը: Նկատելի է Իրանի հետ Ռուսաստանի և Չինաստանի համագործակցությունը տարբեր բնագավառներում՝ քաղաքական, տնտեսական, ռազմական, մշակութային:

Հատկապես կարևոր է Ռուսաստանի դերը Իրանի խաղաղ ատոմային էներգիա ստանալու գործում, ռազմական ոլորտում, որով նա փորձում է մեղմել ԱՄՆ-Իրան զարգացող հակամարտությունը: Չինաստանը նույնպես շահագրգռված է Իրանի հետ հարաբերություններով, հատկապես էներգետիկ և ռազմական ոլորտում, միաժամանակ կողմ է նաև բազմաբևեռ աշխարհի ստեղծելուն:

ԱՄՆ արտաքին քաղաքականությունը հանգեցրեց նշանակալի փոփոխությունների աշխարհաքաղաքական դաշինքներում, և վերջին տարիներին այն լուրջ հակազդեցություն է ստանում եվրասիական այս երկրների՝ Ռուսաստանի, Չինաստանի և Իրանի կողմից: Այդ փոփոխություններից ամենանշանակալիցը, թերևս, Ռուսաստան, Չինաստան, Իրան «եռանկյունու» հնարավոր ձևավորումն է: Նկատելի է, որ այդ հակազդեցությունը ժամանակի ընթացքում ավելի համակարգված բնույթ է ստանում, որն արտահայտվում է կողմերի միջև փոխհամաձայնեցված արտաքին քաղաքականությամբ, փոխշահավետ համագործակցությամբ, երկկողմանի խորհրդատվություններով, ինչպես նաև Շանհայի համագործակցության կազմակերպության ձևաչափով: Ռուս-չինական համագործակցությունը քաղաքական իրական հարթությունում մասնավորապես արտահայտվում է Իրանի միջուկային ծրագրի նկատմամբ կողմերի ունեցած դիրքորոշումով: Այդ երկրների համաձայնեցված դիվանագիտական քայլերի շնորհիվ է, որ առ այսօր Իրանի դեմ Միավորված Ազգերի Կազմակերպության մակարդակով չեն ընդունվել ծանր պատժամիջոցներ: Ատոմային էներգիայի միջազգային գործակալությունը Իրանի հետ բանակցություններում դեռևս չի հասել այս պետության միջուկային ծրագրերի նկատմամբ ամբողջական վերահսկման և թափանցիկության իրականացմանը: Ստեղծվել է բարդ իրավիճակ, երբ ՄԱԿ-ում Միացյալ Նահանգների և նրա կողմնակիցների կոշտ դիրքորոշմանը և Իրանի նկատմամբ ավելի խիստ պատժամիջոցներ կիրառելու նրանց առաջարկներին հակադրվում են Ռուսաստանը և Չինաստանը [12]:

Իսլամական հանրապետության իշխանությունների համար անընդունելի է Արևմուտքի որդեգրած քաղաքականությունը: ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադը բազմիցս նշել է, որ Իրանի միջուկային ծրագիրը խաղաղ նպատակներ ունի և ուղղված է երկրի էներգետիկ պահանջների բավարարմանը, իսկ այն հայտարարությունները, որոնք հնչում են Իրանի հասցեին, անտեղի են: «...Այդ քարոզչությունը մեծ կեղծիք է: Մենք գործում ենք օրենքի սահմաններում, իսկ Բուշի վարչակարգը վարում է երկակի ստանդարտների և խտրական քաղաքականություն: Կարծում ենք՝ ԱՄՆ-ը կընդդիմանար նման պետությանը, որը կվարեր նմանատիպ քաղաքականություն: ...Հետաքրքիր է այն, որ երկրները, որոնք ունեն միջուկային զենք, մեզ փորձում են ստիպել, որպեսզի հրաժարվենք խաղաղ միջուկային ծրագրից» [13]:

Պեկինը, ինչպես նաև Մոսկվան, սկսած 1980-ական թվականներից, Իրանին ապահովում են ժամանակակից հրթիռներով, տարբեր տեխնոլոգիաներով: Չինաստանն Իրանին վաճառեց «Սիլքվորմ» տեսակի հրթիռներ, թևավոր «ցամաք-ցամաք» հրթիռներ, օգնեց պատրաստել բալիստիկ հեռահար հրթիռներ: Այդ աջակցությունը ներառում էր 2000 կմ շառավղով «Շահաբ-3» և «Շահաբ-4» հրթիռներ: «Չինաստանը, Ռուսաստանը և Իրանը «չարիքի առանցք»-ն են, հեռահար հրթիռներով զինված եռյակ»,- գրում է *«Washington Times»-ը* [14]:

Ռուսաստանը և Չինաստանը Վաշինգտոնի «դեմոկրատական բարեփոխումների ծրագիրն» ընդունում են որպես սեփական երկրի դիրքերն ամրապնդելու նպատակով վատ քողարկված մեթոդ: Իսկ Պեկինի, Մոսկվայի և Թեհրանի դաշնակցությունը կարող է դիտվել որպես հակահարված Վաշինգտոնի աշխարհակալական հավակնություններին: Այս տեսանկյունից Իրանը կարևոր օղակ է տարածաշրջանում ամերիկյան վարչակարգի արտաքին քաղաքական նպատակները խափանելու համար: Այդ իսկ պատճառով Պեկինը և Մոսկվան ուժեղացնում են տնտեսական, ռազմական և դիվանագիտական հարաբերությունները Թեհրանի հետ: Մոսկվայի և Պեկինի աջակցությունը Իրանի խաղաղ ատոմային ծրագրին մատնանշում է Ռուսաստան-Չինաստան-Իրան առանցքում առկա հզոր ուժը: Այն, իհարկե, ուղղված է ԱՄՆ «միաբևեռ» քաղաքականության հակազդմանը, այդ կողմերի համագործակցությունն ամերիկյան ազդեցության թուլացում է նշանակում Մերձավոր և Միջին Արևելքում:

2007թ. նոյեմբերի 19-ին Չինաստանն ընդհատեց «վեցնյակի»՝ Իրանի միջուկային ծրագրի քննարկումը: Նախատեսված «վեցնյակի»՝ ԱՄՆ, Ռուսաստան, Չիանստան, Գերմանիա, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, հանդիպումը Իրանի դեմ պատժամիջոցների կիրառման վերաբերյալ հետաձգվեց, քանի որ Չինաստանը հրաժարվեց մասնակցել: Ինչպես նշում են եվրոպական դիվանագետները, Չինաստանի այս քայլը բացատրվում է վերջինիս բացասական վերաբերմունքով Իրանի դեմ պատժամիջոցներ կիրառելու կապակցությամբ [15]:

Իր հերթին, Վաշինգտոնին մեծապես մտահոգում են Չինաստանի նվաճումները, քանի որ վերջինս այսօր տիրապետում է այնպիսի բալիստիկ հրթիռների, որոնք կարող են հասնել մինչև ԱՄՆ տարածք: Չինաստանը շարունակում է ստեղծել արբանյակային հակազդեցության միջոցներ, որոնք կարող են խանգարել արդի կոմունիկացիոն միջոցներին: Այս հանգամանքը ևս ԱՄՆ-ին մտահոգվելու առիթ է տալիս [16]:

2008թ. սկզբներից Չինաստանը կրկին հայտնվեց հումքային ապրանքներ ներկրող երկրների ուշադրության կենտրոնում՝ կապված նավթամթերքների պահանջարկի արագ աճի հետ: Այն դեպքում, երբ Չինաստանում նավթի

պահանջարկը շարունակում էր բարձրանալ, ԱՄՆ-ում այն ընկնում էր: Ըստ երկրի մաքսային վիճակագրության տվյալների՝ հում նավթի ներմուծման պահանջարկը 2008թ. հունիսին ավելացել է 3.2%-ով՝ մեկ տարի առաջ նույն ժամանակահատվածի համեմատությամբ: Միջազգային էներգետիկ գործակալության 2008թ. տվյալների համաձայն, ՉԺՀ-ում նավթի օգտագործումը 2008թ. աճել է 5.6%-ով և կշարունակի աճել 2009թ. [17]: Այս համատեքստում Պեկին-Թեհրան միջպետական հարաբերությունները զարգանում են փոխշահավետ համագործակցության հիմքերի վրա, ինչը և թույլ է տալիս ենթադրել, որ կողմերը կշարունակեն ամրապնդել հարաբերությունների բարելավումը՝ տնտեսական փոխհամագործակցության և աշխարհաքաղաքականության հողի վրա: «Երկու երկրները փոխադարձաբար լրացնում են միմյանց: Նրանք ունեն արդյունաբերություն, իսկ մենք ունենք էներգետիկ պաշարներ» [18],- նշում է ԱԷՄԳ Իրանի նախկին ներկայացուցիչ Ալի Աքբար Սահելին:

Ինչ վերաբերում է Պեկինի քաղաքականությանը Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ, ապա Չինաստանը որդեգրել է հարցի լուծման դիվանագիտական ճանապարհը և կողմ է հարցի խաղաղ կարգավորմանը: «Իրանի միջուկային հարցը մտել է զգայուն փուլ, և շահագրգիռ բոլոր կողմերը պետք է առավել քան երբևէ ճկունություն ցուցաբերեն: Չիանաստանի մշտական դիրքորոշումն այն է, որ Իրանի միջուկային խնդիրները պետք է կարգավորվեն դիվանագիտական ճանապարհով» [19],- հայտարարել է ՄԱԿ զինաթափման հարցերով Չինաստանի ներկայացուցիչ Վանգ Չունը:

Պաշտոնական Պեկինի նման դիրքորոշման և հայտարարությունների տրամաբանությունը թույլ է տալիս ենթադրել, որ Պեկինի համար շահավետ չէ տարածաշրջանում Թեհրանի դիրքերի առավել ամրապնդումը: Թեհրանի հզորությունը կնշանակի վերջինիս կապերի զարգացում տարածաշրջանի երկրների հետ: Կայուն և հզոր Իրանի հետ համագործակցությունը ցանկալի կդառնա նաև այնպիսի պետությունների համար, որոնք մինչ այդ զգուշանում էին սերտ հարաբերություններ հաստատել Իրանի հետ: Այս դեպքում Չինաստանը կկորցնի իր նախկին դիրքերը: Հատկապես Թեհրանի կողմից միջուկային ծրագրերի կենսագործումը (հետագայում, հավանական է, նաև միջուկային զենքի ձեռքբերումը) մեծապես կնպաստի դիրքերի ամրապնդմանը[1]:

[1] 2007թ. «Կոմերսանտ» թերթում լույս տեսավ «ԱՄՆ-ին և Չինաստանին մտերմացնում է Իրանը» վերնագրով հոդվածը: ԱՄՆ պաշտպանության նախարար Ռոբերտ Գեթսը Պեկին այցելության ժամանակ, չինական բարձրաստիճան պաշտոնյաների հետ հանդիպումից հետո, հայտարարեց. «Մենք համաձայնության եկանք, որ անհրաժեշտ է ազդեցություն գործել Իրանի վրա և ստիպել նրան փոխել դիրքորոշումը միջուկային հարցի շուրջ»: Պեկին կատարած այցից հետո ԱՄՆ բարձրաստիճան պաշտոնյաները հանդես եկան հայտարարությամբ, որ Չինաստանը պատրաստ է հանդես գալ ԱՄՆ-ի հետ միասին՝ թույլ չտալու համար, որպեսզի Իրանն ատոմային զենք ստեղծի:

Ընդհանուր առմամբ կարելի է նկատել, որ.

- Պեկինի, ինչպես նաև Մոսկվայի փոխհամաձայնեցված քաղաքականությունը թույլ չի տալիս ՄԱԿ ԱԽ կողմից Իրանի դեմ ավելի ծանր պատժամիջոցների կիրառումը: Դա մեծապես կվատթարացնի Իրանի ներկայիս վիճակը, ինչը կարող է հանգեցնել տարածաշրջանում ազդեցությունների ոլորտների փոփոխման,
- երեք կողմերի միջև համագործակցությունը նշանակում է ամերիկյան ազդեցության թուլացում Մերձավոր և Միջին Արևելքում,
- Պեկինի, Մոսկվայի և Թեհրանի դաշնակցությունը դիտվում է որպես հակահարված Վաշինգտոնի աշխարհակալական հավակնություններին, նրա «միաբևեռ» քաղաքականությանը,
- Պեկինի և Մոսկվայի հետ համագործակցությամբ Թեհրանի միջուկային խնդիրների խաղաղ լուծումը կնպաստի Իրանում, ինչպես նաև տարածաշրջանում լարված մթնոլորտի թուլացմանը և կայունության հաստատմանը:

Մայիս, 2009թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Хантингтон С.,* "Столкновение цивилизаций", глава 9, "Глобальная политика цивилизаций", пер. Т. Велимеева, Ю. Новикова, Москва, 2003.
2. *Бжезинский З.,* "Великая шахматная доска", пер. О.Ю. Уральской, 1998.
3. *Հարությունյան Ա.,* «Չինաստանը՝ որպես մերձավորարևելյան էներգետիկ շուկայի դերակատար», www.noravank.am/file/article/11
4. *Laverett and Badder,* "Managing China-US Energy Competition in the Middle East" The Washington Quarterly, Winter 2005-6.
5. *Calder K.,* "East Asia and the Middle East: AFateful Energy Embrace "The China and Eurasia Forum Quarterly, Volume 3. No. 3.
6. U.S. Department of Energy, Energy information Administration, July 2004.
7. Energy Information Administration, Official Energy Statistics from the US Government, China Country Analisis Brief August2005 www. eia.doe.gov/emeu/cabs/china.html
8. *Mohammad Vaezy,* "Vabastegy- e motakhabel-e iran va chin" (Իրանի և Չինաստանի փոխհարաբերությունների կապը), www.csr.ir, 20 farvardin, 1385 (11.04.2006).
9. *Пеймани Хуман,* комментарий EurasiaNet http://www.eurasianet.org 06.XII.2007.
10. *Калмычек П.,* Теплое отношение Пекина и Москвы к Тегерану, www.inosmi.ru -10 июня 2005.
11. *Габуев А.,* Америку и Китай сблизил Иран, Газета «Коммерсантъ», № 204 (3780) от 07.11.2007 www.kommersant.ru/doc.aspx?DocsID=822670
12. *Հովհաննիսյան Դ.,* ԱՄՆ-Իրան հարաբերությունների կարգավորման հնարավորությունը, www.noravank.am, 12 նոյեմբեր 2007թ.:

13. Ra'is-e jomhuri dar goftogu ba ruzname-ye Los Angeles Times (նախագահի հարցազրույցը «Լոս Անջելես Թայմզ» թերթին), www.namanews.com 29/10/2008
14. *Стэкелбек Ф.,* "Триада с баллистическими ракетами" (Washington Times) http://centrasia.ru/news, 14.06.2007.
15. "Китай сорвал обсуждение "шестерки" по Ирану" www.regnum.ru/news/17.11.2007.
16. *Блэр Д.,* "Россия и Китай предостерегают от войны в Иране" www.inopressa.ru/telegraph/2007/09/19/09:59:24/china
17. *Кочетков А.,* "Китай и Иран нарушают спокойствие: обзор рынка нефти, ИА "РосФинКом" "http://rosfincom.ru/analytics/23608.html,10.07.2008.
18. China-Iran Relations" http://www.absoluteastronomy.com/topics/Iran-China_relations
19. "IRIB world service" Entekhad-e Iran az 5 qeshvar-e dara-ye salah-e atomi, www.iribnews.ir 08.10.2008.

ПРОЯВЛЕНИЯ НАЦИОНАЛЬНЫХ ИНТЕРЕСОВ КИТАЯ В ИРАНЕ

Айк Назарян

Резюме

В последние годы резкий рост энергетических потребностей Китая стал важным фактором международного экономического и политического развития. Потребность в обеспечении энергоресурсами, сохранении энергетической безопасности, одновременно рост спроса нефти и газа на мировом рынке заставляют Китай вмешиваться в политическое и экономическое развитие Ближнего и Среднего Востока, что втягивает его в омут региональных политических противоречий, обусловленных неизбежным соперничеством с США, Японией и Европой. Особенно отчетливым становится столкновение интересов США и Китая. Сегодня обеспечение безопасности импорта энергоресурсов приобрело для Китая жизненную важность. Официальный Пекин ясно осознает важность сотрудничества и союза с такой богатой ресурсами страной, как Иран, для сохранения собственного благополучия и безопасности. Одновременно, богатый природными ресурсами, но имеющий проблемы на международной арене Иран также осознает необходимость сотрудничества и союза с Пекином, в особенности в контексте противоречий между Вашингтоном и Пекином. Следовательно, Китай вынужден сотрудничать со странами, имеющими проблемы на международной арене и нежелательными для стран-конкурентов, каковым и является Иран.

Հուշագիր հեղինակին

«21-րդ ԴԱՐ» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ, որոնցում առաջնային են ՀՀ հիմնախնդիրների վերաբերյալ թեմաները: «21-րդ ԴԱՐ» հանդեսի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «21-րդ ԴԱՐ» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen»* տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 15 էջը:
2. Հոդվածի հետ պարտադիր ներկայացնել հեղինակի ինքնակենսագրությունը *(CV)*:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև բացվածքը՝ 1.5: Հոդվածը պետք է ունենա համառոտագիր (հոդվածի լեզվով) և ամփոփագիր (բնագրից տարբեր լեզուներով):
4. Հոդվածում օգտագործված աղբյուրների և գրականության հղումները բերվում են քառակուսի փակագծերում՝ միացյալ և հաջորդական համարակալումով, այդ համարի կողքին նշելով հղված էջ(եր)ը, եթե հղման աղբյուրը մեկից ավելի անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Էջը պետք է նշել աղբյուրի բնագրի լեզվով՝ էջ (հայերեն), с. (ռուսերեն), p. (անգլերեն, ֆրանսերեն կամ այլ լեզվով աղբյուրներ). օրինակ՝ [1], [2, с. 11-12]: Հոդվածի վերջում, «Աղբյուրներ և գրականություն» բաժնում, նույն հաջորդականությամբ բերվում է գրականության ցանկը, 10 տառաչափով, բնագրի լեզվով, օրինակ՝

   1. *Մարգարյան Ս.*, Երկրի մրցակցային ռազմավարությունը տնտեսական անվտանգության համատեքստում, «21-րդ դար», # 1, էջ 5, 2003:
   2. *Шарипова Р.,* Панисламизм сегодня: идеология и практика Лиги Исламского Мира, с. 15, М., 1986.
   3. *Yasha Lange*, Media in the CIS, Center for Civil Society International, Amsterdam, 1997, from http://www.internews.ras.ru/books/media, Sept. 28, 1998.

5. Ինտերնետային աղբյուրների հղումները ցանկալի է նշել տողատակում:
6. Հայկական, լատինական և կյուրեղյան տառերից տարբեր աղբյուրների դեպքում հղումները կատարել լատինական այբուբենով՝ փակագծերում տալով թարգմանությունը և լեզուն. օրինակ՝ *Al-Arman fi Lubnan* (Հայերը Լիբանանում, արաբ.):

Խմբագրություն

«21-ՐԴ ԴԱՐ» տեղեկատվական-վերլուծական հանդես
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ 21dar@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 18.07.2009թ.
Թիվ 4 (26), 2009թ.
Տպաքանակը՝ 300։

Թուղթը՝ կավճապատ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 8 մամուլ։ Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում